



**Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1  
արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագիր**

**Սոցիալական համալիր ստուգման  
հաշվետվություն**

*ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է՝*

*ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ*

*ՍՈՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ*

**Մարտ, 2018թ.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
1.1. Ծրագրի նախապատմությունը.....	4
1.2 Մասրիկ -1 արևային ՖՎ կայանի կառուցում.....	5
1.3 Համայնքի կողմից հողի կամավոր նվիրատվության նախապատմությունը.....	6
1.4 Համայնքի ստուգման հաշվետվության շրջանակը և նպատակը.....	7
2. ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ.....	7
3. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՀՈՂԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ.....	8
4. ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	11
4.1 Ծրագրի տեղակայության մարզի սոցիալ-ժողովրդագրական ու ապրուստի միջոցների ընդհանուր պատկերը.....	12
4.2 Մեծ Մասրիկ համայնքի սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը.....	12
5. ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ՀՈՂԱԿՏՈՐԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ և ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....	17
5.1 ՖՎ կայանի համար նվիրաբերվող հողի կադաստրային տվյալներ.....	17
5.2 ՖՎ կայանի համար նվիրաբերված հողի շուկայական արժեքի վերլուծության արդյունքները.....	17
5.3 ՖՎ կայանի համար առաջարկվող հողի գյուղատնտեսական փորձաքննության արդյունքները.....	18
6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	21
6.1 Կիրառված մեթոդաբանությունը.....	21
6.2 Սոցիալական ազդեցության գնահատման արդյունքները.....	22
7. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԼԽ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ.....	28
8. Եզրակացություններ.....	32
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՂՈՒՄ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻՑ.....	36
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ՀՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԴԱՏՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....	38
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՐԱԿՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	40
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	46
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀՏՀ և ՖԽ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԸ.....	51
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՖՈԿՈՒՄ ԽՄԲԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԹԵՐԹԻԿՆԵՐ.....	54
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ և ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ.....	56
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	59
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՀՈՂԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ (ՀԱՅԵՐԵՆ).....	66
ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՀՈՂԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ.....	79
ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՀՈՂԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ.....	81

### Հապավումներ

ԱՄԱԷԾ	Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագիր
ԲԼԽ	Բողոքների լուծան մեխանիզմ
ԾԱԵԱ	Ծրագրից ազդեցության ենթակա անձ
ԿՎտԺ	Կիլովատտ/ժամ
ԿՎ	Կիլովոլտ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հայաստանի կառավարություն
ՀԿՆ	Հողի կամավոր նվիրատվություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԼ	Հանրային լուսամներ
ՀՎԷԷ հիմնադրամ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՄՎ	մեգավատ
ՌԿՀ	Ռազմավարական կլիմայական հիմնադրամ
ՍՀՍՀ	Սոցիալական համալիր ստուգման հաշվետվություն
ՎԳԾ	Վերաբնակեցման գործողությունների ծրագիր
ՎԲՇ	Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ
ՎԶՄԲ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
ՏՏ	Տնային տնտեսություններ
ՕԳ	Օտարման գոտի
ՕԷԼ	Օդային էլեկտրալար
ՖՎ	Ֆոտովոլտային

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ


## 1.1. Ծրագրի նախապատմությունը

Հայաստանի կառավարությունը որոշել է որպես առաջնահերթություն դիտարկել արևային էներգիան՝ հաշվի առնելով երկրում բարձր որակի արևային էներգիայի ռեսուրսների առկայությունը և արևային պանելների գների կտրուկ անկումը: Կառավարությունը աջակցության նպատակով դիմել է Ռազմավարական կլիմայական հիմնադրամի (ՌԿՀ) ներքո գործող Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրին (ԱՄԱԷԾ) արդյունաբերական մասշտաբի հասցնելու համար արևային և երկրաջերմային տեխնոլոգիաները՝ ներգրավելով մասնավոր հատվածին: ԱՄԱԷԾ-ի Ներդրումային ծրագրի շրջանակներում Կառավարությունը նույնականացրել է արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ տեխնոլոգիան, որը պետք է զարգացվի ԱՄԱԷԾ-ի աջակցությամբ:

Հայաստանի Հանրապետությունը դրամաշնորհ է ստացել Ցածր եկամուտ ունեցող երկրներում Կլիմայական ներդրումային ծրագրի ներքո Արդյունաբերական մասշտաբի վերականգնվող էներգիայի ծրագրի (ԱՄԱԷԾ) կողմից, որը կառավարվում է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎՋՄԲ) կողմից՝ Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի արժեքի չափով: Այսպիսով, կառավարությունը մտադրված է գումարի մի մասը օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման վրա: Դրամաշնորհի իրականացնող կազմակերպությունը Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամն է (ՀՎԷԷ հիմնադրամ), որը պատասխանատու է, ի թիվս այլոց, խորհրդատուների ընտրության համար, որոնք պետք է աջակցեն Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի մշակման հարցում:

Հնարավոր է օգտագործել ՎՋՄԲ և ԱՄԱԷԾ ռեսուրսները երաշխավորված գործունեություն ապահովելու համար Մասրիկ-1 Արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ ծրագրի (Ծրագիր) մշակման համար: Ծրագիրը աջակցելու է Մասրիկ-1 արևային ՖՎ կայանի կառուցման հարցում՝ ներգրավելով մասնավոր հատվածին: Ծրագիրը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելքում գտնվող Գեղարքունիքի մարզի Մասրիկ հովտում: Նախատեսվում է 46 ՄՎտ - 55 ՄՎտ միջակայքում դրվածքային հզորություն և միջինում տարեկան 89 մլն կՎտ/ժ արտադրողականություն: Ծրագիրը միացված է լինելու 8 կմ երկարությամբ 110 ԿՎ ՕԷԼ բաշխման ցանցին, որը միանալու է առկա Կապուտակի ու Ակունքի բաշխման ցանցերին, որոնք պատկանում են ՀՀ էլ.ցանցերին: Կառավարությունը նպատակ ունի զարգացնել Ծրագիրը մասնավոր հատվածի միջոցով: ՀՎԷԷ հիմնադրամը մշակում է ծրագիրը և իրականացնում էԱԱ-ի գնում՝ միջազգային բաց մրցույթի ըթացակարգով:

## Պատկեր 1: Շինհրապարակի տեղակայությունը



Աղբյուր՝ Google Earth


### 1.2 Մասրիկ -1 արևային ՖՎ կայանի կառուցում

Մեծ Մասրիկ համայնքը (Գեղարքունիքի մարզ) ընտրվել է Մասրիկ 1 արևային ՖՎ կայանի կառուցման նպատակով: Տարածքը գտնվում է համայնքային հողերի վրա, որոնք ներկայումս օգտագործվում են որպես կենդանիների համար արոտավայր: ՀՎԷԷ Հիմնադրամը առաջարկում է ստանալ 97.4 հա համայնքային հողը (այսուհետ՝ Մեծ Մասրիկ 1 Համայնքային հող) որպես համայնքի նվիրատվություն և ապա այն փոխանցել հաղթող հայտատուին: Վերջինս պետք է համայնքին փոխանցի 80 միլիոն ՀՀ դրամ տեղական տարածքային զարգացման վճար՝ շնորհման նամակի հրապարակումից հետո 20 օրվա ընթացքում: Ծրագրի համար առաջարկվող այս տարածքը (97.4 հա) հանդիսանում է Մեծ Մասրիկ համայնքի ավելի խոշոր հողակտորի մասը: Այնուամենայնիվ, այն արդեն առանձնացվել է համայնքային հողից, իսկ պետական կադաստրում նրա կատեգորիան պետք է փոխվի: ՀՎԷԷՀ նաև ներառել է չափագրողի, ով սամնանանիշեր է տեղադրել՝ հողի այդ հատվածը սահմանազատելու համար: 2016թ-ի սեպտեմբերին տեխնիկատնտեսական հիմնավորման փուլում ծրագրի համար մշակվել է վերաբնակցման քաղաքականության շրջանակը, որը թարմացվելու է սոցիալական համալիր ստուգման արդյունքների հիման վրա:

Մասնավոր հողի օտարում կարող է պահանջվել ՕԷԼ-երի տեղադրման համար, ինչպես նաև փոխանցման աշտարակների հիմքերի և դեպի արևային կայան մուտքերի ճանապարհների համար: Հետևաբար, հնարավոր է մշակաբույսերի կորուստ: Նախքան ՕԷԼ-ի վերջնական նախագիծը ՎԲՇ պետք է մշակվի ընտրված ԱԷԱ-ի կողմից, որը ներառելու է այն քաղաքականություններն ու ընթացակարգերը, որոնցով առաջնորդվելու է ՕԷԼ-ի, աշտարակների ու մուտքերի ճանապարհների կառուցման համար անհրաժեշտ մասնավոր հողերի օտարումը: ՕԷԼ ուղու վերջնականացումից հետո ընտրված ԱԷԱ մշակելու է ՎԳԾ՝

համաձայն ՎՔՇ-ի և OP 4.03-ի դրույթների: Ուստի, աշխատում է ֆունկցիոնալ պահանջների ստանդարտ 5-ը (Հողի օտարում և հարկադիր տարաբնակեցում): Ընտրված ԱԷԱ պատրաստելու է վերաբնակեցման գործողությունների ծրագիր (ՎԳԾ)՝ համաձայն ՎՔՇ-ի ու Համաշխարհային բանկի ֆունկցիոնալ պահանջների ստանդարտի (OP/BP 4.03) դրույթների:

**Պատկեր 2: Մասրիկ -1 արևային ՖՎ կայանի համար առաջարկվող տարածք**



**1.3 Համայնքի կողմից հողի կամավոր նվիրատվության նախապատմությունը**

ՖՎ կայանի կառուցման վերաբերյալ ՀՎԷԷՀ մասնագետների հետ մի քանի քննարկումների ընթացքում, որին մասնակցել են Մեծ Մասրիկ համայնքի ղեկավարը, ինչպես նաև համայնքի խորհրդի անդամները, համայնքը պատրաստակամություն է հայտնել նվիրաբերել համայնքի սեփականություն հանդիսացող արտավայրը ՀՎԷԷՀ -ին՝ առաջարկվող կայանի կառուցման համար, ինչը փաստագրվելու է համայնքի խորհրդի որոշմամբ և հողի նվիրատվության համաձայնագրով<sup>1</sup>:

Միևնույն ժամանակ, համալիր ստուգման շրջանակներում իրականացված հանրային լուծումների ընթացքում համայնքի ներկայացուցիչներին տեղեկացվել է, որ մասնավոր հողի օտարում կարող է պահանջվել ՕԷԼ-ների հետագա տեղադրման համար, ինչպես նաև փոխանցման աշտարակների հիմքերի և դեպի արևային կայան մուտքերի ճանապարհների համար, ինչը կհանգեցնի հողի օտարման ու տարաբնակեցման խնդիրների: Հետևաբար, համայնքի ղեկավարներին տեղեկացվել է, որ հողի օտարման ու տարաբնակեցման ծրագրի մշակման դեպքում ԾԱԵԱ/SS-ների կորուստների օտարման դեպքում նրանք ենթակա են փոխհատուցման, այդ թվում նաև՝ համայնքին պատկանող ազդեցության ենթակա հողի օգտագործողները:

<sup>1</sup> Համաձայն ՀՀ օրենսդրության, հողի նվիրատվության մասնի համայնքի որոշումը պետք է կայացվի համայնքի խորհրդի կողմից (մասնաբաժանների համար տես Իրավական շրջանակի բաժին 3-ը):

#### 1.4 Համալիր ստուգման հաշվետվության շրջանակը և նպատակը

Սոցիալական անվտանգության համալիր ստուգման հիմնական նպատակն է հասկանալ և գնահատել հնարավոր սոցիալական ազդեցությունները և առաջարկել մեղմացնող միջոցառումներ այն ազդեցությունների համար, որոնք ի հայտ են գալիս Մեծ Մասրիկ համայնքում ՖՎ արևային կայանի կառուցման նպատակով համայնքային արոտավայրի նվիրատվության հետևանքով: Համալիր ստուգումը իրականացվել է համաձայն Համաշխարհային բանկի խմբի՝ հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ սոցիալական անվտանգության քաղաքականության (ՕՔ 4.03 և Ֆունկցիոնալ պահանջների ստանդարտ 5): Սոցիալական անվտանգության համալիր ստուգման շրջանակներում, հիմնվելով հավաքագրված տվյալների վրա, իրականացվել է հետևյալ վերլուծությունը.

- Ծրագրի բոլոր ազդեցությունների (դրական ու բացասական) վերլուծություն ու գնահատում.
  - Կյանքի ստանդարտների ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա ակնկալվող ազդեցությունների վերլուծություն, հատկապես, որոնք վերաբերվում են անհատների ու համայնքի եկամուտներին, ապրուստին ու աշխատանքով ապահովմանը;
  - Տարբեր խմբերի վրա ազդեցությունների ակնկալվող ծանրությունը:
- Նվիրաբերված արոտավայրի արդյունավետության վերլուծություն՝ որոշելով բերքատվությունը և արածող կենդանիների ծավալները և այլընտրանքային արոտավայրերի առկայությունը:
- Մեղմացնող միջոցառումների վերաբերյալ եզրակացություններ ու առաջարկություններ և տարբերակներ ՀՎԷԷՀ –ի համար բացասական ազդեցությունները նվազեցնելու ու մեղմացնելու համար (օրինակ՝ համայնքային արոտավայրերը ավելացնելու տարբերակներ):

## 2. ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Սոցիալական անվտանգության համալիր ստուգման շրջանակներում իրականացվել են հետևյալ վերլուծությունները.

- 1) Ծրագրի փաստաթղթերի ու համապատասխան կանոնակարգերի վերանայում ու վերլուծություն (իրավական շրջանակներ)
- 2) կադաստրային տեղեկատվության վերլուծություն
- 3) նվիրաբերվող հողի շուկայական արժեքի վերլուծություն
- 4) արևային կայանի համար առաջարկվող հողի արդյունավետության գյուղատնտեսական վերլուծություն
- 5) Մեծ Մասրիկ համայնքի սոցիալ-տնտեսական պրոֆիլի վերլուծություն
- 6) Հանրային լսումների կազմակերպում

7) Հիմնական տեղեկատու հարցազրույցներ և ֆոկուս խմբերի քննարկումներ ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ու շահառուների հետ:

Գրասենյակային վերլուծության ընթացքում չափագրող մասնագետի օգնությամբ ուսումնասիրվել են ՖՎ կայանի համար առաջարկվող հողերի կադաստրային քարտեզներն ու տվյալները, ինչպես նաև սեփականության մասին փաստաթղթերը: Ուսումնասիրվել է ծրագրի ազդառու տարածքներում հողի պաշտոնական ու ոչ պաշտոնական սեփականության ու օգտագործման տարբերակը: Բացի այդ, նվիրաբերված հողին մոտ գտնվող հողակտորների կադաստրային քարտեզներն ընդհանուր առմամբ ուսումնասիրվել են՝ գնահատելու համար հնարավոր ազդեցությունները դեպի կայան տանող առկա մուտքի ճանապարհների վրա և պարզելու համար ծրագրի հետևանքով առաջացած որևէ փոփոխություն հողի օգտագործման տեսանկյունից: Սույն հաշվետվության յուրաքանչյուր համապատասխան բաժնում ներկայացված են յուրաքանչյուր նպատակին հասնելու համար վերոնշյալ գործողությունների իրականացման մանրամասն մեթոդաբանական մոտեցումները:

### **3. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՀՈՂԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

Համալիր ստուգման շրջանակներում Խորհրդատուն ուսումնասիրել է հետևյալ հիմնական կարգավորող փաստաթղթերը՝ ապահովելու համար, որ ծրագրի փաստաթղթերը համապատասխանում են ՀԲ-ի քաղաքականության ու ազգային օերնսդրության պահանջներին.

- ՀՀ Հողային օրենսգիրք
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք
- Համաշխարհային բանկի քաղաքականություն:

*ՕՔ 4.03* Մասնավոր հատվածի գործունեության համար ֆունկցիոնալ պահանջներ, ֆունկցիոնալ պահանջի ստանդարտ 5 (Հողի օտարում և հարկադիր տարաբնակեցում)<sup>2</sup>

- Ծրագիրը հաստատող Կառավարության որոշումը
- Ծրագրի ներքո հաստատված ՎՔՇ (պետք է թարմացվի);
- Հողի նվիրատվության մասին Կառավարության որոշումը
- ՀՎԷԷՀ և համայնքի միջև հողի նվիրատվության համաձայնագիրը
- ՀՎԷԷՀ և Ներդրողի (կառուցապատողի) միջև հողի փոխանցման մասին համաձայնագիրը
- Ներդրողի մրցույթի համար մրցությային փաստաթղթերը
- Այլ անհրաժեշտ փաստաթղթերը:

Հավելված 12-ում ներկայացված են հողի օտարման, նվիրատվության և տնօրինման դրույթների հիմնական պահանջների և իրավական դաշտի մանրամասն նկարագրությունը: Մինչդեռ իրավական համապատասխանության մասին վերլուծության ամփոփումը, հողի նվիրատվության

<sup>2</sup> [http://siteresources.worldbank.org/OPSMANUAL/Resources/OP4.03\\_PS5.pdf](http://siteresources.worldbank.org/OPSMANUAL/Resources/OP4.03_PS5.pdf)



ընթացակարգերի մարտահրավերներն ու ռիսկերը, որոնք կիրառվել են ծրագրի ներքո, ներկայացված են ստորև.

**Հողի նվիրատվության ընթացակարգերի պայմանները:** Սովորաբար, հողի կամավոր նվիրատվությունը շահառու տնային տնտեսությունների կամ համայնքների կողմից ընդունելի է, երբ ընթացակարգերով պահպանվում են հողի նվիրատվության հետևյալ պայմանները.

- 1) Ազդեցությունները չեն հանգեցնում տնային տնտեսությունների տեղափոխման կամ վերջիններիս եկամուտի ու ապրուստի միջոցների կորստի;
- 2) Նվիրաբերված հողը սեփականության կամ այլ ծանրաբեռնվածության մասով որևէ վեճի առարկա չէ;
- 3) Ազդեցության ենթակա համայնքների հետ հանրային լուսմները ազատ ու թափանցիկ են;
- 4) Կազմվում են լուսմների արձանագրություններ, փաստագրվում են բողոքներն ու դրանց լուծման համար միջոցները;
- 5) Հողի հետ կապված գործարքները զուգորդվում են սեփականության իրավունքների փոխանցմամբ;
- 6) Կամավոր նվիրատվություն կատարող տնային տնտեսությունները հանդիսանում են ծրագրի անմիջական և ոչ անմիջական շահառուն, որի մասին տեղեկացվել են համայնքի բնակիչներին հանրային լուսմների ընթացքում (համայնքի բնակիչները համաձայն են կամավոր տրամադրել հողը ծրագրի համար՝ համայնքի շահերի նպատակով);
- 7) Հողի կամավոր նվիրատվության (ՀԿՆ) գործնական սկզբունքներն են՝ “տեղեկցված համաձայնությունն ու ընտրության հնարավորությունը”, որը իրականացվել է ծրագրի համար, քանի որ համայնքը չի կարող նվիրաբերել հողը առանց համայնքի խորհրդի անդամների միասնական որոշման:

**Համայնքի կողմից ՀԿՆ-ի դեպքում մարտահրավերներն ու ռիսկերը.** Այս առումով, Համայնքի կողմից ՀԿՆ-ի դեպքում մարտահրավերներն ու ռիսկերը նվազեցվում են հետևյալ միջոցառումներով՝

- Համայնքի կողմից ՀԿՆ-ի և դրա հետևանքների ընկալումը (առավելություններն ու թերությունները), ինչի մասին վկայում է համայնքի խորհրդի անդամների որոշումը;
- Նվիրաբերելու մասին որոշման առանց պարտադրանքի “կամավոր” լինելը, ինչը ապահովվել է հանրային լուսմների ընթացքում համայնքի անդամների կողմից արտահայտած կարծիքով;
- Նվիրատվության պայմանները և իրավական հարցերը (սահմանափակումներով օգտագործում, փոխանցում, վերադարձնելու իրավունք, հարկեր և այլն) փաստագրված են նվիրատվության համաձայնագրի նախագծում, որը թափանցիկ է համայնքի բնակիչների համար;
- Հողի նվիրատվությունը պետք է պատշաճ կերպով փաստագրվի ՀՀ կառավարության որոշմամբ՝ լիովին համապատասխանելով ազգային օրենսդրությանը:

**Հողի նվիրատվության համաձայնագրի դրույթները.** Ազգային օրենսդրության իրավական դրույթների համաձայն՝ Մեծ Մասրիկ համայնքի ու Հիմնադրամի միջև Հողի նվիրատվության որոշման մեջ հիմնական հղումները կատարվում են ՀՀ Հողային օրենսգրքի հոդված 65-ին, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 605-ին (նկարագրվել է նախորդ բաժնում): ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի Հոդված 605-ը սահմանում է Նվիրաբերության ընդհանուր պայմանները, որոնք կիրառվել են Հիմնադրամին Մեծ Մասրիկ համայնքի կողմից համայնքային հողակտորի նվիրատվության ընթացքում: Մասնավորապես, հետևյալ հիմնական դրույթներն արտացոլված են նվիրաբերված հողի մասին համաձայնագրի մեջ.

- (կետ 3) Նվիրաբերողի կողմից գույքի նվիրաբերությունը քաղաքացուն պետք է պայմանավորված լինի, իսկ իրավաբանական անձանց՝ կարող է պայմանավորված լինել **այն որոշակի նշանակությամբ օգտագործելով:**
- (կետ 6) **Եթե նվիրաբերություն ստացողը նվիրաբերած գույքն օգտագործել է նվիրաբերողի սահմանած նշանակությանն անհամապատասխան,** կամ այդ նշանակությունը փոփոխվել է սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված կանոնների խախտմամբ, ապա նվիրաբերողը, նրա ժառանգները կամ այլ իրավահաջորդներ **իրավունք ունեն պահանջել նվիրաբերության վերացում:**
- (կետ 7) **Նվիրաբերության նկատմամբ չի կիրառվում իրավահաջորդությունը** սույն Ծրագրի շրջանակներում:

Ծրագրի ներքո կիրառված հողի նվիրատվության հիմնական կանոնակարգերը, ինչպես նաև ժամանակացույցը ներկայացված են ստորև 3.4.աղյուսակում:

**Աղյուսակ 3.4 Հողի նվիրատվությունը և կանոնակարգերը՝ ըստ կարգավիճակի և ժամանակացույցի**

N	Գործընթաց, գործողություն	Կարգավիճակ	Ավարտման ժամկետ	Նշումներ
1	Հողի նվիրատվության մասին ՀՀ կառավարության որոշման հաստատում	Հողի նվիրատվության մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը շրջանառվել է պետական կազմակերպություններում և հաստատվելու է կառավարության կողմից բոլոր անհարժեշտ ընթացակարգերի ավարտից հետո՝ (i) (ii) ՀՀ որոշման շրջանառումը բոլոր շահառու պետական մարմինների միջև, Արդարադատության նախարարության եզրակացությունը, (iii) ՀՀ կառավարության հաստատումը:	ապրիլ, 2018թ.	ՀՀ կառավարության որոշման նախագիծը կցված է Հավելված 9-ում

2	Հողի նվիրատվության համաձայնագրի ստորագրում համայնքի և ՀՎԷԷՀ-ի միջև	Հողի նվիրատվության համաձայնագիրը մշակվել է ՀՎԷԷՀ-ի կողմից : Այն ստորագրվելու է ՀՀ կառավարության որոշման հաստատումից հետո:	ՀՀ կառավարության որոշման հաստատումից հետո	Հողի նվիրատվության համաձայնագրի նախագիծը կցված է Հավելված 10-ում
3	Հողի փոխանցման համաձայնագրի ստորագրում ընտրված ներդրողի ու ՀՎԷԷՀ-ի միջև	Հողի փոխանցման համաձայնագրի մշակվել է ՀՎԷԷՀ-ի կողմից, որը կստորագրվի կողմերի միջև Ներդրողի ընտրությունից հետո	Ներդրողի ընտրությունից հետո	Հողի փոխանցման համաձայնագրի նախագիծը կցված է Հավելված 11-ում
4	Մեծ Մասրիկ համայնքի հաշվին վերջինիս զարգացման համար սահմանված վճարի փոխանցում	Համայնքի զարգացման համար սահմանված վճարը պետք է փոխանցվի Ներդրողի կողմից նախքան Կառավարության աջակցության համաձայնագրի կնքումը	Գումարի փոխանցումը նախապայման է Կառավարության աջակցության համաձայնագրի ստորագրման համար	
5	Հողի փոխանցումը Ներդրողին	<ul style="list-style-type: none"> <li>ՀՎԷԷՀ-ը, ՀՀ կառավարության ու Մասրիկ 1 արևային ՖՎ կայանի Ներդրողի միջև Հողի փոխանցման համաձայնագրի և Կառավարության աջակցության համաձայնագրի կնքումից հետո պետք է հողը փոխանցի Ներդրողին</li> <li>Հողի փոխանցումը համայնքին կատարվելու է՝ հիմնվելով ՀՎԷԷՀ-ի և Ներդրողի միջև Փոխանցման ակտի վրա:</li> </ul>	Նշված համաձայնագրերի կնքումից հետո 10 օրերի ընթացքում	

#### 4. ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ծրագրի տարածքի (Մեծ Մասրիկ համայնքի) սոցիալ-տնտեսական նկարագրության հիմնական նպատակն է ներկայացնել շահառու համայնքի ու մարդկանց հիմնական սոցիալ-տնտեսական բնութագրերը, ինչպիսին են կրթության մակարդակը, սեռը, տարիքը, հողային ռեսուրսները, և այլն՝ համայնքի վրա հողի նվիրատվության հետևանքով հավանական ազդեցությունները հասկանալու համար (համայնքային արոտավայրի իրական կորուստ) և վերականգնման հնարավորությունները պարզելու համար:

Սոցիալական համալիր ստուգման շրջանակում գրասենյակային հետազոտություններ են իրականացվել, մասնավորապես՝ կատարվել է հասանելի պաշտոնական քանակական սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական տվյալների վերլուծություն որոշելու համար ծրագրի իրականացմանն առնչվող կարևոր սոցիալական ազդեցությունները: Ներկայացված տվյալները հիմնված են մարզի մակարդակով պաշտոնական վիճակագրական տվյալների վրա, ինչպես նաև համայնքի մակարդակով ձեռքբերված իրական տվյալների վրա:

#### **4.1 Ծրագրի տեղակայության մարզի սոցիալ-ժողովրդագրական ու ապրուստի միջոցների ընդհանուր պատկերը**

Ծրագիրը իրականացվելու է Գեղարքունիքի մարզում: Այն գտնվում է Հայաստանի արևելյան մասում և սահմանակից է Ադրբեջանին ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյան մարզին: Ունենալով 5,348 կմ<sup>2</sup> տարածք՝ Գեղարքունիքի մարզը ամենախոշորն է Հայաստանում: Սակայն, մոտ 1,278 կմ<sup>2</sup> տարածքը զբաղեցնում է Սևանա լիճը, որը Կովկասի խոշորագույն լիճն է և մարզի հիմնական զբոսաշրջության վայրը:

2011թ-ին կատարված պաշտոնական մարդահամարի տվյալների համաձայն՝ Գեղարքունիքի մարզի բնակչությունը 235,075 է (119,180 տղամարդ ու 115,895 կին), ինչը կազմում է Հայաստանի ողջ բնակչության 7.8%-ը: Քաղաքային բնակչությունը 71,423 (30.4%) է, իսկ գյուղականը՝ 163,652 (69.6%): Մարզում առկա են 5 քաղաքային ու 87 գյուղական համայնքներ: Ամենամեծ քաղաքային համայնքը մարզկենտրոն Գավառն է, որի բնակչությունը 20,765 է: Այլ քաղաքային կենտրոններ են Սևանը, Մարտունին, Վարդենիսը և Ճամբարակը: 9,880 բնակչություն ունեցող Վարդենիկ գյուղը Գեղարքունիքի մարզի ամենամեծ գյուղական համայնքն է, ինչպես նաև՝ ամենամեծ գյուղական համայնքը Հայաստանում:

#### **4.2 Մեծ Մասրիկ համայնքի սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը**

Մեծ Մասրիկը Գեղարքունիքի մարզի գյուղական համայնք է, որն ունի 36 կմ<sup>2</sup> տարածք: Այն ունի դպրոց, տարրական դպրոց, 2 մանկապարտեզ, բժշկական կլինիկա, ավրաղաց, հյուրանոց, գազալցակայան, 10 առևտրի կենտրոններ, աշտարակ, օդերևութաբանական կայան, փոստ, ոռոգման համակարգ: Ըստ ՀՀ կառավարության տվյալների՝ բնակչությունը 3,428 է<sup>3</sup>:

Սոցիալական համալիր ստուգման շրջանակում հետևյալ սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական տվյալները պաշտոնապես ստացվել են Մեծ Մասրիկ համայնքից ու վերլուծվել են Խորհրդատուի կողմից:

##### **Հհ Անվանում**

- 1 Ընդհանուր բնակչության թիվը, նաև տարաբաժանումը ըստ սեռի և տարիքի
- 2 Ընդհանուր տնային տնտեսությունների (SS) թիվը
- 3 Ընտանիքի անապահովության համակարգում գրանցված և ընտանեկան նպաստ ստացող SS-ների թիվը

<sup>3</sup> Համայնքից ստացված բնակչության վերաբերյալ իրական տվյալները տարբերվում են վիճակագրական տվյալներից:

- 4 Միայնակ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների թիվը, որտեղ բացի իրենցից այլ չափահաս աշխատունակ տարիքի անձ առկա չէ
- 5 Միայնակ կենսաթոշակառուների կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների թիվը, որտեղ բացի իրենցից այլ չափահաս աշխատունակ տարիքի անձ առկա չէ
- 6 Առաջին և երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձնց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների թիվը, որտեղ բացի իրենցից այլ չափահաս աշխատունակ տարիքի անձ առկա չէ
- 7 1\_ Մեծ քանակությամբ անասուններ պահող, անասնապահությամբ զբաղվող ՏՏ-ների թիվը (որպես բիզնես և եկամտի հիմնական աղբյուր)  
2) Փոքր քանակությամբ անասուններ պահող, անասնապահությամբ զբաղվող ՏՏ-ների թիվը (որպես ներքին սպառման միջոց, եկամտի ոչ հիմնական աղբյուր)
- 8 Համայնքում առկա անասունների քանակը՝ մանր կնդակավոր և խոշոր եղջերավոր
- 9 Համայնքի բնակիչների զբաղվածությունը ըստ ոլորտների (% կամ քանակ)
  - 1) Գյուղատնտեսություն-250
  - 2) Վարձու աշխատանք համայնքում/մարզում-350
  - 3) Վաճու սեզոնային աշխատանք արտերկրում-120
  - 4) Ինքնազբաղված-25
  - 5) Չաշխատող (գործազուրկ, տնային տնտեսուհի)-12
  - 6) Կենսաթոշակառու-460
  - 7) Այլ ———
- 10 Համայնքի ընդհանուր հողային ռեսուրսները ըստ տեսակների, հա
  - 1) Վարելահող-
  - 2) Արոտավայր-
  - 3) Խոտհարք -
  - 4) Պտղատու այգի, խաղողի այգի-
  - 5) Այլ գյուղ. հող-
  - 6) Բնակելի կառուցապատման-
  - 7) Հասարակական կառուցապատման-
  - 8) Արտադրական-
  - 9) Ընդհանուր օգտագործման, էներգետիկայի և տրանսպորտ նշ.-
  - 10) Այլ ոչ գյուղատնտեսական (ջրային, հատուկ պահպանվող և այլն)-

Հավաքագրված տվյալները թույլ են տալիս վերլուծել կենսամակարդակը, համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական պայմանները, համայնքի այլընտրանքային հողային ռեսուրսները՝ հաշվի առնելով արոտավայրի կորուստը, որը նվիրաբերվելու է կայանի կառուցման համար և ծրագրից բխող հնարավոր փոփոխությունները անհատների ու համայնքի եկամուտի/ապրուստի միջոցների վրա:

Մեծ Մասրիկ համայնքի վերաբերյալ հիմնական սոցիալ-տնտեսական արդյունքները ներկայացված են ստորև, իսկ ներկայացված տվյալների մասին համայնքի հղումները ներկայացված են Հավելված 1-ում:

**Բաշխվածությունն ըստ սեռի ու տարիքի.** Ստորև աղյուսակներ 1-ում ու 2-ում ներկայացված են ազդեցության ենթակա համայնքների տնային տնտեսություններն ու բնակչությունը ըստ տարիքի ու սեռի: Համայնքի բնակչության 49.1%-ը (1837) տղամարդիկ են, իսկ 50.9%-ը (1905)՝ կանայք:

Միջին բաշխվածությունը հետևյալն է՝ բնակչության ավելի քան 57% աշխատանքային տարիքի են, որից 21.3%-ը 18-35 տարեկան են, իսկ 36.6%-ը 35-55 տարեկան են; 23%-ը ետ-աշխատանքային տարիքի են՝ 55 և ավել տարեկան, իսկ 19.9%-ը 0-18 տարիքի են: Համայնքում մշտապես բնակվող անդամների իրական ընդհանուր թիվը կազմում է 3742, իսկ տնային տնտեսություններինը՝ 950, որից 915-ը մշտապես բնակվում են համայնքում: Այսպիսով, ՏՏ-ների միջին չափը 4 է:

**Աղյուսակ 1. Համայնքի բնակիչների (համայնքում մշտապես բնակվող) բաշխվածությունն ըստ սեռի**

Բնակչության իրական ընդհանուր թիվը	ՏՏ-ների ընդհանուր քանակը	Սեռ		ՏՏ-ների միջին չափը
		Տղամարդ	Կին	
3742	915	1837 (49.1 %)	1905 (50.9 %)	4

Աղբյուր՝ Մեծ Մասրիկի համայնքի կողմից տրամադրված տվյալներ, 2018թ.

**Աղյուսակ 2. Համայնքի բնակիչների (համայնքում մշտապես բնակվող) բաշխվածությունն ըստ տարիքի**

Տարիք	Ընդհանուր բնակչության թիվն ըստ տարիքի	% -ային բաշխվածությունն ընդհանուր բնակչության թվից	Տղամարդ	Կին
0-18	715	19.1	360	355
18-35	797	21.2	397	400
35-55	1370	36.6	670	700
55 և ավել	860	23	410	450
<b>Ընդամենը</b>	<b>3742</b>	<b>100%</b>	<b>1837</b>	<b>1905</b>

Աղբյուր՝ Մեծ Մասրիկի համայնքի կողմից տրամադրված տվյալներ, 2018թ.

**Զբաղվածություն:** Ստացված տեղեկատվության համաձայն համայնքում զբաղվածության պատկերը բնութագրվում է հետևյալով<sup>4</sup>

- Համայնքի բնակիչների 55.3 % (2000)-ը ներգրավված են գյուղատնտեսական գործունեության մեջ
- Համայնքի բնակիչների 9.7% (350) –ն ունի մշտական վճարվող աշխատանք համայնքում/մարզում
- Մինչդեռ միայն 0.83% (30) –ն ունի վճարվող աշխատանք (նաև սեզոնային) արտասահմանում

<sup>4</sup> Ներկայացված թվերը կրկնակի հաշվարկված են:

- Համայնքի բնակիչների 0.55% (20)-ը ինքնագրադված են
- Ընդհանուր առմամբ համայնքի բնակիչների 45% -ը գործազուրկ են (ներառյալ՝ տնային տնտեսուհիները), որոնցից հիմնականը 33% (1200) –ը տնային տնտեսուհիներ են
- 12.7% (460)-ը թոշակառու են:

Այսպիսով, զբաղվածության առանցքային ոլորտը գյուղատնտեսությունն է, այնուհետև՝ վճարվող աշխատանքը պետական ու մասնավոր հատվածներում: Մինչդեռ, գյուղատնտեսական գործունեության հիմնական ոլորտները մշակաբույսերի մշակումն է և հարակից գյուղատնտեսական աշխատանքները, և միայն դրանից հետո՝ անասնապահությունը:

**Խոցելիությունը:** Սոցիալական համալիր ստուգման շրջանակում հետևյալ խմբերը դիտարկվել են որպես խոցելի. աղքատ/ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններ, կանաց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններ, հաշմանդամ անձի և տարեցների (65 տարեկանից բարձր) կողմից ղեկավարվող տնային տնտեսություններ:

Մեծ Մասրիկ համայնքի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 160 SS-ներ գրանցված են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում: Նրանք ընտանեկան նպաստ են ստանում միջինում 34,250.00 ՀՀ դրամ (նվազագույնը՝ 24,000.00 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 63,000.00 ՀՀ դրամ) այն դեպքում, երբ ՀՀ նվազագույն աշխատավարձը կազմում է 55,000.00 ՀՀ դրամ: Հաշվի առնելով համայնքում իրական տվյալներով բնակվող 3,742 մարդկանց ու 915 SS-ների թիվը (4 անձ ամեն SS-ում)՝ Մեծ Մասրիկի SS-ների ընդհանուր թվի 17.4%-ը աղքատ են: Միևնույն ժամանակ, 13 SS գլխավորում են կանայք, 5-ը՝ տարեցներ, ինչպես նաև 3-ը հաշմանդամներ, ինչը համապատասխանաբար կազմում է՝ 1.4%, 0.5% և 0.3%:

Այսպիսով, համայնքի ընդհանուր թվով 915 SS-ների **24.7% (226 SS-ներ)-ը** տարբեր կարգավիճակի խոցելիություն ունեն: Մեծ Մասրիկ համայնքի խոցելիության մասին տվյալները ներկայացված են աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3. Մեծ Մասրիկ համայնքի խոցելի SS-ներ**

Խոցելիության կարգավիճակ	Խոցելի SS-ների թիվը	Ընդհանուր բնակչության ծոցելիության բաշխվածության %-ը
Ընտանիքների խոցելիության գնահատման համակարգում գրանցված խոցելի SS-ներ, որոնք ընտանեկան նպաստ են ստանում	160	17.4
Խոցելի SS-ներ, որոնք պահվում են կանանց կողմից և չունեն այլ չափահաս, աշխատանքային տարիքի անձ	13	1.4
Խոցելի SS-ներ, որոնք պահվում են թոշակառուի կողմից և չունեն այլ չափահաս, աշխատանքային տարիքի անձ	5	0.5

Խոցելի SS-ներ, որոնք պահվում են 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից և չունեն այլ չափահաս, աշխատանքային տարիքի անձ	3	0.3
<b>Ընդամենը</b>	<b>226</b>	<b>24.7</b>

Աղբյուր՝ Մեծ Մասրիկի համայնքի կողմից տրամադրված տվյալներ, 2018թ.

**Անասնապահություն:** Մեծ Մասրիկ համայնքի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ SS-ների թիվը, որոնք անասնապահությամբ զբաղվում են որպես բիզնես և դա իրենց եկամտի գլխավոր աղբյուրն է հանդիսանում, կազմում է 18 (մոտ 2% SS-ների ընդհանուր քանակից), մինչդեռ 367 SS-ներ (SS-ների ընդհանուր քանակից 40-ը) ներգրավված են անասնապահության մեջ, որը ծառայում է իրենց ընտանիքների համար սպառման նպատակներով և եկամտի հիմնական աղբյուր չի հանդիսանում:

Անասնապահությամբ զբաղվող համայնքի բնակիչներին պատկանող կենդանիների ընդհանուր քանակը հետևյալն է՝ մանր եղջերավոր - 2375 և խոշոր եղջերավոր - 1650 (որից 500 կով, իսկ մնացածը հիմնականում հորթեր են):

**Համայնքի հողային ռեսուրսները:** Մեծ Մասրիկ համայնքի կողմից տրամադրված տվյալները ցույց են տալիս, որ համայնքի հողային ռեսուրսների մեծ մասը վարելահողեր են (մոտ 70%): Արոտավայրերը ընդհանուր հողերի 12.9% են (465 հա, ներառյալ նվիրաբերված հողակտորը), ինչը նշանակում է, որ նվիրաբերված 97.4 հա հողը կազմում է ընդհանուր արոտավայրերի 20.9%-ը, իսկ համայնքի ընդհանուր հողային ռեսուրսների՝ 2.7%-ը: Մեծ Մասրիկ համայնքում չկան պտղատու այգիներ կամ խաղողի այգիներ: Մեծ Մասրիկ համայնքի ընդհանուր հողային ռեսուրսները ըստ հողի տեսակի ներկայացված են ստորև՝ աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ 4. Մեծ Մասրիկ համայնքի հողային ռեսուրսներն ըստ հողի տեսակի**

Հողի տեսակը (նշանակությունը)	Տարածք, հա	ընդհանուր հողային ռեսուրսների %-ը
1) Վարելահող	2500	69.5
2) Արոտավայր (ներառյալ՝ նվիրաբերված հողակտորը)	465	12.9
3) Խոտածածկ	62	1.6
4) Պտղատու այգի, խաղողի այգի	--	--
5) Բնակելի	265	7.4
6) Առևտրային	13	0.4
7) Արդյունաբերական	6.5	0.2
8) Տրանսպորտի, էներգիայի և այլնի համար ընդհանուր օգտագործման հողեր	24.5	0.7
9) Այլ գյուղատնտեսական հողեր	250	6.9



10) Այլ ոչ գյուղատնտեսական հողեր (հատուկ օգտագործման, ջրային, անտառային, և այլն)	13.5	0.4
<b>Ընդամենը</b>	<b>3599.5</b>	<b>100</b>

*Աղբյուր՝ Մեծ Մասրիկի համայնքի կողմից տրամադրված տվյալներ, 2018թ.*

Հիմնվելով վերոնշյալ սոցիալ-ժողովրդագրական տվյալների վրա՝ կարելի է ենթադրել, որ ծրագիրը կարող է ազդել այն SS-ների վրա, որոնք զբաղվում են անասնապահությամբ և որպես բիզնես ու հիմնական եկամտի աղբյուր (18 – SS-ների ընդհանուր թվի մոտ 2%), և որպես ընտանիքի նպատակների համար ու ոչ որպես հիմնական եկամտի աղբյուր հանդիսացող SS-ների վրա (SS-ների ընդհանուր թվի մոտ 40%), ովքեր օգտագործում են նվիրաբերվող արոտավայրը որպես հիմնական արոտավայր, մինչդեռ, իրական ազդեցության գնահատման հետազոտության արդյունքները ներկայացված են Բաժին 6-ում:

## **5. ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ՀՈՂԱԿՏՈՐԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ և ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

### **5.1 ՖՎ կայանի համար նվիրաբերվող հողի կադաստրային տվյալներ**

ՀՎԷԷ-ի կողմից վարձված չափագրողը հաշվարկել է հողակտորի ընդհանուր ու ազդեցության ենթակա մակերեսները, ազդեցության ենթակա հողի քանակն (կադաստրային լոտ-կողեր) ըստ նշանակային դիրքի: Չափագրման հիման վրա կազմվել է հողի քարտեզը՝ համաձայն կադաստրային պահանջների, ինչի վրա հիմնվելով, ՖՎ կայանի համար առաջակվող հողը առանձնացվել է ընդհանուր համայնքային հողից և առանձին գրանցվել է կադաստրում:

ՖՎ կայանի համար պահանջվող հողը հանդիսանում է համայնքի սեփականություն մեկ հողակտոր, որը ծանրաբեռնված չէ երրորդ կողմի իրավունքներով, իսկ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է: Ըստ կադաստրի քարտեզի՝ ընդհանուր տարածքը 436 հա է, որից ծրագրից ազդեցություն կրող հողի մակերեսի տարածքը կազմում է 97.4 հա: Տարածքն օգտագործվում է որպես արոտավայր:

Հողակտորի սեփականության վկայականը ու քարտեզը կցված են Հավելված 2-ում:

### **5.2 ՖՎ կայանի համար նվիրաբերված հողի շուկայական արժեքի վերլուծության արդյունքները**

Սոցիալական համալիր ստուգման շրջանակներում Խորհրդատուն ներգրավել է լիցենզավորված գնահատողի՝ վերլուծելու համար ՖՎ կայանի համար նվիրաբերված հողի շուկայական արժեքը որպես գյուղատնտեսական հող և որպես էներգիայի ստացման նպատակով օգտագործվող հող: Սա հնարավորություն է տալիս վերլուծել հողի հնարավոր շուկայական արժեքի շեղումը Հողի զարգացման վճարից, որը Ներդրողը պետք է վճարի Մեծ Մասրիկ համայնքին նախքան Կառավարության աջակցության համաձայնագրի ստորագրումը:

Համաձայն գնահատողի եզրակացության՝ նվիրաբերված գյուղատնտեսական հողի (արոտավայր) շուկայական արժեքը կազմում է 19.468.180 ՀՀ դրամ, մինչդեռ դրա կադաստրային արժեքը՝ 73.005.675 ՀՀ դրամ է: (ստորև տես աղյուսակ 5-ը):

**Աղյուսակ 5. 27.02.2018թ. դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի(գյուղատնտեսական) հողի շուկայական արժեքի գնահատման արդյունքները**

Հողի տարածքը (մ2)	Գույքի 1 մ <sup>2</sup> շուկայական արժեքը ՀՀ դրամով	Գույքի 1 մ <sup>2</sup> կադաստրային արժեքը ՀՀ դրամով	Ընդհանուր գույքի շուկայական արժեքը ՀՀ դրամով	Ընդհանուր գույքի կադաստրային արժեքը ՀՀ դրամով
973.409,0	20,0	75,0	19.468.180,0	73.005.675,0

Լիցենզավորված գնահատողի եզրակացությունը կցված է Հավելված 3-ում:

**5.3 ՖՎ կայանի համար առաջարկվող հողի գյուղատնտեսական փորձաքննության արդյունքները**

Խորհրդատուն որոշակիորեն գյուղատնտեսի է ներգրավել, որպեսզի վերլուծի ՖՎ կայանի համար առաջարկվող հողի արդյունավետությունն ու գյուղատնտեսական արժեքը: Գյուղատնտեսի կողմից կիրառված մեթոդաբանությունը, ինչպես նաև գյուղատնտեսական վերլուծության արդյունքները ներկայացված են ստորև:

**Կիրառված մեթոդաբանությունը:**

Նվիրաբերվող հողամասի արդյունաբերական արժեքի որոշման նպատակով գյուղատնտեսը կիրառել է հետևյալ մոտեցումը՝

- 1) Ակնադիտական գնման և օրգանոլեպտիկ եղանակով<sup>5</sup> ուսումնասիրվել և որոշվել է Նվիրաբերվող հողամասի ընթացիկ փաստացի արդյունաբերական արժեքը որպես արոտավայր, մասնավորապես՝ որքան է կազմում նշված արոտավայրից ստացվող անասնակերի տարեկան բերքատվությունը և ընդհանուր հողամասի որակը՝ որպես արոտավայր՝ արոտավայրի թույլատրելի բեռնվածության (ԱԹԲ) կամ արոտավայրի տարողունակության ցուցանիշների միջոցով;
- 2) Որոշվել է անասունների մոտավոր քանակը (մանր կճղակավոր և խոշոր եղջերավոր), որոնց կարող է սպասարկել Նվիրաբերվող հողամասը որպես արոտավայր, կամ միջինում այն անասունների թիվը, որոնց կարող է սպասարկել նմանատիպ մակերեսով ու որակով արոտավայրը;

<sup>5</sup> Օրգանոլեպտիկ եղանակը օբյեկտի/սեփականության ուսումնասիրությունն է (ուտելիքի, ջրի կամ այլ նյութերի ասպեկտները), երբ կիրառվում են անձնական զգայարանները, ներառյալ՝ համի, տեսողության, հոտառության, և շոշափման:

- 3) Ուսումնասիրվել է համայնքում առկա անասունների ընդհանուր թիվը<sup>6</sup> (մանր կճղակավոր և խոշոր եղջերավոր), որի հիման վրա որոշվել է արոտավայրի այն ընդհանուր մակերեսը, որը անհրաժեշտ է նման քանակությամբ անասուններին սպասարկելու համար:

Վերոնշյալ տվյալների ուսումնասիրման հիման վրա որոշվել է՝

1. Նվիրաբերվող հողամասի փաստացի արդյունաբերական արժեքը
2. Նվիրաբերվող հողամասի կորստի հնարավոր իրական ազդեցությունը անասնապահության՝ համայնքում առկա անասուններին սպասարկելու համատեքստում:

### **Գյուղատնտեսական փորձաքննության արդյունքները.**

1. Նվիրաբերվող հողամասի փաստացի արդյունաբերական արժեքը

Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի գյուղամերձ արոտավայրերը /460հա./ ընկած են ծովի մակերևույթից 1950մ. բարձրության վրա, տափաստանային բնահողային գոտում և ձևավորվել են Սևանա լճի ջրերից ազատված տարածքներում, խոնավության տարբեր պայմաններում, որպես գետահովտային հողեր, որոնք սակավազոր են և ունեն ավազակավային մեխանիկական կազմ:

Մասնակի, ընտրանքային մեթոդով տարբեր հատվածներում ակտանդիտական եղանակով տեղազննված մոտ 100 հա արոտային տարածքը ամբողջությամբ դեգրադացված է, որը պայմանավորված է հիմնականում վաղ գարնանային և անկանոն արածեցման, հողի խտացման (ամրացման), դա նաև արդյունք է գյուղամերձ արոտավայրում կենդանիների գերձանրաբեռնվածության՝ պայմանավորված մենատնտեսների կենդանիները ամառային հեռագնաց արոտավայրերը տեղափոխելու սահմանափակ հնարավորություններով, ինչպես նաև հողի բերրիության անկմամբ:

Արոտային տարածքը իրենից ներկայացնում է հարթություն, որի կուլտուր-տեխնիկական վիճակը բնութագրվում է հետևյալ կերպ՝ զերծ ինչպես մակերեսին սփռված, այնպես էլ կիսաթաղված քարերից, գուղձապատ (միջինում 15% բուսական ծագում ունեցող բույսով՝ բոխշ 10-15սմ տրամագծով), բուսապատվածությունը շատ թույլ է (20-30%), բուսատեսակային կազմը աղքատիկ (հիմնականում պատված է շատ ցածր կերամիավոր ունեցող բույսով՝ սեզով), կենսաարդյունավետությունը շատ ցածր՝ առավելագույնը տարեկան 1g/հա:

### **Եզրակացություն՝ Անարդյունավետ արոտավայր**

2. Նվիրաբերվող հողամասի կորստի հնարավոր իրական ազդեցությունը անասնապահության՝ համայնքում առկա անասուններին սպասարկելու համատեքստում.

<sup>6</sup> Նշված տվյալը տրամադրվել է համայնքի կողմից՝ պաշտոնական գրությամբ:

Նշված ազդեցությունը գնահատելու համար որոշվել է Նվիրաբերվող արոտավայրի թույլատրելի բեռնվածությունը (ԱԹԲ) կամ արոտավայրի տարողունակությունը<sup>7</sup>: Այս ցուցանիշը ցույց է տալիս գյուղատնտեսական կենդանիների այն առավելագույն քանակը, որոնց կարելի է կերակրել արոտի միավոր տարածության (1հա) վրա արոտային շրջանում՝ առանց վնաս հասցնելու արոտի բուսածածկին: Արոտավայրի տարողության որոշումը կարևոր նշանակություն ունի, քանի որ թույլատրելի բեռնվածությունից մշտապես գերազանցումն առաջ է բերում արոտավայրերի դեգրադացում և կերահանդակը կորցնում է իր տնտեսական արժեքը:

ԱԹԲ-ը հաշվարկում են 1հա-ի վրա պայմանական խոշորի գլխաքանակով (ՊԽ), հետևյալ բանաձևով՝

$$\text{ԱԹԲ} = \text{Բ} / (\text{Պ} \times \text{S}), \text{ որտեղ}$$

**ԱԹԲ** - արոտավայրի թույլատրելի բեռնվածությունն է, գլուխ/արոտային շրջանում,

**Բ** - 1 հա արոտավայրի բերքատվությունը (կանաչ կամ չոր զանգ ված), կգ/հա,

**Պ** - պայմանական գլխի օրվա կերի պահանջը (կանաչ կամ չոր), կգ

**S** - արոտաշրջանի տևողությունը, օր:

Օրինակ՝ 1 հա արոտավայրի միջին բերքատվությունը՝ 4,000 կգ արոտականաչ, 1 պայմանական գլուխ խոշորի արոտակերի պահանջը՝ 50 կգ/օր, արոտաշրջանի տևողությունը՝ 150 օր

$$\text{ԱԹԲ} = 4,000 / (50 \times 150) = 0.53 \text{ գլուխ/հա}$$

Այսինքն, 0.53 գլուխ 1 հեկտարին, կամ 1 գլուխ պայմանական խոշորին (ՊԽ) միջինում պահանջվում է արոտային ժամանակահատվածում 1.89 հա արոտավայր (1 : 0.53): Նախիրի համար արոտատարածքը հաշվարկվում է ելնելով արոտի թույլատրելի բեռնվածությունից, և անասնագլխաքանակից (ՊԽ):

Այսպիսով, Նվիրաբերվող հողամասի դեպքում բերքատվության ցուցանիշը 40 անգամ ցածր է (1 հա արոտավայրի բերքատվությունը՝ 100 կգ արոտականաչ)՝

$$\text{ԱԹԲ} = 100 / (50 \times 150) = 0.013 \text{ գլուխ/հա}$$

Այսինքն, նվիրաբերվող հողամասի դեպքում 0.013 գլուխ 1 հեկտարին, կամ 1 գլուխ պայմանական խոշորին (ՊԽ) միջինում պահանջվում է արոտային ժամանակահատվածում 76.9 հա արոտավայր (1 : 0.013):

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝**

**Հիմք ընդունելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ Նվիրաբերվող հողամասի կորստի հնարավոր իրական ազդեցությունը համայնքում առկա անասուններին սպասարկելու համարեքսպում բավականին փոքր է և չի կարող նշանակալի ազդեցություն ունենալ համայնքում անասնապահությամբ զբաղվող մենաբնակիչների գործունեության վրա:**

Գյուղատնտեսի փորձագիտական եզրակացությունը նվիրաբերված գյուղատնտեսական հողակտորի (արոտավայր) արդյունավետության արժեքի վերաբերյալ կցված է Հավելված 4-ում:

<sup>7</sup> Տե՛ս «ԱՐՈՏԱՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ԵՎ ԴԱՇՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՄ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» Ուսուցողական ձեռնարկ, հեղինակ՝ գ.գ.թ. Գ.Ա. Թովմասյան.

## 6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### 6.1 Կիրառված մեթոդաբանությունը

Ուսումնասիրության համար կիրառված հիմնական մեթոդներ են ընտրվել առանցքային տեղեկատուների (ՄՏ) հետ հարցազրույցները եւ ֆոկուս խմբային (ՖԽ) քննարկումները, փաստաթղթերի վերլուծությունը, ինչպես նաեւ իրականացվել են հանդիպումներ եւ զրույցներ համայնքի ղեկավարության ներկայացուցիչների, համայնքի անդամների, նվիրաբերված արտավայրի հարակից տարածքների սեփականատերերի/գույքային իրավունք ունեցողների հետ:

ՄՏ հարցազրույցներին եւ ՖԽ քննարկումներին մասնակցելու նպատակով հրավիրվել են.

- Համայնքի բնակիչներ, որոնք ունեն կենդանիներ եւ զբաղվում են անասնապահությամբ;
- համայնքի նախարապաններ;
- համայնքի ղեկավարության ներկայացուցիչներ;
- նվիրաբերված արտավայրի հարակից տարածքների սեփականատերեր:

Բոլոր հարցազրույցները ձայնագրված են, սղագրված եւ վերլուծված:

Իրականացվել է նաեւ փաստաթղթերի, տրամադրված տվյալների եւ քարտեզների ուսումնասիրություն եւ վերլուծություն:

Անասնապահությամբ զբաղվող համայնքների անդամների հավաքագրման համար օգտագործվել են հետեւյալ հիմնական ցուցանիշները՝

- անասունների քանակն ու անասնապահության՝ որպես եկամտի հիմնական կամ ոչ հիմնական աղբյուր լինելը;
- էլեկտրակայանի կառուցման համար նվիրաբերված հողից բնակվելու հեռավորությունը;
- գենդերային բաշխումը:

Արդյունքում, տարանջատվել է երկու խումբ՝

ա) համայնքի անդամներ, ովքեր զբաղվում են անասնապահությամբ՝ որպես բիզնես եւ այն հանդիսանում է եկամտի հիմնական աղբյուր, եւ

բ) համայնքի անդամներ, որոնք ունեն քիչ քանակությամբ անասնազխաքանակ, եւ այն ծառայում է միայն ընտանեկան սպառման համար եւ ոչ թե որպես եկամտի հիմնական աղբյուր:

Ձնագնդի մեթոդով հավաքագրվել են անասնապահությամբ զբաղվող համայնքի անդամները՝ հաշվի առնելով վերոնշյալ խմբերի տարանջատումը, ինչպես նաեւ գենդերային բաշխումը:

Համայնքում հարցված անդամների թիվը որոշվել է համայնքից ստացված դեմոգրաֆիական տվյալների վերլուծության հիման վրա: ՖԽ և ՄՏ-ների հետ հարցազրույցների իրականացման մանրամասները ներկայացված են աղյուսակ 7-ում:

**Աղյուսակ 7. ՖԽ և ԱՏՀ-ների իրականացման մանրամասներն ըստ սեռի**

Հետազոտության մեթոդը և քանակը	Մասնակցությունն ըստ սեռի		Նեկայացված հետազոտության խումբ
	տղամարդ	կին	
6 ԱՏՀ	4	2	2 հարցազրույց են վարել նաև համայնքի վարչարարական գրասենյակի ներակացուիչների հետ (համայնքապետ և համայնքի վարչարարական աշխատակազմի ղեկավար), ինչպես նաև սեփականության իրավունք ունեցողի (վարձակալ) հետ, այն հողերի համար, որոնք հարակից են նվիրաբերված արոտավայրին <sup>8</sup> :
2 ՖԽ	14	6	ՖԽ քննարկումներից մեկը կատարվել է (բ) խմբի ներկայացուցիչների հետ, իսկ մյուսը՝ (ա) և (բ) տնային տնտեսությունների խմբերի կանանց հետ:
Ընդամենը	18	8	ԱՏ և ՖԽ կատարվել է 26 անասնապահի մասնակցությամբ:

ՖԽ-երի ստորագրված թերթիկները, ինչպես նաև հետազոտության լուսանկարները, ներկայացված են Հավելված 6-ում:

**6.2 Սոցիալական ազդեցության գնահատման արդյունքները**

**Անասնապահությամբ զբաղվելու պայմաններն ու նպատակները**

Համայնքի բնակչության հիմնական զբաղմունքներից է գյուղատնտեսությունը, այդ թվում եւ անասնապահությունը, ինչպես նաեւ առեւտուրը, պետական եւ հանրային ծառայությունը, արտագնա աշխատանքը եւ այլն: Ելնելով հետազոտության կարիքներից եւ թիրախ խմբի ընտրության սահմանված չափանիշներից՝ հետազոտության մեջ ներգրավված բոլոր մասնակիցները զբաղվում են անասնապահությամբ: Այս զբաղմունքը մասնակիցների գերակշռող մասին փոխանցվել է սերնդեսերունդ, այսինքն ընտանիքում անասնապահությամբ զբաղվել են նրանց ծնողներն եւ պապերը, ինչն էլ ավանդաբար շարունակվում է մինչ օրս: Մասնակիցները նաեւ փաստում են, որ անասնապահությանը զուգահեռ զբաղվում են նաեւ հացահատիկների, անասնակերի մշակմամբ եւ մշակաբույսերի աճեցմամբ:

Հետազոտության մասնակիցների շրջանում հստակորեն կարելի է տարանջատել երկու հիմնական խումբ, որտեղ առաջին խմբում կարելի է պայմանականորեն նշել այն մասնակցիներին, ում համար անասնապահությունը հանդիսանում է եկամտի հիմնական աղբյուր, եւ երկրորդ խումբը, ում համար անասնապահությունը ընտանիքի պարենա-մթերային կարիքների բավարարման տարբերակ է: Պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Կառավարության որոշման համաձայն 25 կովից եւ կամ 150 ոչխարից ավել

<sup>8</sup> Նվիրաբերված արոտավայրին հարակից հողերը համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրեր են: Միայն մեկ հողակտորն է խտտաձեւով, որը վարձակալության է տրված:

անասնազխաքանակ պահելու դեպքում տնտեսվարողը պետք է վճարի ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), եւ այս առումով մասնակիցները շեշտում են, որ թույլ չեն տալիս գլխաքանակի ավելացում սահմանված նիշից՝ չհարկվելու համար: Այնուամենայնիվ համայնքում կան եւ՛ ֆերմերներ, եւ՛ պարզապես անասնապահությամբ զբաղվող SS-ներ: Մասնակիցները նշում են, որ հիմնականում պահում են կով եւ ոչխար, քանի որ մսի եւ կաթի իրացման տեսակետից սրանք ամենապահանջվածն են, ինչպես նաեւ SS կարիքների բավարարման համար կարելի է, քանի որ երկու տեսակի անասունների կաթից էլ ստանում են պանիր, իսկ կովի կաթից նաեւ յուղ, մածուն, թթվասեր եւ այլն:

Հետզոտության մասնակիցների պնդմամբ անասուններին խնամելու, արածեցնելու եւ այլ աշխատանքների իրականացման համար վարձու աշխատողներ չեն պահում, դրանք անում են SS անդամների ուժերով եւ վարձում են միայն նախրապան՝ սեզոնին անասուններին դաշտում արածեցնելու տանելու նպատակով: Հարցվողները փաստում են, որ սեզոնին մեկ գլուխ անասունին դաշտում մեկ ամիս պահելու եւ արածեցնելու նպատակով նախրապանին վճարում են 2500-ից մինչեւ 3000 դրամ, ընդ որում նախրապանի ծառայություններից օգտվում են վերոնշյալ երկու խմբերի ներկայացուցիչները՝ անկախ պահվող անասնազխաքանակից, քանի որ անասուն պահելու կարելի է պայմաններից մեկն էլ հենց ամռան սեզոնին արտավայրում արածեցնելու տանելն է, կենդանուն հնարավոր չէ շուրջ տարին պահել գոմում:

### **Անասնապահությունը եկամտի հիմնական աղբյուր դարձնելու հնարավորությունները**

Ինչ վերաբերվում է անասնապահությունը որպես եկամտի հիմնական աղբյուր դիտարկելուն, ապա, ինչպես նշում են մասնակիցները, ներկայումս անասնապահությունը այնքան էլ եկամտաբեր զբաղմունք չէ, այն օգնում է SS որոշ կարիքներ հոգալ, մասնավորապես սննդապահովության որոշ հարցեր լուծել, սակայն չի կարող հանդիսանալ եկամտի հիմնական աղբյուր՝ ելնելով մի քանի պատճառներից. նախ եւ առաջ խոչընդոտող հանգամանքներից մեկը կաթի մթերման շուկայական ցածր գինն է, որը, կախված սեզոնից, տատանվում է 90-120 դրամի սահմաններում: Հատկապես ամռան շրջանում կաթը ունենում է մթերման նվազագույն գինը, քանի որ մթերողն այն ընդունում է՝ հաշվի առնելով կաթի յուղային տոկոսայնությունը, իսկ ամռանը անասուններն հիմնականում արածում են դաշտում՝ կանաչ խոտով, եւ շատ են շարժվում, որն էլ «հանգեցնում է» կաթի յուղային տոկոսայնության նվազեցման: Ըստ այդմ էլ մթերվում է նվազագույն արժեքով: Մասնակիցները նաեւ շեշտում են, որ մթերողները ոչ միշտ են բարեխիղճ գտնվում, եւ հաճախ էլ առանց հստակ չափումներ անելու են կաթը մթերում նվազագույն արժեքով՝ հստակ գիտակցելով, որ գյուղացին այլ ելք չունի, մթերքը շուտ փչացող է, եւ երկար պահելու դեպքում այն կարող է արագ կորցնել իր որակական հատկանիշները եւ ընդհանրապես պիտանի չլինել: Այսինքն գյուղացին չունի այլընտրանք, եւ կաթի այն քանակը, որը չի կարող յուրացվել SS կողմից, պետք է հանձնվի՝ անկախ կաթի արժեքից:

*Մասնակից տղամարդ - ես օրինակ 6 հատ անասուն եմ պահում, ու 10 շնչի համար շատ ա, ահագին ավելանում ա, էդ ավելացած մասն էլ հանձնում եմ, ամենաճիշտը էդ ա՝ հանձնում ենք: Թեկուզ էժան ա, բայց ստիպված տալիս ենք: Մնա ի՞նչ անենք:*

Հարցման մասնակիցները նաեւ նշում են, որ SS եկամուտները գոյանում են նաեւ աշխատավարձերից, թոշակներից եւ արտագնա աշխատանքներից ստացված եկամուտներից:

Բայց հավելում են, որ զբաղվածության մեջ կարելի է տեղ են գրավում մշակաբույսերի՝ ցորենի, կորնգանի, առվույտի, տարբեր բանջարեղենների՝ կարտոֆիլի, պոմիդորի, վարունգի, լոբու, կաղամբի եւ այլնի աճեցումն ու մշակումը: Մասնակիցները պնդում են, որ մշակման արդյունքում ստացված հատիկեղենի եւ բանջարեղենի հիմնական մասն օգտագործում են իրենց ՏՏ-ներում, իսկ ավելացած ծավալներն ենթարկում են պարենային, բնաիրային փոխանակման եւ կամ վաճառում են:

*Մասնակից կին – ես, օրինակ, էդ փոխանակումով եմ ապահովում աղջկաս սեպտեմբերի սաղ շորերը՝ սառոչկա ա, յուբկա ա, կոշիկ ա: Էդ ա մեր հիմնական շոր առնելու ձեռը:*

Այն հարցին, թե հիմնականում որտեղ են արածեցնում իրենց անասուններին, մասնակցիները փաստում են, որ ամռան սեզոնին հիմնականում անասուններին տանում են արածեցնելու հարեան գյուղերի արոտները, քանի որ այնտեղ ավելի հարմար է: Նրանք շեշտում են, որ նախկինում իրենց համայնքն ունեցել է բոլոր հարմարություններով հագեցած հեռագնա արոտավայր, որտեղ սեզոնին մնացել է 120-130 ընտանիք, ովքեր իրենց անասուններին պահել, արածեցրել են տվյալ արոտավայրում: Իսկ այժմ, Սովետական Միության փլուզումից հետո, այդ արոտավայր տանելու բոլոր պայմանները վերացել են. չկա ճանապարհ, չկա մնալու վայր, քանի որ նախկինը թալանվել է, չկա անգամ լույս եւ ջուր, ինչը անհնարին է դարձնում տվյալ արոտավայրում մի քանի ամիս մնալու եւ աշխատելու հարցը: Նաեւ կարելի էրագույն հանգամանք է այն, որ այդ հեռագնա արոտավայրում չկա կաթի մթերման կայան, ինչը եւս մեծ խոչընդոտ է աշխատանքների կազմակերպման համար:

Հարցման արդյունքում պարզ դարձավ նաեւ, որ նախկինում Մեծ Մասրիկ համայնքն ունեցել է եւս 2 հեռագնա արոտավայր, որոնք ունեցել են բոլոր անհրաժեշտ պայմանները անասնապահությամբ զբաղվելու համար, սակայն դրանք Կառավարության որոշմամբ անցել են հարեան Կուտական եւ Ակունք համայնքների ենթակայության տակ, ինչը նույնպես անդրադարձել է համայնքի անասնապահության վրա:

Ընդ որում մասնակիցների կարծիքով, ավելի հարմար է լինում օգտվել հարեան համայնքների արոտավայրերից, որոնց համար, իհարկե, նրանք վճարումներ են կատարում: Մասնակիցները նշում են, որ հարեան համայնքի արոտավայրից օգտվելու համար գանձվում է կոնկրետ սահմանված գումար, այսինքն որքան քիչ է արածեցվող անասունների գլխաքանակը, այնքան ավելի թանկ է ստացվում, իսկ որքան շատ է գլխաքանակը՝ այնքան ավելի մատչելի է: Հետեւաբար շատ անասուններ պահող ֆերմերները իրենց անասուններին տանում են հարեան համայնքների արոտավայրերը, իսկ քիչ քանակությամբ անասուններ ունեցողները պահում են իրենց կենդանիներին համայնքի ներքին ու հեռագնա արոտավայրերում:

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից՝ համայնքի ղեկավարությունը որոշում է կայացրել համայնքի արոտավայրերից օգտվելու համար վճար չգանձել՝ այդպիսով փորձելով թեթեւացնել համայնքի բնակիչների հոգսը եւ միաժամանակ մոտիվացնել անասնապահությամբ զբաղվելը:

Իսկ այն հարցին ի պատասխանին, թե արդյոք կարո՞ղ է անասնապահությունը համայնքի բնակիչների համար հիմնական եկամտի աղբյուր դառնալ հետագայում, հարցման մասնակիցները նշում են, որ դրա համար անհրաժեշտ է ձեռնարկել մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ առկա արոտավայրերի որակական հատկանիշների բարելավում, ֆերմերային տնտեսությունների ստեղծում, ինչպես նաեւ հեռագնա արոտավայրերում համապատասխան պայմանների ապահովում:



Հարցման մասնակիցները նաեւ փաստում են, որ անասնապահության զարգացումը հնարավոր կլինի, եթե այս ոլորտին համապատասխան ուշադրություն դարձվի կառավարության մակարդակով եւ: Ի հիմնավորում նշվում է այն հանգամանքը, որ համայնքի բնակիչների գերակշիռ մասը ունի վարկեր տարբեր բանկերում եւ վարկային կազմակերպություններում, եւ վերջին շրջանում մսի գնի շուկայական արժեքը զգալի բարձրացել է, ինչի արդյունքում անասնապահներից շատերը նախընտրում են մորթել իրենց անասուններին, վաճառել եւ վճարել վարկերն ու տոկոսադրույքները: Իսկ վարկեր վերցնելու նպատակները բազում են, սակայն համայնքի բնակիչների կողմից առավել շեշտվում են գյուղատնտեսական աշխատանքներ անելու նպատակով գումարային ներդրումներ անելու կարիքները: Հետեւաբար, եթե ցանկություն կա ոլորտը զարգացնելու, ապա պետական աջակցության կարիք է զգում գյուղացին՝ իր հիմնական խնդիրները լուծելու, այն է՝ նպաստող պայմաններով հեռագնա արտոններ, ֆերմերային տնտեսություններ ստեղծելու հարցում: Մասնակիցները շեշտում են, որ պակաս կարեւոր չէ համալիր միջոցառումների միջոցով արոտավայրերի որակական հատկանիշների պարբերական բարելավումը, որը կարող է լավագույնս խթանել անասնապահության զարգացումը: Սակայն սա լուրջ ֆինանսական եւ տեխնիկական ներդրումներ պահանջող գործընթաց է, որն առանց պետական աջակցության հնարավոր չէ կյանքի կոչել:

### **Նվիրաբերված արոտավայրի օգտագործումը**

Մասնակիցների պնդմամբ՝ համայնքի անասնապահների գրեթե 30-40%-ը իր անասուններին արածեցնում է հարեւան համայնքների արոտավայրերում, մոտավորապես 10%-ը իր անասուններին արածեցնում է համայնքի հեռագնա արոտավայրում, իսկ մնացած մոտ 50%-ը արածեցնում է նիրաբերված արոտավայրում եւ դրան հարակից արոտավայրերում. նվիրաբերված արոտավայրը հանդիսանում է մոտավորապես 465 հա արոտավայրի մի մասը եւ այս տարածքներն օգտագործվում են որպես հիմնական արոտավայրեր:

Ուսումնասիրության մասնակցիները նշում են, որ նվիրաբերված արոտավայրում իրենց անասուններին արածեցնելու տանում են հիմնականում քիչ քանակությամբ անասնազխաքանակ ունեցողները, քանի որ, ըստ պնդումների, տվյալ արոտավայրի բուսական ծածկույթը նոսր է եւ աղքատիկ, հողն աղի է, արոտավայրի դիրքից ելնելով բուսականությունը շուտ է այրվում եւ չորանում, որն էլ նվազեցնում է արածեցման ժամկետը (առավելագույնը է 1-1,5 ամիս մայիս-հունիս ամիսների ընթացքում): Հարցման ընթացքում մասնակցիները շեշտում են, որ նշված արոտավայրը հանդիսանում է ավելի շատ անասունների օդափոխության վայր, քանի որ, ինչպես արդեն նշվեց, դրա խոտածածկը քիչ է, բուսականությունը նոսր է եւ կարճ, ինչը նշանակում է, որ այն առավել նպատակահարմար է ոչխարներին արածեցնելու համար, քան կովերի, քանի որ վերջիններիս գլխի անատոմիական կառուցվածքը թույլ չի տալիս այդքան կորանալ եւ արածել, պնդում են մասնակցիները: Հետեւաբար, այդ արոտավայր տարվող անասունները կուշտ չեն վերադառնում, ինչի արդյունքում էլ կարիք է լինում լրացուցիչ կեր տալու:

*Տղամարդ մասնակից* – այնպես չի, որ ամբոջ ամառ անասունները ըտեղ արածում են, 1 ամիս 10 օր շատ շատ, դրանից հետո բուսական ծածկը վերանում է:

*Տղամարդ մասնակից* – մայիսից հետո ոչ մեկ ըտեղ անասուն չի տանում, ոչ մեկը, ես անասուն ունեմ, ես ըտեղ չեմ տանում, ասենք շատ աղքատիկ ա, ու երկրորդն էլ՝ շատ շուտ չորանում ա:

Մայիսի կեսերից արդեն չոր և, անձրեւ էլ չեկավ, 15 օր հետո արդեն պրծավ, դառնում և պռոստո ճանապարհ, էդ և իրողությունը:

Հարցվողները շեշտում են, որ վերջին մի քանի տարիների ընթացքում որեւէ արոտավայրից օգտվելու համար որեւէ վճարում չեն կատարել, քանի որ, ինչպես արդեն նշվել է, համայնքի ղեկավարությունը որոշել է, թեկու՛՛գ եւ ի վնաս իր շահերի, բայց չգանձել վարձավճարը՝ այդպիսով համայնքի բնակչի հոգսերը թեթեւացնելու եւ անասնապահությունը խթանելու միտում ունենալով: Իսկ այն հարցին, թե նվիրաբերված արոտավայրի փոխարեն հետագայում որտեղ կտանեն իրենց անասուններին արածեցնելու, մասնակիցները նշում են, որ կտանեն դրան հարակից տարածքը, առավել եւս, որ նվիրաբերված արոտավայրում չէին կարողանում թողնել անասուններին ողջ ամռան սեզոնի ընթացքում՝ բուսականության սակավ լինելու եւ շուտ չորանալու պատճառով:

Հարցվածները շեշտում են, որ նրանց համար որեւէ տարբերություն չկա՝ տանել նվիրաբերված արոտավայր, թե՛՛ դրան հարող մյուս տարածքները: Այսինքն այստեղ խնդիրը դիտարկվում է 2 տեսակետից՝ նվիրաբերված արոտավայրի ֆիզիկական մատչելիություն եւ այդ արոտավայրի արդյունավետություն՝ բուսական հագեցվածություն: Առաջին պայմանը կարելի է հարակից տարածքների բնակչների կողմից, իսկ երկրորդ պայմանը՝ այն անասնապահների, ովքեր ունեն շատ գլխաքանակ եւ պնդում են, որ այդ արոտավայր գնալով կենդանիները չեն կշտանում, այլ ընդամենը օդափոխվում են:

Ի վերջո հարցվածների գերակշիռ մասը կարծում է, որ նվիրաբերված արոտավայրի «կորուստը» որեւէ կերպ չի կարող անդրադառնալ համայնքի անասնապահության ծավալների եւ ոլորտի ապագայի վրա, քանի որ առանց այդ էլ առկա են այնպիսի գլոբալ խնդիրներ, որոնց լուծումը միայն կարող է իրավիճակը բարելավել: Իսկ տվյալ գրեթե 100 հա արոտավայրի օգտագործման հնարավորությունը կամ անհնարիությունը ոչինչ չի փոխում, ըստ նրանց կարծիքների:

### **Տեղեկացվածությունը Ծրագրի վերաբերյալ, հնարավոր ազդեցությունները, առավելություններն ու թերությունները: Ծրագրից ակնկալիքներ**

Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը ցուցաբերում էր բարձր տեղեկացվածություն Ծրագրի նպատակների եւ գործառույթների վերաբերյալ, ինչը ցույց է տալիս համայնքի բնակիչների մեծ հետաքրքրվածությունը Ծրագրով: Հարցվածների մեծամասնության կարծիքով ֆոտովոլտային կայանի կառուցումը համայնքին հնարավորություն կընձեռի վերածել արդյունաբերական խոշոր կենտրոնի, որն, անշուշտ, իր դրական ազդեցությունը կունենա համայնքի եւ նրա բնակիչների կյանքի ու կենսապայմանների բարելավման հարցում: Նրանք կարծում են, որ համայնքը կդառնա արդյունաբերական զարգացած կենտրոն, որը նաեւ աշխատատեղ կապահովի համայնքի բնակիչների համար: Համայնքին տրվելիք 80 մլն դրամի հանգամանքը եւս ողջունվում է հարցվածների գերակշռող մեծամասնության կողմից, քանի որ նրանք կարծում են, որ այն կծառայի միայն ի բարօրություն իրենց համայնքի եւ նրա բնակիչների: Հարցվածների փոքր զանգվածը անհանգստացած է նաեւ կայանի բնապահպանական անվտանգության խնդրով, սակայն մեծամասնությունը գտնում է, որ հասարակական քննարկման ժամանակ տրված տեղեկատվությունը այն մասին, որ կայանը բնապահպանական տեսանկյունից անվտանգ է, եւ չի կարող վնասել համայնքի բուսական, կենդանական աշխարհի գոյությանը, առավել եւս մարդկանց, հավաստի է, եւ պետք է լավատես լինել, քանի որ սա առաջադիմական քայլ է համայնքի համար, եւ առաջինն է լինելու ՀՀ-ում իր հզորությամբ ու կարողություններով:

Հարցվածների գերակշիռ մասը կարծում է, որ Ծրագրից ունեցած կարելու ազդեցությունն ակնկալիքներից է աշխատատեղերի ստեղծումը, քանի որ համայնքում, ըստ հնչած պնդումների, կա համապատասխան մասնագիտական ներուժ, որը կարելի է օգտագործել եւ՛ կայանի շինարարական աշխատանքների, եւ՛ հետագա շահագործման աշխատանքների ընթացքում:

*ՀՀ Կրկնաճանաչման մասնակից* – էդ կազմակերպությունը կարող է նաեւ հույս դնել տեղի աշխատուժի վրա: Մեր գյուղում լավ մասնագետներ շատ կան՝ էլեկտրիկներ, շինարարներ եւ այլն, որ կարան աշխատեն ծրագրում, թեկուզ շինարարության փուլում: Սա նաեւ մեր երեխաների հետագա կրթության մասին մտածելու լավ առիթ ա, արդեն կհասկանանք, թե ինչ մասնագիտություն ա պետք մեր երեխաներին, որ գնան սովորեն ու գան աշխատեն մեր գյուղում:

Մասնակիցները նաեւ կարծում են, որ շատ կարելու է այն հանգամանքը, որ տվյալ կայանի շահագործման արդյունքում համայնքային բյուջե կմտնի որոշակի գումար, եւ դա քիչ չէ համայնքի կարիքները հոգալու, ենթակառուցվածքները զարգացնելու, շինություններն ու ճանապարհները նորոգելու համար: Համայնքի բնակչության մի մասն էլ հույսեր է տածում, որ ստացված էլեկտրաէներգիան առավել մատչելի գնով կվաճառվի համայնքի բնակիչներին: Հատկանշական է նաեւ այն հանգամանքը, որ համայնքի հարցված բնակիչները համոզված են, որ այս կայանի կառուցումը կարող է մեծ խթան հանդիսանալ համայնքում տուրիզմի զարգացման համար: Նրանք կարծում են, որ սա համայնքում նոր ներդրողներ ու նոր հնարավորություններ ներգրավելու լավ ազդակ կարող է լինել: Մասնակիցները հավատացած են, որ ծրագրից քաղվող օգուտները շատ են, եւ շեշտում են, որ աջակցելու են դրա իրագործմանը՝ ի բարօրություն իրենց համայնքի:

*Տղամարդ մասնակից* – ես կարծում եմ, որ էս ծրագիրը գյուղի զարգացման կբերի, գյուղի նախնադարյան, համայնական կարգերից անցում կանենք, կարգերը կփոխվի:

*ՀՀ Կրկնաճանաչման մասնակից* – մարդը կով է պահում, համարում է իրեն ոչ գործազուրկ, բայց մեզ պետք է, որ գյուղը դառնա արդյունաբերական գյուղ:

**Հարակից հողակտորների սեփականատերերի/օգտագործողների վրա հնարավոր ազդեցությունները**

Նվիրաբերված արոտավայրին մոտ գտնվող հողակտորները համայնքային արոտավայրեր են: Դրանցից միայն մեկ հողակտորն է արոտավայր հանդիսանում, որը ներկայումս վարձակալված է համայնքի բնակիչներից մեկի կողմից: Մյուսները ծանրաբեռնված չեն սեփականության որևէ իրավունքով: Բացի այդ, վարձակալը մեկ այլ վարելահող ունի այդ հողին կից, սակայն այն հեռու է նվիրաբերված հողից: Վարձակալը որևէ ազդեցություն չի տեսնում իր այդ հողի վրա ՖՎ կայանի կառուցումից: Նա մուտքի հնարավորություն ունի դեպի իր վարձակալված արոտավայրը նվիրաբերված հողի հակառակ կողմից, որը չի փակվելու շինարարության հետևանքով:

**Այլ հնարավոր ազդեցություններ:**

Հետազոտության ընթացքում համայնքի բնակիչներին (այդ թվում՝ մոտակա հողի վարձակալին) հարցրել են, թե արդյոք հողի նվիրատվությունը չի սահմանափակում դրան մոտ գտնվող հաղորդողների օգտագործումը, մասնավորապես՝ նվիրաբերված հողակտորին մոտ գտնվող ջրային ռեսուրսների օգտագործումը: Համայնքի բնակիչները որևէ խնդիր չեն նշել այս կապակցությամբ: Նույն հարցը հաստատվել է նաև Մեծ Մասրիկ համայնքի ղեկավարության կողմից:

### **6.3 Կանանց ներգրավվածությունը անասնաբուժության մեջ (Ծրագրի գենդերային զգայունությունը)**

Գենդերային զգայունության տեսանկյունից ծրագրի ազդեցության գնահատումը որոշելու նպատակով՝ ՖԽ քննարկումներից մեկը իրականացվել է կանանց տնային տնտեսությունների խմբերի հետ (ա) համայնքի անդամներ, ովքեր զբաղվում են անասնապահությամբ՝ որպես բիզնես եւ այն հանդիսանում է եկամտի հիմնական աղբյուր եւ բ) համայնքի անդամներ, որոնք ունեն քիչ քանակությամբ անասնազվիսաքանակ, եւ այն ծառայում է միայն ընտանեկան սպառման համար եւ ոչ թե որպես եկամտի հիմնական աղբյուր: Միևնույն ժամանակ, գենդերային հարցերով խորհրդատվություններ են իրականացվել համայնքի կանաց հետ ՀԼ ընթացքում:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ Մեծ Մասրիկ համայնքում կանայք ներգրավված չեն անասուններին արածեցնելու գործում, կանայք հիմնականում զբաղված են կաթի վերամշակման եւ կաթնամթերային արտադրանքի ստացման աշխատանքներով, ինչպես նաեւ ներգրավվում են ստացված մթերքի վաճառքի եւ փոխանակման գործընթացներում: Մեծ Մասրիկի կանայք ծրագրից բացասական ազդեցություն չեն կրում, ավելին, նրանք դիտարկում են ծրագիրը որպես հետագա աշխատանքի հնարավորություն համայնքի տարբեր մասնագետների համար: Որպես իրենց համայնքի ամենամեծ առավելություններից մեկը՝ կանայք նշում են կրթության համեմատաբար բարձր մակարդակը, ինչը կարող է հետագայում օգտագործվել ծրագրի իրականացման ընթացքում: ՖԽ-երի մասնակիցները հիմնականում հաստատել են այն տեղեկատվությունը և կարծիքները, որոնք հավաքագրվել են ՀԼ, ԱՏ և այլ ՖԽ-երի միջոցով:

## **7. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԼՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ**

Համաձայն ՀԲ քաղաքականության պահանջների՝ ԾԱԵԱ և ծրագրի այլ շահառուներին պետք է պատշաճ կերպով խորհրդատվություն տրամադրել և հնարավորություն տալ մասնակցել ծրագրի նախապատրաստական ու իրականացման բոլոր փուլերին:

Հանրային լսումների ընթացքում համայնքապետին, հավանական ԱԵԱ-ներին և այլ շահառուներին տեղեկություններ են հաղորդվել ծրագրի, ժամանակացույցի, հնարավոր ազդեցությունների ու փոխհատուցման ընթացակարգերի վերաբերյալ, ինչպես նաև արևային կայանի կառուցման համար համայնքային հողի նվիրատվության մասին: Հատուկ հայտարարություն է հրապարակվել համայնքապետարանի գրասենյակում, ինչպես նաև տարածվել է ծրագրի կայքի ու սոցիալական լրատվամիջոցների միջոցով: Հայտարարությունը նաև հրապարակվել է տեղական տպագիր մամուլում:

Հանրային լսումների ընթացքում համայնքի բնակիչներին տեղեկացվել է Ծրագրի փուլերը և պայմանները, հնարավոր բնապահպանական ու սոցիալական ազդեցությունները, առաջարկվող մեղմացնող միջոցառումները, հողի նվիրատվության վերաբերյալ մանրամասները, ինչպես նաև

այն ազդեցությունները, որոնք կարող են ծագել օդային հաղորդալարերի ու մուտքի ճանապարհների կառուցման ընթացքում: Հատուկ ուշադրության են արժանացել համայնքի այն անդամները, ովքեր կենդանիներ են պահում և օգտվում են արոտավայրերից՝ հասկանալու համար նրանց դիրքորոշումը համայնքային արոտավայրի նվիրատվության առնչությամբ և ծրագրի հավանական դրական ու բացասական ազդեցությունները համայնքի վրա ու, մասնավորապես, իրենց գյուղատնտեսական գործունեության վրա:

ՀԼ-ների ընթացքում ներկայացված օրակարգը հետևյալն էր՝

- Ծրագրի նախագծման մշակում
- Ծրագրի իրականացման համար ՀՎԷԷ հիմնադրամի կողմից պահանջվող մասնագետների ներկայացում
- Մեծ Մասրիկ համայնքում արևային կայանի կառուցման իրականացման ու կազմակերպման ընթացքների ու փուլերի ներկայացում
- Ծրագրի իրականացման ընթացքում ի հայտ եկող հնարավոր բնապահպանական ու սոցիալական հարցերի ու ձեռնարկվելիք մեղմացնող միջոցառումների քննարկում
- Բողոքների լուծման մեխանիզմի մասին տեղեկատվություն
- Հարց ու պատասխան:

ՀԼ մասնակցել են հետևյալ անձիք.

- 1) Ռուբեն Գեորգյան – «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիր» ղեկավար
- 2) Արմեն Ասատրյան – համայնքի ղեկավար
- 3) Էդիկ Պողոսյան – համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավար
- 4) Սոնա Պողոսյան – վերաբնակեցման մասնագետ
- 5) Լիլիթ Դիլանյան – սոցիոլոգ, հանդիպման քարտուղար
- 6) համայնքի բնակիչներ, հետաքրքրված անձիք՝ 13 հոգի (13 տղամարդ):

Ընդհանուր առմամբ 13 մարդ համայնքից մասնակցել է ՀԼ-ին: Մասնակիցների ցանկը կցված է Հավելված 8-ում:

Միևնույն ժամանակ, համայնքի 26 անդամներ մասնակցել են ԱՏ և ՖԽ-երին (մանրամասների համար՝ բաժին 6-ում ներկայացված աղյուսակ 7): Այսպիսով, ընդհանուր թիվը կազմում է 39, որոնցից 8 կին (20%): Համայնքի բոլոր բնակիչները տեղյակ են ծրագրին ընդհանուր առմամբ, սակայն, մարդկանց որոշ մասը տեղյակ չէ ծրագրի մանրամասներից, որոնց և դրանք տրամադրվել են: Մարդիկ կողմ են ծրագրին, քանի որ այն կբարելավի համայնքի տնտեսական իրավիճակը և այլ ներդրումներ կբերի, ինչպես նաև աշխատանքի հնարավորություն կապահովի: ՀԼ ընթացքում Ծրագրի ԲԼԽ ներկայացվել է համայնքի անդամներին: Քննարկված առանցքային խնդիրները, հանդիպման ընթացքում բարձրացված հարցերը ներկայացված են ստորև աղյուսակում (մանրամասների համար տես Հավելված 2՝ Հանրային իրազեկման հանդիպման արձանագրությունը): Որոշ դեպքերում, մարդիկ պարզապես իրենց կարծիքն ու ակնկալիքներն էին արտահայտում ծրագրի վերաբերյալ, որոնք նույնպես ամփոփված են ստորև աղյուսակում:

ՀՀ հայտարարությունը և Տեղեկատվական թերթիկը կցված են Հավելված 7-ում, իսկ արձանագրությունը՝ Հավելված 8-ում:

**Աղյուսակ 8. ՀՀ ընթացքում քննարկված հարցեր**

#	Հարցեր	Պատասխանների ամփոփում, մասնակիցների կարծիք, նշումներ ու առաջարկներ
1	<p><b>ԱԵԱ հարց1-</b> Կայանի կառուցումը ենթադրում է նոր աշխատատեղերի ստեղծում:</p>	<p>Ռ. Գեորգյան – այո, բայց աշխատանքների 2 փուլ է նախատեսվում իրականացնել, եւ մոտավորապես ուղղակի 20 աշխատատեղ կստեղծվի ու կստեղծվեն նաեւ անուղղակի աշխատատեղեր: Նաեւ ուզում եմ ասել, որ կայանի կառուցմամբ գյուղը ճանաչելի կդառնա: Ու երկարաժամկետ հեռանկարում կարող է ավելի եկամտաբեր լինել այս Ծրագիրը:</p>
2	<p><b>ԱԵԱ կարծիք</b>– ես ունեմ 2 կով, ուղղակի պահում եմ, բայց եթե ունենամ աշխատատեղ, կով չեմ պահի, ու 2 կով ավել կպահի նա, ում համար դա եկամտի աղբյուր է, որովհետեւ դա իրեն ձեռ կտա: Անասնապահությունը եկամտի հիմնական աղբյուր չի, ավելի կարեւոր է աշխատատեղը, դրանով գյուղը կզարգանա: Թե չէ 110-120 դրամով կաթ մթերելը օգուտ չի տալիս, դրա համար անասնապահության վրա կենտրոնանալ պետք չի:</p> <p><b>ԱԵԱ կարծիք</b> – Երբ մարդը կով է պահում, համարում է իրեն ոչ գործազուրկ, բայց մեզ պետք է, որ գյուղը դառնա արդյունաբերական գյուղ, դրա համար բացասական երեւոյթների վրա պետք չէ ուշադրություն դարձնել, իսկ Ծրագրի դրական կողմերը ահռելի են:</p> <p><b>ԱԵԱ կարծիք</b> – անասնապահությանը էս Ծրագիրը վնաս չի տալիս, ես կով շատ ունեմ, բայց կողմ եմ Ծրագրին, ես ուրիշ տեղ եմ անասուն պահում, գումար եմ տալիս արոտավայրի համար եւ արածեցնում եմ, նվիրաբերված արոտը 2 ամիս անգամ չի հերիքում անասունին:</p> <p><b>ԱԵԱ կարծիք</b> - էդ հողը աղի է , բուսածածկույթը քիչ է, անասունին լրացուցիչ կեր ենք տալիս, որ հագենա, ուղղակի դուրս ենք հանում արոտ էլի:</p>	<p>Ս. Պողոսյան – Շնորհակալություն կարծիքների համար: Ցանկանում եմ նշել, որ մենք չենք անտեսի որևէ հնարավոր ազդեցություն: Մենք պարզապես պետք է հասկանանք, թե ինչ տեսակի ազդեցություն է Ծրագիրն ունենալու համայնքի վրա: Նաև, ուզում եմ նշել, որ համայնքը հողն է տրամադրում, իսկ ներդրողն էլ պարտավորվելու է համայնքին գումար հատկացնել՝ համայնքի զարգացման նպատակով:</p>
	<p><b>ԱԵԱ հարց 2.</b> - հողը հատկացվում է:</p>	<p>Ս. Պողոսյան – ոչ, համայնքը հողը նվիրաբերում է, իսկ ներդնողը նվիրաբերելու է 80 մլն դրամ:</p>

#	Հարցեր	Պատասխանների ամփոփում, մասնակիցների կարծիք, նշումներ ու առաջարկներ
		<p>Նաեւ վճարելու է գույքահարկի եւ հողի հարկի գումարները մոտավորապէս 20 տարի, տարեկան 6 մլն դրամ:</p> <p>Ռ . Գեւորգյան – այս շաբաթ այդ գործարքի համաձայնությունը կստանանք կառավարությունում, ու ակնկալում ենք, որ մարտի 7-ին արդեն կունենանք մրցույթի հաղթող, գումարը կփոխանցվի համայնքապետարանի համար եւ նոր հողը կնվիրաբերվի: Նույնիսկ եթե հողը հետագայում վերադարձվի համայնքին, գումարը հետ չի կարող վերցվել: Այսպիսին է պայմանավորվածությունը:</p>
	<p><b>Ա.Ասատրյան (համայնքապետ)</b> – Ա . Ասատրյան – մենք պլանավորում ենք համայնքի մանկապարտեզը վերանորոգել, ջրագիծ անցկացնել, ֆուտբոլի հրապարակ կառուցել, կոմբայն եւ այլ սարքեր գնել, որովհետեւ մեր ունեցածն արդեն մաշված է, նաեւ անհրաժեշտ է փողոցների լուսավորությունը ապահովել, ճանապարհներ կառուցել: Մի խոսքով, շատ խնդիրներ ունենք, որոնք պետք է լուծել: Ես էլ հարց տամ . համայնքն այդքան ներդրում է անում, իսկ ներդրողն ինչի՞ է պատրաստ:</p>	<p>Ս . Պողոսյան – Ինչպէս նշվել է, ներդրողը տրամադրելու է 80 մլն դրամը որպէս համայնքի զարգացման վճար: Եթե ներդրողն իր ցանկությամբ այլ ներդրումներ եւս ուզենա անել, կանի, բայց որեւէ այլ պարտադիր պայման մենք չունենք: Սակայն, երկարաժամկետ ներդրող է, 20 տարի այստեղ գործունեություն է ծավալելու, եւ ուզի-չուզի ինտեգրվելու է համայնքին, կարծում եմ:</p> <p>Ռ . Գեւորգյան – Այո, որեւէ այլ պարտավորեցնող կետ չունենք, բայց մրցույթի բոլոր մասնակիցները լուրջ միջազգային կազմակերպություններ են:</p>
	<p><b>ԱԵԱ կարծիք</b> –հաղթող կազմակերպությունը կարող է նաեւ հույս դնել տեղի աշխատուժի վրա: Մեր գյուղում լավ մասնագետներ շատ կան՝ էլեկտրիկներ, շինարարներ եւ այն, որ կարան աշխատեն ծրագրում, թեկուզ շինարարության փուլում: Սա նաեւ մեր երեխաների հետագա կրթության մասին մտածելու լավ առիթ է, արդեն կհասկանանք, թե ինչ մասնագիտություն է պետք մեր երեխաներին, որ գնան սովորեն ու գան աշխատեն մեր գյուղում:</p>	<p>Ս . Պողոսյան – Այո, իհարկե, Ներդրողը կարող է տեղական աշխատուժն օգտագործել, եթե համապատասխան մասնագետներ առկա լինեն:</p>
3	<p><b>ԱԵԱ հարց 3 .</b> – իսկ էկոլոգիայի առումով որեւէ բացասական ազդեցություն ունի՞:</p>	<p>Ռ . Գեւորգյան – կունենար, եթե կայանը աշխատեր կոնցենտրացված էներգիայի սկզբունքով, բայց սա ֆոտովոլտային է, դրա պանելները տանիքներից չեն տարբերվում, դրանք ընկալում են էներգիայի 20%-ը, իսկ դրանց հովի տակ շատ լավ աճում են բույսերը, քանի որ ավելի խոնավ է լինում: Մենք հետազոտություն ունենք,</p>

#	Հարցեր	Պատասխանների ամփոփում, մասնակիցների կարծիք, նշումներ ու առաջարկներ
		որ էկո համակարգին վնաս չի տալիս այս տիպի կայանը: Մեղուներին էլ չի վնասում, աղմուկ, վիբրացիա, ռադիացիա չունի, թունավոր նյութեր չեն արտազատվում:

ՎԲՇ-ի ներքո ԲԼԽ է մշակվել, որը ներկայացվել է համայնքի բնակիչներին ՀԼ ընթացքում ինչպես բանավոր, այնպես էլ ներառված է եղել համայնքի անդամներին բաժանված տեղեկատվական թերթիկի մեջ՝ համապատասխան կոնտակտային տվյալներով (տես Հավելված 7): Հաշվի առնելով այն փաստը, որ համայնքի ոչ բոլոր անդամներն են կարող մասնակցել հանրային իրազեկման հանդիպումներին՝ մի շարք տեղեկատվական թերթիկներ թողվել են համայնքապետարանում՝ դրանք մարդկանց բաժանելու նպատակով:

### 8. Եզրակացություններ

1. Համայնքի զարգացման համար սահմանված վճարը պետք է փոխանցվի Ներդրողի կողմից Մեծ Մասրիկ համայնքի հաշվին՝ նախքան Կառավարության աջակցության համաձայնագրի կնքումը և նախքան հողի փոխանցումը Ներդրողին:
2. Համայնքի անդամների 55.3 % (2000)-ը ներգրավված են գյուղատնտեսական գործունեության մեջ: Որի հիմնական ոլորտը մշակաբույսերի մշակում է և հարակից գյուղատնտեսական աշխատանքները, և միայն դրանից հետո՝ անասնապահությունը:
3. Համայնքի անասնապահությամբ զբաղվողները կարող են բաժանվել երկու խմբի՝ առաջին խմբի համար անասնապահությունը եկամտի հիմնական աղբյուր է, որը կազմում է համայնքի ընդհանուր 915 ՏՏ-ների 2%-ը (18 ՏՏ-ներ): Այսինքն, գյուղացիներ են, ովքեր աշխատանքային հնարավորություններ են նաև ապահովում համայնքի այլ անդամների համար: Իսկ երկրորդ խումբը ներառում է մարդկանց, ում համար անասնապահությունը միայն իրենց ընտանիքի կարիքների համար է. ՏՏ-ների ընդհանուր թվի 40%-ը (367 ՏՏ-ներ): Համայնքի անդամների մեծամասնության համար անասնապահությունը սնունդ ստանալու միջոց է, և միայն փոքր խմբի համար այն հանդիսանում է եկամտի հիմնական աղբյուր, ինչը, այնուամենայնիվ, աջակցության կարիք ունի՝ զարգացման ու արդյունավետության տեսանկյունից:
4. Հարցման ենթարկված բոլոր անասնապահներն էլ ամռան սեզոնին վարձում են նախրապանների, ովքեր տանում են անասուններին արածելու համայնքի արոտները կամ հարևան համայնքների արոտները: Մեկ գլուխ անասուն մեկ ամիս արածեցնելու տանելու համար նախրապանը վարձատրվում է 2500-3000 դրամի չափով:
5. Անասնապահությունը կարող է արդյունավետ լինել համայնքի բնակիչների համար միայն, եթե այն դառնում է նրանց բիզնեսը, այսինքն՝ անասնաբուծական ֆերմա, որը գործում է համապատասխան կանոնների ներքո: Սա ենթադրում է իր սեփական աշխատանքային ցիկլերը, որոնք շահույթ են բերում, իսկ ամենակարևոր գործոնը հանդիսանում է համապատասխան արոտավայրերի առկայությունը: Այս առումով, հարևան համայնքների



արոտավայրերը օգտակար կարող են լինել: Դրանք օգտագործվում են ամռանը Մեծ Մասրիկ համայնքի բնակիչների կողմից համապատասխան վճարի դիմաց: Անասնապահության զարգացման ու արդյունավետության խոչընդոտ է հանդիսանում նաև համայնքից հեռու գտնվող արոտավայրերում մարդկանց մնալու ու աշխատելու համար պայմանների բացակայությունը, ինչպես նաև կաթի մթերման ցածր շուկայական արժեքը: Դա չի արդարացնում ծանր աշխատանքը, այսինքն՝ կաթը մթերվում է այնքան ցածր գներով, որ այն չի արդարացնում կատարված ծախսերն ու ջանքերը: Այդ իսկ պատճառով, ոլորտը զարգացնելու խթան չի լինում:

6. Համայնքի հողերի մեծամասնությունը վարելահողեր են (մետ 70%): Այսպիսով, մեկ այլ կարևոր գործոնը մշակաբույսերի ու բանջարեղենի մշակումն է, իսկ դրանց վաճառքը հանդիսանում է համայնքի բնակիչների մեկ այլ հիմնական գործունեություն (հիմնականում սեփական SS-ներ): Սա նշանակում է, որ նրանք օգտագործում են ստացված ապրանքը իրենց SS-ների կարիքների համար, իսկ ապրանքի մի մասն էլ փոխանակվում կամ վաճառվում է: Համայնքի խորհրդի ղեկավարի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ վարելահողերը հիմնականում ամբողջությամբ մշակվում են:
7. Արոտավայրը ընդհանուր հողի 12.9% է կազմում (465 հա, ներառյալ՝ նվիրաբերված հողակտորը), ուստի, նվիրաբերված 97.4 հա հողը հավասար է ընդհանուր վարելահողերի 20.9% և համայնքին պատկանող ընդհանուր հողերի 2.7%:
8. Համայնքի բնակչության մեծամասնությունը, ովքեր պահում են քիչ գլխաքանակով խոշոր ու մանր եղջերավոր անասուններ, իրենց անասուններին արածեցնում են ֆոտովոլտային կայանի կառուցման համար նվիրաբերված և դրան հարակից արոտավայրերում, քանի որ դա գյուղի ենթակայության տակ գտնվող միակ մոտ արոտավայրն է: Համայնքն ունի նաև հեռագնա արոտավայրեր, ուր իրենց անասուններին արածեցնելու են տանում հիմնականում այն անասնապահները, ովքեր պահում են շատ անասուններ, այսինքն՝ ֆերմերները: Սակայն, պետք է նշել, որ չկա հեռագնա արոտավայր տանող բարվոք ճանապարհ և չկան համապատասխան պայմաններ, ինչը մեծ խոչընդոտ է անասնապահության իրականացման համար:
9. Նվիրաբերված արոտավայրը «կորցնելուց» հետո համայնքի բնակիչները կօգտվեն դրան հարակից արոտավայրերից, համայնքին պատկանող հեռագնա արոտավայրերից, ինչպես նաև կշարունակեն օգտվել հարևան համայնքների արոտավայրերից: Հաշվի առնելով արդեն ֆիքսված այն հանգամանքը, որ նվիրաբերված արոտավայրից հիմնականում օգտվում են քիչ գլխաքանակով անասուններ ունեցող համայնքի բնակիչները՝ հստակորեն տարանջատվում է անասնապահների երկու խումբ. առաջին խումբը հիմնականում չէր օգտվում նվիրաբերված արոտավայրից, քանի որ ապրում է Մեծ Մասրիկ համայնքի այն հատվածում, որը հարակից է հարևան համայնքի և դրան պատկանող արոտավայրերի հետ: Հետևաբար, այս խումբն իր անասուններին այսպես, թե՛ այնպես արածեցնում էր հարևան համայնքի արոտավայրերում, և նիրաբերված արոտավայրից օգտվելու անհնարիությունը որևէ կերպ չի անհանգստացնում այս խմբի ներկայացուցիչներին: Երկրորդ խմբում ներգրավված են այն անասնապահները, ովքեր բնակվում են Մեծ Մասրիկ համայնքի այն հատվածում, որտեղից իրենց անասուններին տանում են արածեցնելու նվիրաբերվող և հարակից արոտավայրերում, և սրանք են ծառայում որպես հիմնական արոտավայր:

10. Որոշ հարցվածներ կարծում են նաև, որ հնարավոր է անասնազվխաքանակի նվազեցում, քանի որ հետագայում միգուցե դժվար լինի այլ՝ ավելի հեռու արոտավայրեր տանելը: Մասնավորապես այստեղ խոսքը գնում է այն անասնապահների մասին, ովքեր մոտ են ապրում նվիրաբերված արոտավայրին, և նրանց համար նախընտրելի էր տանել տվյալ տարածք՝ կենդանիներին արածեցնելու համար: Մյուս հատվածն էլ կարծում է, որ կենդանիների՝ այդ արոտավայրից օգտվելու անհնարինության դեպքում պետք է ավելացնեն լրացուցիչ կերի քանակը, քանի որ անասունները չեն հագենա, իսկ սա արդեն խնդիր է, քանզի ավելացնում է յուրաքանչյուր անասունի վրա կատարված ծախսի չափը, իսկ անասնապահությունից ստացված եկամուտը առանց այդ էլ մեծ չէ: Սակայն նվիրաբերված արոտավայրի կորուստը զգալի ազդեցություն չի ունենա նաև երկրորդ խմբի վրա, քանի որ, եթե անասունները լավ չկերակրվեն նվիրաբերված և հարակից արոտավայրերում, նրանք կարող են կենդանիներին տանել համայնքի հեռագնա արոտավայրեր կամ հարևան համայնքների արոտավայրեր:
11. Համաձայն գնահատողի եզրակացության՝ նվիրաբերված գյուղատնտեսական հողի (արոտավայր) շուկայական արժեքը կազմում է 19.468.180 ՀՀ դրամ, մինչդեռ դրա կադաստրային արժեքը՝ 73.005.675 ՀՀ դրամ է: Համայնքի զարգացման վճարը, որը փոխանցվելու է համայնքին, 80 մլն ՀՀ դրամ է, ինչը մի փոքր ավել է, քան հողակտորի կադաստրային արժեքը և մոտ 4 անգամ ավել է, քան հողակտորի շուկայական արժեքը:
12. Նվիրաբերված արոտավայրը չունի բավարար քանակության բուսածածկ, ինչի պատճառով տվյալ տարածքում արածեցվող անասունները չեն հագնում, ու անասնապահները ստիպված են լինում լրացուցիչ կեր տալ անասուններին: Այս արոտավայրն առավել հարմար է ոչխարներին արածեցնելու համար, քան կովերի, քանի որ վերջիններիս գլխի անատոմիական կառուցվածքը թույլ չի տալիս այդքան կորանալ և արածել: Նվիրաբերված արոտավայրի արդյունավետության արժեքի վերաբերյալ գյուղատնտեսի փոխձագիտական եզրակացության համաձայն՝ նվիրաբերված հողակտորը *“անարդյունավետ արոտավայր է”* և նվիրաբերված հողակտորի կորստի հնարավոր իրական ազդեցությունը, կենդանիների կարիքների համար ծառայելու տեսանկյունից, շատ փոքր է. միայն 1.27 կենդանի՝ ըստ գյուղատնտեսական եզրակացության: Եվ, ինչպես նշվել է համայնքի բնակիչների կողմից, երբեմն նրանք պարզապես տանում են կենդանիներին այնտեղ զբոսնելու, սակայն դա կենդանիների համար կերի/խոտի հիմնական աղբյուր չի հանդիսանում: Նվիրաբերված հողի օգտագործողները կարող են վերականգնել այն հարևան արոտավայրերից կամ շարունակեն գնել մի փոքր ավել կեր: Ուստի, դա չի կարող զգալի ազդեցություն ունենալ համայնքի անհատ անասնապահների գործունեության վրա:
13. Մեծ Մասրիկ համայնքում կանայք հիմնականում ներգրավված են անասնապահության մեջ, սակայն նրանց պարտականությունները սահամանափակվում են կաթ կթելով և դրանից բազմազան կանթամթերքներ՝ թթվասեր, մածուկ, պանիր, կարագ, կաթնաշոռ, ռեժան ստանալով: Կանայք ներգրավված են նաև ստացված կաթնամթերքների փոխանակման ու վաճառքի գործընթացներում: Այդ իսկ պատճառով, ենթադրվում է, որ ծրագրի շրջանակում արոտավայրի նվիրատվությունը ազդեցություն չի ունենա կանանց վրա:

14. Համայնքի բնակիչները տեղեկացված են Ծրագրի, դրա նպատակների ու գործառույթների վերաբերյալ, ինչը ցույց է տալիս համայնքի բնակիչների մեծ հետաքրքրվածությունը: Համայնքում ֆոտովոլտային կայանի կառուցումը հնարավորություն կտա այն դարձնել արդյունաբերական կենտրոն, որը աշխատատեղեր կապահովի համայնքի բնակիչների մի մասին, ինչպես նաև տուրիզմի զարգացման հնարավորություններ կընձեռի, քանի որ սա կլինի նման հզորություն ունեցող առաջին կայանը հանրապետությունում, ինչն էլ ուշադրություն կգրավի համայնքի հանդեպ՝ թե՛ ներդրողների, թե՛ զբոսաշրջիկների առումով: Մեծ Մասրիկ համայնքի բյուջեն կունենա տեղական ընկալումներին համապատասխան խոշոր ավելացումներ՝ ֆոտովոլտային կայանի կողմից վճարված հարկերի տեսքով, ինչը ևս կծառայի համայնքի կարիքներին:
15. Համայնքի բնակիչներին պատշաճ կերպով ներկայացրել են Ծրագրի փուլերն ու պայմանները, հնարավոր բնապահպանական ու սոցիալական ազդեցություններն ու մեղմացնող միջոցառումները, հողի նվիրատվության մանրամասները, ինչպես նաև ՕՀԳ-երի ու մուտքի ճանապարհների կառուցման ընթացքում առաջացող հնարավոր ազդեցությունները: Հանրային լսումների ընթացքում բնակիչներին է ներկայացվել նաև ԲԼԽ-ը:

Այսպիսով, Մասրիկ 1 ՖՎ կայանի կառուցման Ծրագրի դեպքում հողի կամավոր նվիրատվությունը արդարացված է հետևյալ պայմաններով՝

- (i) Ծրագրի ազդեցությունները չեն հանգեցնում տնային տնտեսությունների տեղափոխման կամ ՏՏ-ների եկամտի ու ապրուստի միջոցների կորստի, ինչը կարելի է տեսնել սոցիալ-տնտեսական հետազոտության մեջ,
- (ii) Ազդեցության ենթակա համայնքը իր պատրաստակամությունն է հայտնում ՀՀ-ին նվիրաբերել ազդեցության ենթակա համայնքի սեփականություն հանդիսացող հողը՝ Ծրագրի իրականացման նպատակով, ինչը նշված է հանրային հանդիպումների արձանագրությունների մեջ,
- (iii) Համայնքին խորհուրդ է տրվում օգտվել ՀԶՎ-ից, որը վճարվելու է Ներդրողի կողմից ոչ միայն համայնքի խնդիրները լուծելու համար, այլև հեռագնա արտավայրերում պայմանները բարելավելու նպատակով:

# ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՂՈՒՄ ՄԵԾ ՄԱՍԻԿ ՀԱՄԱՅՆՔԻՑ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մեծ Մամուրիկ համայնք

Սոցիալ-ժողովրդագրական տվյալներ, 2018թ.

Հն	Անվանում	Տվյալ	Լշումներ
1	Ընդհանուր բնակչության թիվը, նաև տարաբաժանումը ըստ սեռի) և տարիքի	Սեռ՝ կ/ա՝ (տղամարդ/ կնոջ) Տարիք՝ 0-18տ - 355/360 18-35 տ. - 480/397 35-55 տ. - 700/670 55 տ. և ավելի - 450/410	Փաստացի մշտական գյուղում բնակվող՝  3289
2	Ընդհանուր տնային տնտեսությունների (SS) թիվը	950	Փաստացի մշտական գյուղում բնակվող՝  915
3	Ընտանիքի անապահովության համակարգում գրանցված և բնտանեկան նպաստ ստացող SS-ների թիվը	160	
4	Միայնակ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների թիվը, որտեղ բացի իրենցից այլ չափահաս աշխատունակ տարիքի անձ առկա չէ.	13	
5	Միայնակ կենսաթոշակառուների կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների թիվը, որտեղ բացի իրենցից այլ չափահաս աշխատունակ տարիքի անձ առկա չէ.	5	
6	Առաջին և երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձնց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների թիվը, որտեղ բացի իրենցից այլ չափահաս աշխատունակ տարիքի անձ առկա չէ.	3	
7	- Մեծ քանակությամբ անասուններ պահող, անասնապահությամբ զբաղվող SS-ների թիվը (որպես բիզնես և եկամտի հիմնական աղբյուր)	18	5 խոշոր եղջերավոր անասուն և ավել
	- Փոքր քանակությամբ անասուններ պահող, անասնապահությամբ զբաղվող SS-ների թիվը (որպես ներքին սպառման միջոց, եկամտի ոչ հիմնական աղբյուր)	367	
8	Համայնքում առկա անասունների քանակը՝ ըստ մանր կճղակավոր եւ խոշոր եղջերավոր անասունների թվի	2375/1650	խոշոր եղջ. 1650-ից 500-ը կ ո վ
9	Համայնքի բնակիչների զբաղվածությունը ըստ	1) Գյուղատնտեսություն-2000	

<p>դրությունը (% կամ քանակ)՝</p>	<p>2) Վարձու աշխատանքի համաձայնումն ամսագում-350  3) Վաճառման համաձայն աշխատանք արտերկրում-30  4) Ինքնուղարկում-20  5) Չարդարանող (ործագործի անալիզի բնակչության հի)- 12/1200  6) Անհատական աշխատ-460  7) Այլ-----</p>	
<p>Համայնքի բնակիչները հողային ռեսուրսները (ստատիստիկական տեսակների, հա</p>	<p>1) Վարձու աշխատանք-2500  2) Արտադրարկ-465  3) Խոտհարկ-62  4) Պատահական աշխատանքի արդյունք-  5) Այլ գործող հող-250  6) Բնակչության կառուցվածքային-265  7) Հասարակական կառուցվածքային-13  8) Արտադրարկ-6,5  9) Բնակիչները օգտագործման, ներդրողի կապի և տրանսպորտ նշ.-24,5  10) Այլ ոչ գործող անհատական (գրանցված, հատուկ պահպանվող և այլն)-13,5</p>	<p>Արտադրարկ ներառյալ նվիրաբերվող հողը-465 հա</p>

Համայնքապետ՝



Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս.

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՆԿԻՐԱԲԵՐՎԱԾ ՀՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԿԱՅԱԿԱՆ  
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

Սույն վկայականով հաստատվում է «13» Նոյեմբերի 2017 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)**  
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՑ ՄԱՍԻՎ ԳՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**  
Մարզ Գեղարքունիք, համայնք Մեծ Մասրիկ

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱԳԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**  
ՀՀ կառավարության 25.08.2005թ. թիվ 1705-Ն որոշում

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**  
Կադաստրային ծածկագիրը՝ 05-065-0145-0011  
Մակերեսի չափը (հա)՝ 97.3409

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական  
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արոտավայր  
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱՆՍՏՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

**Վկայական N 13112017-05-0063, գաղտնաբառ՝ YYKEH2TXNFRR**

Էջ 1

**5. ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

Գրանցումը համապատասխանում է պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կարեն Սարիբեկյան  
Վկայականը պատկերված է Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

**Վկայական N 13112017-05-0063, գաղտնաբառ՝ YYKEH2TXNFRR**


Էջ 2

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2017 թ.

\_\_\_\_\_ ին Հողիատկացման հիմք \_\_\_\_\_  
 Մուն, ազգանուն  
 Քեղադրույնիք  
 Մարզ  
 Մեծ Մասրիկ  
 Համայնք  
 ՄԱՄՇՏԱԲ 1:5000  
 Հասցե



## Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի

## Շ Ի Ն ՈՒ Թ Յ Ա Ն

Մակերեսը (հա)	97.3409	Գրանցման համար (ս/հ)	Կոորդինատներ		Օվաղիկ (մետր)	Մակերեսը (մ.կմ.)
			Y	X		
Ծածկագիրը	0145-0001	1	8661119,8656	4454460,1224	276,19	
			8660964,3071	4454081,2610	116,43	
			8660904,1669	4454798,2916	447,71	
			8660711,0215	4455190,2052	195,90	
			8660908,6657	4455212,5150	400,43	
			8661402,3216	4455263,1119	400,43	
			8661793,5210	4455181,0899	255,07	
			8662048,5680	4455184,4239	191,91	
			8662210,3757	4455287,0908	219,63	
			8662411,7522	4455275,2092	535,49	
			8662501,1308	4454860,8269	88,37	
			8662452,1489	4454794,3969	93,79	
			8662466,5589	4454701,7211	587,51	
			8661879,1444	4454712,5803	536,69	
			8661358,0098	4454584,8775	268,76	
8661119,8656	4454460,1224					

Կատարող՝ \_\_\_\_\_ Մխիթար Մխիթարյան «30» հոկտեմբեր 2017 թ.  
 (ստորագրություն) (անուն, ազգանուն) (ամիս, ամսաթիվ)  
 Որակավորման վկայական № 0270, տրված « 26 » Մարտ 2013 թ.  
 Կ.Տ.  
 Իրավաբանական անձ № 03U921789 <<ԳԳԱ>> ՍՊԸ Ե Աղասարյան \_\_\_\_\_  
 (ստորագրություն)

**ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

N Ե/02/0275

27 02 2018

**ԳՆԱՀԱՏՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ (ԱՐՈՏԱՎԱՅՐԻ) ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<b>Ծրագիր.</b>	«Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիր»
<b>Գնահատողի եզրակացության առարկա.</b>	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ 97.3709 հեկտար մակերեսով հողամաս
<b>Շահառու.</b>	«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ»
<b>Կատարող.</b>	Կառլեն Գևորգյան
<b>Կցվող փաստաթղթեր.</b>	Հավելված 1՝ Լուսանկարներ Հավելված 2՝ Գնահատողի որակավորման վկայական
<b>Ամսաթիվ.</b>	27 փետրվարի, 2017

Գնահատող՝  
Որակավորման վկայական N ԱԳԳ 184  
Տրման ժամկետ՝  
01.12.2016թ.

Կառլեն Գևորգյան



## Անշարժ գույքի գնահատման մեթոդները

Անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման նպատակով հիմնականում կիրառվում են ծախսային, համեմատական և եկամտային դասական գնահատման մեթոդները: Շուկայական արժեքի գնահատման ընթացքում կարող են կիրառվել նաև տարբեր մեթոդներում օգտագործվող առանձին եղանակներ և մոտեցումներ, ինչպես նաև վերջիններիս համադրությունը:

Տվյալ գույքը գնահատելիս Գնահատողը կկիրառի գնահատման համեմատական մեթոդը:

Համեմատական մեթոդով անշարժ գույքի շուկայական արժեքը որոշվում է գնահատվող անշարժ գույքին համադրելի անշարժ գույքի շուկայական գների վերլուծության և համապատասխան ճշգրտումների իրականացման միջոցով: Վերլուծության իրականացման համար որպես համադրելի անշարժ գույքի օբյեկտներ կարող են ընտրվել ինչպես բաց և մրցակցային շուկայում վաճառված, այնպես էլ ազատ շուկայում հրապարակայնորեն վաճառահանված անշարժ գույք: Համեմատական մեթոդի կիրառման համար անհրաժեշտ է առնվազն երեք համադրելի (նմանատիպ) անշարժ գույքի վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության առկայություն:

Գնահատվող անշարժ գույքի համար Գնահատողը տիրապետում է տեղեկատվության բավարար քանակության, այդ պատճառով գտնում է, որ համեմատական մեթոդի կիրառումը տվյալ դեպքում հիմնավորված է:

## Գնահատվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքները և գնահատման արդյունքները

Ստորև ներկայացված են գնահատվող գույքի հակիրճ բնութագիրը (Աղյուսակ 1), գնահատման արդյունքները (Աղյուսակ 2 ) և լուսանկարները (Հավելված 1)

### Աղյուսակ 1. Գնահատվող գույքի բնութագիր

Սեփականության Վկայականի համար և տրման ամսաթիվ	13112017-05-0063, 13.11.2017թ		
Սեփականատեր(եր)	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղական համայնք		
<b>Հողամասի բնութագիր</b>			
Նպատակային նշանակություն / գործառնական նշանակություն	Գյուղատնտեսական / արոտավայր		
Գրանցված իրավունքի տեսակ	Սեփականություն		
Երկրաչափական կառուցվածք	Բազմանկյուն		
Ընդհանուր մակերես (քմ)	973.409,0	Ճակատային մաս (մ)	-
Լրացուցիչ	-		

**Աղյուսակ 2. Շուկայական արժեքի գնահատման արդյունքներ**

Հ/հ	Գույքի գտնվելու հասցեն և անվանումը	Գույքի գնահատման ամսաթիվը	Չափման միավոր	Քանակ	Գույքի 1 քմ շուկայական արժեքը՝ ՀՀ դրամով	Գույքի 1 քմ կադաստրային արժեքը՝ ՀՀ դրամով	Ընդհանուր գույքի շուկայական արժեքը՝ ՀՀ դրամով	Ընդհանուր գույքի կադաստրային արժեքը՝ ՀՀ դրամով
1.	ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Մեծ Մասրիկ հասցեում գտնվող հողամաս	27.02.2018թ.	քմ	973.409,0	20,0	75,0	19.468.180,0	73.005.675,0

Շահառուի պահանջով Գնահատողը վերը նշված մակերեսով հողամասը դիտարկել է նաև որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակությամբ և որոշել տվյալ նպատակային նշանակությամբ հողամասի հնարավոր շուկայական արժեքը:

Ստորև ներկայացված է գնահատվող գույքի գնահատման արդյունքները (Աղյուսակ 3).

**Աղյուսակ 3**

Հ/հ	Գույքի գտնվելու հասցեն և անվանումը	Գույքի գնահատման ամսաթիվը	Չափման միավոր	Քանակ	Գույքի 1 քմ շուկայական արժեքը՝ ՀՀ դրամով	Ընդհանուր գույքի շուկայական արժեքը՝ ՀՀ դրամով
1.	ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Մեծ Մասրիկ հասցեում գտնվող հողամաս	27.02.2018թ.	քմ	973.409,0	375,0	175.213.620,0

Գույքի ֆոտոլուսանկարներ և տեղակայվածության քարտեզ





**Հարգանքով**  
**Մեր Ղահրամանյան**  
**«ԱՓԹԱՅՄ» ՍՊԸ Տնօրեն**

Կ.Տ.

**Հավելված 2՝ Գնահատողի որակավորման վկայական**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ  
ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

**ՎԿԱՅԱԿԱՆ N ԱԳԳ 184**

ՍՈՒՑՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎՈՒՄ Է

**ԿԱՌԱՆԵՆ ՌՈՒԲԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ**



առ այն, որ նա մասնակցել է ՀՀ կառավարությանն առընթեր  
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից  
կազմակերպված անշարժ գույքի գնահատման գործունեության  
մասնագիտական որակավորման ստուգմանը:  
Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր  
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մախագահի՝  
«01» ղեկտեմբերի 2016թ. քիվ 321-Ա հրամանի՝ ստացել է

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ**

Գործողության ժամկետը մինչև՝ 01.12.2019 թ.

Հայաստանի Հանրապետության

կառավարությանն առընթեր

անշարժ գույքի կադաստրի

պետական կոմիտեի

մախագահի

Մ. Մարգայան



01 ղեկտեմբերի 2016 թ.

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ (ԱՐՈՏԱՎԱՅՐԻ) ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<b>Ծրագիր.</b>	«Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիր»
<b>Եզրակացության առարկա.</b>	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ 97.3709 հեկտար մակերեսով հողամաս
<b>Շահառու.</b>	«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ»
<b>Կատարող</b>	Կարապետ Աֆրիկյան
<b>Կցվող փաստաթղթեր.</b>	Հավելված 1՝ Լուսանկարներ Հավելված 2՝ Գյուղատնտեսի CV
<b>Ամսաթիվ.</b>	27 փետրվարի, 2017

Կենսաբանական գիտությունների թեկնածու Կ. Աֆրիկյան

## **Ներածություն**

Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր) իրականացվում է «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից: Ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2016թվ.-ի վերջին:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում կառուցել Մասրիկ-1 46 ՄՎտ - 55 ՄՎտ միջակայքում դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան:

Ծրագրի իրականացման նպատակով, Հայաստանի Հանրապետության Կառավարությունը իր համաձայնությունն է տվել՝ էլեկտրակայանի կառուցման նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ 97.3709 հեկտար մակերեսով հողամասը (արոտավայր) Հիմնադրամին նվիրաբերելու վերաբերյալ (այսուհետ՝ Նվիրաբերվող հողամաս):

## **Գյուղատնտեսական փորձաքննության նպատակը.**

Սույն գյուղատնտեսական փորձաքննության նպատակը Նվիրաբերվող հողամասի արդյունաբերական արժեքի որոշումն է՝ համաձայն իր նպատակային և գործառնական նշանակության (գյուղատնտեսական, արոտավայր):

## **Կիրառված մեթոդանությունը.**

Նվիրաբերվող հողամասի արդյունաբերական արժեքի որոշման նպատակով կիրառվել է հետևյալ մոտեցումը.

- 4) Ակնադիտական զննման և օրգանոլեպտիկ եղանակով ուսումնասիրվել և որոշվել է Նվիրաբերվող հողամասի ընթացիկ փաստացի արդյունաբերական արժեքը որպես արոտավայր, մասնավորապես. որքան է կազմում նշված արոտավայրից ստացվող անասնակերի տարեկան բերքատվությունը և ընդհանուր հողամասի որակը՝ որպես արոտավայր՝ արոտավայրի թույլատրելի բեռնվածության (ԱԹԲ) կամ արոտավայրի տարողունակության ցուցանիշների միջոցով,
- 5) Որոշվել է անասունների մոտավոր քանակը (մանր կճղակավոր և խոշոր եղջերավոր), որոնց կարող է սպասարկել Նվիրաբերվող հողամասը որպես արոտավայր, կամ միջինում այն անասունների թիվը, որոնց կարող է սպասարկել նմանատիպ մակերեսով ու որակով արոտավայրը
- 6) Ուսումնասիրվել է համայնքում առկա անասունների ընդհանուր թիվը<sup>9</sup> (մանր կճղակավոր և խոշոր եղջերավոր), որի հիման վրա որոշվել է արոտավայրի այն ընդհանուր մակերեսը, որը անհրաժեշտ է նման քանակությամբ անասուններին սպասարկելու համար,

Վերոնշյալ տվյալների ուսումնասիրման հիման վրա որոշվել է՝

3. Նվիրաբերվող հողամասի փաստացի արդյունաբերական արժեքը

4. Նվիրաբերվող հողամասի կորստի հնարավոր իրական ազդեցությունը անասնապահության՝ համայնքում առկա անասուններին սպասարկելու համատեքստում

## **Գյուղատնտեսական փորձաքննության արդյունքները.**

3. Նվիրաբերվող հողամասի փաստացի արդյունաբերական արժեքը.

<sup>9</sup> Նշված տվյալը տրամադրվել է համայնքի կողմից՝ պաշտոնական գրությամբ:

Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի գյուղամերձ արոտավայրերը /460հա./ ընկած են ծովի մակերևույթից 1950մ. բարձրության վրա, տափաստանային բնահողային գոտում և ձևավորվել են Սևանա լճի ջրերից ազատված տարածքներում, խոնավության տարբեր պայմաններում, որպես գետահովտային հողեր, որոնք սակավազոր են և ունեն ավազակավային մեխանիկական կազմ:

Մասնակի, ընտրանքային մեթոդով տարբեր հատվածներում ակտանդիտական եղանակով տեղազննված մոտ 100 հա արոտային տարածքը ամբողջությամբ դեգրադացված է, որը պայմանավորված է հիմնականում վաղ գարնանային և անկանոն արածեցման, հողի խտացման (ամրացման), դա նաև արդյունք է գյուղամերձ արոտավայրում կենդանիների գերձանրաբեռնվածության՝ պայմանավորված մենատնտեսների կենդանիները ամառային հեռագնաց արոտավայրերը տեղափոխելու սահմանափակ հնարավորություններով), ինչպես նաև հողի բերրիության անկմամբ:

Արոտային տարածքը իրենից ներկայացնում է հարթություն, որի կուլտուր-տեխնիկական վիճակը բնութագրվում է հետևյալ կերպ՝ զերծ ինչպես մակերեսին սիռված, այնպես էլ կիսաթաղված քարերից, գուղձապատ (միջինում 15% բուսական ծագում ունեցող բույսով՝ բոխշ 10-15սմ տրամագծով), բուսապատվածությունը շատ թույլ է (20-30%), բուսատեսակային կազմը աղքատիկ (հիմնականում պատված է շատ ցածր կերամիավոր ունեցող բույսով՝ սեզով), կենսաարդյունավետությունը շատ ցածր՝ առավելագույնը տարեկան 1գ/հա:

**Եզրակացություն՝ Անարդյունավետ արոտավայր:**

4. Նվիրաբերվող հողամասի կորստի հնարավոր իրական ազդեցությունը անասնապահության՝ համայնքում առկա անասուններին սպասարկելու համատեքստում.

Նշված ազդեցությունը գնահատելու համար որոշվել է Նվիրաբերվող արոտավայրի թույլատրելի բեռնվածությունը (ԱԹԲ) կամ արոտավայրի տարողունակությունը<sup>10</sup>: Այս ցուցանիշը ցույց է տալիս գյուղատնտեսական կենդանիների այն առավելագույն քանակը, որոնց կարելի է կերակրել արոտի միավոր տարածության (1հա) վրա արոտային շրջանում՝ առանց վնաս հասցնելու արոտի բուսածածկին: Արոտավայրի տարողության որոշումը կարևոր նշանակություն ունի, քանի որ թույլատրելի բեռնվածությունից մշտապես գերազանցումն առաջ է բերում արոտավայրերի դեգրադացում և կերահանդակը կորցնում է իր տնտեսական արժեքը:

ԱԹԲ-ը հաշվարկում են 1հա-ի վրա պայմանական խոշորի գլխաքանակով (ՊԽ), հետևյալ բանաձևով՝

$$\text{ԱԹԲ} = \text{Բ} / (\text{Պ} \times \text{Տ}), \text{ որտեղ}$$

**ԱԹԲ** - արոտավայրի թույլատրելի բեռնվածությունն է, գլուխ/արոտային շրջանում,

**Բ** - 1 հա արոտավայրի բերքատվությունը (կանաչ կամ չոր զանգ ված), կգ/հա,

**Պ** - պայմանական գլխի օրվա կերի պահանջը (կանաչ կամ չոր), կգ

**Տ** - արոտաշրջանի տևողությունը, օր:

Օրինակ՝ 1 հա արոտավայրի միջին բերքատվությունը՝ 4,000 կգ արոտականաչ, 1 պայմանական գլուխ խոշորի արոտակերի պահանջը՝ 50 կգ/օր, արոտաշրջանի տևողությունը՝ 150 օր

$$\text{ԱԹԲ} = 4,000 / (50 \times 150) = 0.53 \text{ գլուխ/հա}$$

Այսինքն, 0.53 գլուխ 1 հեկտարին, կամ 1 գլուխ պայմանական խոշորին (ՊԽ) միջինում պահանջվում է արոտային ժամանակահատվածում 1.89 հա արոտավայր (1 : 0.53): Նախիրի համար արոտատարածքը հաշվարկվում է ելնելով արոտի թույլատրելի բեռնվածությունից, և անասնազբաքանակից (ՊԽ):

Այսպիսով, Նվիրաբերվող հողամասի դեպքում բերքատվության ցուցանիշը 40 անգամ ցածր է (1 հա արոտավայրի բերքատվությունը՝ 100 կգ արոտականաչ)՝

<sup>10</sup> Տե՛ս «ԱՐՈՏԱՄԱՐՈՏԱԿԱՆ ԿԵՐԱԿԵՆՏՐԱԿԱՆ ԵՎ ԴԱՇՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՐԱԿԵՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՈՒՄ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» Ուսուցողական ձեռնարկ, հեղինակ՝ գ.գ.թ. Գ.Ա. Թովմասյան:



$$ԱԹԲ = 100 / (50 \times 150) = 0.013 \text{ գլուխ/հա}$$

Այսինքն, նվիրաբերվող հողամասի դեպքում 0.013 գլուխ 1 հեկտարին, կամ 1 գլուխ պայմանական խոշորին (ՊԽ) միջինում պահանջվում է արոտային ժամանակահատվածում 76.9 հա արոտավայր (1 : 0.013):

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝**

**Հիմք ընդունելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ Նվիրաբերվող հողամասի կորստի հնարավոր իրական ազդեցությունը համայնքում առկա անասուններին սպասարկելու համարեքստրում բավականին փոքր է և չի կարող նշանակալի ազդեցություն ունենալ համայնքում անասնապահությամբ զբաղվող մենապրոֆեսիոնների գործունեության վրա:**

27.02.2018թ.

Կ. Աֆրիկյան

**Հավելված 1. Լուսանկարներ (24.02.2018թ.)**





**Հավելված 2. Գյուղատնտեսի CV (Կարապետ Աֆրիկյան)**

## ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀՏՀ և ՖԽ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԸ

### 1. Survey tool for KII and FG with community members involved in cattle breeding (bilingual)

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՇՏԱԲԻ ՄԱՍՐԻԿ – 1 ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ»  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՍՏՈՒԳՄԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՌԱՑՆՔԱՅԻՆ  
ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑՄԱՆ ԵՎ ՖՈԿՈՒՍ  
ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

QUESTIONNAIRE  
OF KII AND FG DISCUSSION IN THE FRAME OF  
SOCIAL DUE DILIGENCE FOR MASRIK-1 UTILITY  
SCALE SOLAR PHOTOVOLTAIC POWER PROJECT

1. Որքա՞ն ժամանակ է, որ զբաղվում եք անասնապահությամբ:
2. Քանի՞ գլուխ անասուն եք պահում, ի՞նչ տեսակի:
3. Այդ աշխատանքների համար վարձու աշխատողներ ունե՞ք:
4. Անասնապահությունը Ձեզ համար հիմնական եկամտի աղբյուր է: Եթե ոչ, ապա որո՞նք են ձեր եկամտի հիմնական աղբյուրները (աշխատավարձ, պետ. աջակցություն, օգնություն արտերկրից, այլ), և այդ շարքում ո՞ր տեղն է զբաղեցնում անասնապահությունը: Ինչպե՞ս եք օգտագործում անասնապահությունից ստացված գյուղմթերքը (ընտանիքի սպառման համար, նաև բարեկամներին են տալիս և այլն): Իսկ ձեր կարծիքով անասնապահությունը կարո՞ղ է ձեզ համար հիմնական եկամտի աղբյուր դառնալ գյուղում: Եթե այո, ապա ո՞ր դեպքում, եթե ոչ, ապա ինչո՞ւ:
5. Որտե՞ղ եք արածեցնում կենդանիներին: Արոտավայրի համար վճարո՞ւմ եք: Եթե այո, ապա ինչպիսի՞ պայմաններով (ֆորմալ/ոչ ֆորմալ, ամսական/տարեկան պայմաններով):
6. Ձեր SS-ն ընտանեկան նպաստ ստանո՞ւմ է: SS-ում ՀՈՒԱ, կենսաթոշակառու կա՞: Կամ SS-ն կազմված է միայնակ կնոջից:
7. Արդյո՞ք ձեր SS-ում կինը զբաղվում է անասնապահությամբ (արածացնելով): Արդյո՞ք նա ներգրավված է անասնապահության արդյունքում ստացված գյուղ. մթերքի մշակմամբ (կթել և այլն):
8. R2E2-ի համար նվիրաբերված արոտավայրում արածեցնո՞ւմ եք Ձեր անասուններին: Եթե այո, ապա ի՞նչ պարբերականությամբ: Ինչո՞ւ եք հենց այդտեղ տանում: Եթե ոչ, ապա ինչո՞ւ չեք օգտվում այդ արոտավայրից:
9. Նվիրաբերված արոտավայրի համար վարձ տալի՞ս եք/էիք: R2E2-ին արոտավայրը նվիրաբերելուց հետո փոխարենը ո՞րտեղ կտանեք անասուններին:
1. How long have you been engaged in cattle breeding?
2. How many animals do you care for? What types of animals?
3. Do you have hired workers for cattle breeding activities?
4. Is the cattle breeding your main source of income? If not, what are your main sources of income (wages, state support, assistance from abroad, etc.) and where is the livestock occupation in that list? How do you use animal husbandry products (for family consumption, as well as for use of relatives, etc.)? In your opinion, livestock breeding can be a source of income for you in the village. If so, then in which conditions?, if not, then why?
5. Where do you feed animals? Do you pay for the pasture? If yes, what are the conditions (formal/informal, monthly / yearly payment)?
6. Do your HH receive a poverty allowance? Is there a disabled person, a pensioner in your HH? Is the HH composed of single women?
7. Are women in your HH engaged in cattle-breeding? Is she involved in processing of agricultural products/food processing (milking, etc.)?
8. Do you feed your livestock in the pasture to be donated to R2E2? If so, how often? Why do you just take it there? If not, why not use this pasture?
9. Did you pay for the pasture to be donated to R2E2? Instead of donating pasture to R2E2, where you will take the animals?
10. Can you mention how many (%) villagers use this pasture as the main pasture, and which part as non-basic (secondary, alternative) and why?

10. Կարո՞ղ եք մոտավոր նշել, թե գյուղացիների ո՞ր մասն է (%) է օգտվում այդ արոտավայրից որպես հիմնական արոտավայր, իսկ որ մասը ոչ հիմնական (երկրորդական, այլընտրանքային) ,և ինչու:
11. R2E2 Ծրագրի մասին տեղեկացվա՞ծ եք, ըստ Ձեզ ի՞նչ ազդեցություն կունենա այն, որո՞նք են դրական եւ բացական ազդեցությունները, Ծրագիրն ի՞նչ առավելություններ/ թերություններ ունի Ձեր կարծիքով:
12. Ինչ եք կարծում ինչպե՞ս կազդի Ծրագրի նպատակով R2E2-ին նվիրաբերված արոտավայրի կորուստը համայնքի անասնապահության վրա:
13. Դուք ի՞նչ ակնկալիքներ ունեք Ծրագրի հետ կապված:
11. Are you aware of the R2E2 Project, what do you think what positive and negative impacts the Project will have? What are the Project's advantages / disadvantages?
12. How do you think what will be the impact of pasture loss to be donated to R2E2 Project on the livelihood/cattle breeding activity of the community?
13. What are your expectations regarding the Project?

## 2. Survey tool for KII with the representatives of community administrative office (bilingual)

### ԱՌԱՑՆՔԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐՀ\_Համայնքապետարանի ներկայացուցիչներ

### QUESTIONNAIRE OF KII \_ Prerepresentatives of community administrative office

1. Որո՞նք են համայնքում զբաղվածության հիմնական աղբյուրները:
2. Համայնքում քանի ընտանիք/անձ է ներգրավված անասնապահության մեջ: Քանի՞ գլուխ, ինչ տեսակի?
3. Համայնքի ներկայացուցիչների քանի՞ տոկոսի համար է անասնապահությունը հանդիսանում հիմնական եկամտի աղբյուր է:
4. Որտե՞ղ են համայնքի բնակիչները հիմնականում արածեցնում կենդանիներին և ի՞նչ պայմաններով (վարձակալություն և այլն):
5. Քանի՞ հա արոտավայր ունի համայնքը? Որքա՞ն մասն է դրանից օգտագործվում անասնապահության համար:
6. Կարո՞ղ եք մոտավոր նշել, թե գյուղացիների ո՞ր մասն է (%) է օգտվում R2E2-ի համար նվիրաբերվող արոտավայրից որպես հիմնական արոտավայր, իսկ որ մասը ոչ հիմնական (երկրորդական, այլընտրանքային): Ինչո՞ւ են/չեն օգտվում այդ արոտավայրից:
7. Ինչո՞ւ համայնքը որոշեց նվիրաբերել նշված արոտավայրը ծրագրի իրականացման նպատակով:
8. Ըստ Ձեզ, ինչպիսի՞ ազդեցություն կունենա արոտավայրի նվիրաբերությունը այն օգտագործող անասնապահների համար, և ինչպիսի՞ այլընտրանքներ կան այն փոխարինելու համար (որտե՞ղ մարդիկ կարող են արածացնել իրենց անասուններին):
1. What are the main sources of income in community?
2. How many households/persons are involved in cattle breeding? How many, what type?
3. For how much/% households the cattle breeding is the main sources of income?
4. Where do the community member mainly feed animals? and what are the conditions (renting etc.)?
5. How many ha of pasture community has? How much of that is used for cattle breeding?
6. Can you please mention how many/% of community members use the land to be donated to R2E2 for cattle breeding? Why they use/not use it?
7. Why community decided toe donate that land for the Project?
8. What do you think what will be impact of the donation of land for those who are involved in cattle breeding? And what other alternatives are there to replace it? (where people can feed their animals).
9. In case of negative impact or absence of alternatives, what do you think, what types of measured can be initiated to restore/replace/mitigate that lost?
10. What do you think what will the impact of the Project on community in general? What will be the

9. Բացասական ազդեցության կամ այլընտրանքի բացակայության դեպքում, ըստ Ձեզ, ինչպիսի՞ միջոցառումներ կարելի է իրականացնել այդ արոտավայրի կորուստը վերականգնելու/փոխարինելու/մեղմելու համար:
10. Ըստ Ձեզ, ընդհանուր առմամբ ի՞նչ ազդեցություն կունենա Ծրագիրը համայնքի վրա, որո՞նք են դրական և բացական ազդեցությունները, Ծրագիրն ի՞նչ առավելություններ/թերություններ ունի Ձեր կարծիքով:
11. Որո՞նք են համայնքի առաջնահերթ խնդիրները, որոնց լուծման համար պլանավորում եք օգտագործել Ներդրովի կողմից վճարվելիք գումարը որպես համայնքի զարգացման վճար:

positive and negative impacts of the Project? What are the Project's advantages / disadvantages?

11. What re the main issues in community which you plan to solve by the amount to be paid by the Investor for as community development fee?

### 3. Survey tool for KII with land owners near the donated land (bilingual)

#### ԱՌԱՅՆՔԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ \_Նվիրաբերվող հողամասի հարակից հողերի սեփականատերեր

#### QUESTIONNAIRE

#### OF KII \_ Land owners near the donated land

1. R2E2 Ծրագրի մասին տեղեկացվա՞ծ եք: Գիտե՞ք արդյոք, որ ձեր հողամասի հարևանությամբ գտնվող արոտավայրը նվիրաբերվելու է Ծրագրի իրականացման նպատակով:
  2. Կարո՞ղ եք մոտավոր նշել, թե գյուղացիների ո՞ր մասն է (%) է օգտվում այդ արոտավայրից որպես հիմնական արոտավայր, իսկ որ մասը ոչ հիմնական (երկրորդական, այլընտրանքային): Ինչո՞ւ են/չեն օգտվում այդ արոտավայրից:
  3. Դուք որևէ կերպ օգտագործո՞ւմ եք/էիք այդ արոտավայրը: Եթե այո, ապա ինչպե՞ս, ինչ նպատակով:
  4. Ինչպե՞ս կազդի ձեզ վրա նշված արոտավայրի կորուստը: Ինչ կանե՞ք, ինչպես եք պատկերացնում այդ ազդեցության մեղմումը /եթե այն բացասական է/:
  5. Ըստ Ձեզ, ընդհանուր առմամբ ի՞նչ ազդեցություն կունենա Ծրագիրը համայնքի վրա, որո՞նք են դրական եւ բացական ազդեցությունները, Ծրագիրն ի՞նչ առավելություններ/թերություններ ունի Ձեր կարծիքով:
1. Are you aware of the R2E2 Project? Are you aware that the land plot nearby to your land plos will be donated for the Project purposes?
  2. Can you please mention how many/% of community members use the that land for cattle breeding? Why they use/not use it?
  3. Do you use/used that pasture land? If yes, then how, for what purposes?
  4. How the loss of this pasture land will have affected you? What will you do, how you imagine the mitigation of that impact, in case if negative?
  5. What do you think what will be the impact of the Project on the community? What will be the positive and negative impacts? What are the Project's advantages / disadvantages?

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՖՈՒԿՈՒՄ ԽՄԲԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՏՈՐԱԳՐՎԱԾ ԹԵՐԹԻԿՆԵՐ

**R2E2** Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգետիկայի ներդրումային ծրագիր»  
հիմնադրամ

«Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասիկ-1 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիր»		Masrik - 1 Utility-scale solar photovoltaic power plant investment project in Armenia			
Ֆուկուս խմբային բնութագրում		Focus group discussion			
Մասնակիցների ցուցակ/ List of participants					
#	Անուն, ազգանուն Name, surname	Կարգավիճակ (համայնքի բնակիչ, ՀԿ ներկայացուցիչ և այլն)/ Status (community member, NGO representative etc.)	Հեռախոս, Էլ-փոստ Telephone, E-mail	Ջրարմունքը անասնապահությ սարք – այո/ոչ Engaged in cattle breeding – yes/no	Ստորագրություն Signature
1.	Սարգսյան Սարգիսյան	համայնքի բնակիչ	093 970-910	այո	
2.	Զարգարյան Նինելի	համայնքի բնակիչ	077-65-54-01	չեմ	
3.	Բեկեղարյան Արմաշ	բնակիչ	094-87-56-41	չեմ	
4.	Պարսպարյան Դիմա	համայնքի բնակիչ	077-09-01-97	այո	

#	Անուն, ազգանուն Name, surname	Կարգավիճակ (համայնքի բնակիչ, ՀԿ ներկայացուցիչ և այլն)/ Status (community member, NGO representative etc.)	Հեռախոս, Էլ-փոստ Telephone, E-mail	Զբաղմունքը անասնապահությ սմբ - այո/ոչ Engaged in cattle breeding - yes/no	Ստորագրություն Signature
5.	Տարաբաղյան Դավիթ	համայնքի ղեկավար	077-66-05-23	այո	[Signature]
6.	Տարաբաղյան Երվանդ	համայնքի ղեկավար	077 60 14 54	այո	[Signature]
7.					
8.					
9.					
10.					
11.					

## ՀԱՎԵԼ ՎԱԾ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ և ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հանրային իրազեկման հանդիպում «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային ծրագրի» իրականացման շրջանակում**

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից ներկայումս իրականացվում է «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագիրը հանդիսանում է պետական-մասնավոր գործընկերության ձևաչափով իրականացվելիք ծրագիր, որը նախապատրաստվել է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջև 2015թ. ստորագրված համաձայնագրի շրջանակներում և հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2016թվ.-ի վերջին:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում կառուցել Մասրիկ-1 46 ՄՎտ - 55 ՄՎտ միջակայքում դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան, որի նպատակով հայտարարվել է էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման նպատակով մրցույթ: Նախատեսվում է, որ մրցույթի արդյունքներով ընտրված ընկերությունը կսկսի աշխատանքները 2018թ. զարնանը:

Ծրագրի իրականացման երկարաժամկետ արդյունքներն են՝ օտարերկրյա ներդրողների շրջանում Հայաստանի արևային էներգետիկայի ոլորտի գրավչության մեծացումը, Հայաստանում էլեկտրաէներգիայի ռեսուրսների բազմազանեցումը, ՀՀ էներգետիկ անվտանգության ամրապնդումը: Ծրագրի իրականացման նպատակով, Հայաստանի Հանրապետության Կառավարությունը իր համաձայնությունն է տվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ 97.3709 հեկտար մակերեսով հողամասը Հիմնադրամին նվիրաբերելու վերաբերյալ՝ էլեկտրակայանի կառուցման նպատակով:

Ծրագրի իրականացման շրջանակում սույն թվականի **հունվարի 29-ին, ժամը 12:00-ին** ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի համայնքապետարանի շենքում կանցկացվի Հանրային իրազեկման հանդիպում Հիմնադրամի մասնագետների և խորհրդատուների մասնակցությամբ: Հանդիպման շրջանակում կներկայացվեն Ծրագրի նախագիծը, Մասրիկ համայնքում էլեկտրակայանի կառուցման վայրը, կազմակերպման և իրականացման ընթացքը, փուլերը, կքննարկվեն Ծրագրի իրականացման շրջանակում հնարավոր բնապահպանական և սոցիալական հարցերն ու դրանց մեղմման ուղղված միջոցառումները, կպարզաբանվեն նաև հնարավոր բողոքարկման մեխանիզմները:

Բոլոր շահագրգիռ անձիք և կազմակերպությունները հրավիրվում են մասնակցելու Հանրային իրազեկման հանդիպմանը:

### **Կոնտակտային տվյալներ՝**

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ

ՀՀ, ք. Երևան 0001, պող. Սայաթ-Նովա 29/1

Հեռ.՝ +(374-10) 588011, 545121

Էլ. փոստ info@r2e2.am

URL: www.r2e2.am



**«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՇՏԱԲԻ ՄԱՍԻԿ – 1 ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈՒՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ»**

**Հանրային իրազեկման հանդիպման տեղեկատվական թերթիկ**

Հունվար, 2018թ.

**Ծրագրի վերաբերյալ.**

«Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր) իրականացվում է «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից: Ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2016թվ.-ի վերջին:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում կառուցել Մասրիկ-1 46 ՄՎտ - 55 ՄՎտ միջակայքում դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան, որի նպատակով հայտարարվել է էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման մրցույթ: Նախատեսվում է, որ մրցույթի արդյունքներով ընտրված ընկերությունը (այսուհետ՝ Ներդրող) կսկսի աշխատանքները 2018թ. գարնանը: Ներդրողը կարող է ներգրավել այլ ընկերության՝ որպես շինարարության կապալառու:

**Ծրագրի ակնկալվող ազդեցություն.**

Ծրագրի իրականացման նպատակով, Հայաստանի Հանրապետության Կառավարությունը իր համաձայնությունն է տվել՝ էլեկտրակայանի կառուցման նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ 97.3709 հեկտար մակերեսով հողամասը Հիմնադրամին նվիրաբերելու վերաբերյալ:

Միաժամանակ, էլեկտրակայանի կառուցման համար ժամանակավոր մոտեցման ճանապարհների, հետագա շահագործման համար մշտական մոտեցման ճանապարհերի, ինչպես նաև դեպի էլեկտրակայան ձգվող էլեկտրահաղորդման լարերի և դրանց հենասյուների մոնտաժման համար հնարավոր է, որ պահանջվի հողերի ձեռք բերում և հողօգտագործման վրա մշտական կամ ժամանակավոր ազդեցություն (հաշվի առնելով էլեկտրահաղորդման լարերի/հենասյուների բարձրության սահմանափակումները): Նմանատիպ ազդեցությունների դեպքում Ներդրողի կողմից կուսումնասիրվեն ազդեցությունները և կպատարաստվի վերաբնակեցման գործողությունների ծրագիր (ՎԳԾ):

**Վերաբնակեցման գործողությունների ծրագրի (ՎԳԾ) մշակում.**

Ծրագրի շրջանակում հնարավոր ազդեցությունների դեպքում կմշակվի ՎԳԾ, որի հիմնական նպատակն է՝

Բացահայտել ցանկացած հողի օտարման և վերաբնակեցման ազդեցությունները և ազդեցության ենթակա անձանց շրջանակը՝ կապված Ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքների ազդեցությունների հետ:

Մշակել հողի օտարման և վերաբնակեցման անհրաժեշտության դեպքում կիրառելի մեխանիզմները, ընթացակարգերը և փոխառուցման իրավունքները՝ համաձայն հողի օտարման և ոչ կամավոր վերաբնակեցման վերաբերյալ Համաշխարհային Բանկի (ՀԲ) Իրականացման Ստանդարտների և ՀՀ օրենսդրության պահանջների:

Ծրագրի շրջանակում բողոքների/առաջարկությունների լուծման մեխանիզմ.

Ներդրողի կողմից շինարարության, ուսումնասիրության և փոխհատուցման ընթացքում հնարավոր բողոքների, խնդիրների ու առաջարկությունների դիտարկման և քննման նպատակով Ծրագրի շրջանակում կգործի Բողոքների լուծման մեխանիզմ (ԲԼՄ), որպեսզի համայնքի բնակիչները կամ Ծրագրի հնարավոր ազդակիր անձիք հնարավորություն ունենան ներկայացնելու առաջարկություններ կամ բողոքարկելու ցանկացած որոշում, գործելակերպ կամ գործունեություն, որը կարող է առաջանալ Ծրագրի իրականացման, հողի կամ այլ գույքի փոխհատուցման ընթացքում: Բողոքների լուծման մեխանիզմում ներգրավված կլինեն մի շարք կողմեր՝ Համայնքը, Հիմնադրամը, Ներդրողը և Բողոքների հանձնաժողովը (ԲՀ): Բացի այդ, հասարակական կազմակերպությունները, Օրհուսի կենտրոնը կամ տեղական այլ շահագրգիռ կազմակերպություններ կարող են իրականացնել բողոքների լուծման բանակցությունների մոնիտորինգ և ներգրավվել Բողոքների հանձնաժողովում՝ որպես ոչ մշտական ներկայացուցիչ:

Բողոքները կարող են հասցեագրվել համայնքների մակարդակում (ՏԻՄ ղեկավար), որտեղ բողոքը կգրանցվի և կուղարկվի Ներդրողի բողոքների համակարգողին, ով պատասխանատու է բողոքների գրանցման և լուծման որոշման համար: Բողոքները կարող են ներկայացվել նաև շինարարության կապալառուին, որը նույնպես բողոքը տեղում չլուծելու դեպքում այն պետք է ուղղի Ներդրողի բողոքների համակարգողին:

Այսպիսով, Ծրագրում հաստատվել է բողոքների լուծման հետևյալ մեխանիզմը.

**ՔԱՅԼ 1.** Դիմումատուն կարող է իր բողոքը ներկայացնել Ներդրողի բողոքները համակարգողին՝ շինարարության կապալառուի կամ ՏԻՄ-ի միջոցով: Բողոքը պետք է լուծվի շինարարության կապալառուի հետ 10-օրյա կամ համաձայնեցված ժամկետում: Շինարարության մեկնարկից առաջ Ներդրողը կփակցնի համապատասխան հայտարարություն համայնքում՝ բողոքները համակարգողի կոնտակտային տվյալներով:

**ՔԱՅԼ 2.** Շինարարության Կապալառուի հետ բողոքը չլուծելու պարագայում, բողոքը կդիտարկվի Ներդրողի կողմից 5-օրյա ժամկետում: Խիստ բողոքների դեպքում, որոնք չեն կարող լուծվել տեղում, կիրավիրվի Բողոքների Հանձնաժողով, որի հանդիպումը տեղի կունենա բողոքը ստանալուց և գրանցելուց հետո 30-օրյա ժամկետում: Հանձնաժողովը բաղկացած է լինելու մշտական և ոչ մշտական անդամներից: Մշտական անդամներ՝ իրականացնող կազմակերպություն (Հիմնադրամ), Ներդրողի բողոքների համակարգող և շինարարության կապալառու, ոչ մշտական անդամներ՝ դիմումատու, համապատասխան մարզի, համայնքի և ՀԿ ներկայացուցիչներ: Դիմումատուն 5 օր առաջ կտեղեկացվի հանդիպման տեղի և ժամի մասին:

**ՔԱՅԼ 3.** Ներդրողի կամ Հանձնաժողովի կողմից բողոքը չլուծվելու պարագայում դիմումատուն կարող է դիմել Հիմնադրամին: Հիմնադրամը կքննարկի և կպատասխանի դիմումատուին 10-օրյա ժամկետում:

***ԲԼՄ ցանկացած փուլում դիմումները պետք է ներկայացվեն գրավոր, և դիմումի պատասխանը նույնպես պետք է տրամադրվի դիմումատուին գրավոր տեսքով:***

Բողոքների լուծման համակարգի անհաջողություն դեպքում, գործընթացի ցանկացած փուլում դիմումատուն կարող է բողոքը ուղղել համապատասխան ընդհանուր իրավասության դատարան:

### ***Կոնտակտային տվյալներ՝***

*Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ*

*ՀՀ, ք. Երևան 0001, պող. Սայաթ-Նովա 29/1*

*Հեռ.՝ +(374-10) 588011, 545121,*

*Էլ. փոստ info@r2e2.am, URL: www.r2e2.am*

## ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ

30.01.2018թ.

Վայր – Գեղարքունիքի մարզ, Մեծ Մասրիկ համայնք

**ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ – «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային ծրագրի»**

#### **ՀԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳ**

Հանրային իրազեկման հանդիպման օրակարգում դրված հարցերն են.

1. Ծրագրի նախագծի ներկայացում:
2. Հիմնադրամի կողմից ծրագրի իրականացման նպատակով վարձված մասնագետների ներկայացում:
3. Մեծ Մասրիկ համայնքում էլեկտրակայանի կառուցման վայրի, կազմակերպման և իրականացման ընթացքի, փուլերի ներկայացում:
4. Ծրագրի իրականացման շրջանակում հնարավոր բնապահպանական և սոցիալական հարցերի ու դրանց մեղմման ուղղված միջոցառումների քննարկում:
5. Բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
6. Հարց ու պատասխան:

#### **ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

1. Ռուբեն Գետրգյան – «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ – 1 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիր» ղեկավար
2. Արմեն Ասատրյան – համայնքի ղեկավար
3. Էդիկ Պողոսյան – համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավար
4. Սոնա Պողոսյան – վերաբնակեցման մասնագետ
5. Լիլիթ Դիլանյան – սոցիոլոգ, հանդիպման քարտուղար
6. համայնքի բնակիչներ, հետաքրքրված անձիք՝ 13 հոգի (13 տղամարդ):

#### **Բովանդակություն**

1. Հանդիպումը մեկնարկեց ծրագրի ղեկավար Ռ. Գետրգյանի խոսքով, ով ներկայացրեց Ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, մասնավորապես նշելով, որ այն հանդիսանում է պետական-մասնավոր գործընկերության ձեռնարկով իրականացվելիք Ծրագիր, որը նախապատրաստվել է Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջեւ 2015թ. ստորագրված համաձայնագրի շրջանակներում եւ հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2016թվ.-ի վերջին:

Ռ. Գետրգյանը նշեց, որ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում կառուցել Մասրիկ-1 46 ՄՎտ - 55 ՄՎտ միջակայքում դրվածքային հզորությամբ արեային ֆոտովոլտային կայան, որի

նպատակով հայտարարվել է էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման եւ շահագործման մրցույթ: Նախատեսվում է, որ մրցույթի արդյունքներով ընտրված ընկերությունը կսկսի աշխատանքները 2018թ. գարնանը:

Ռ. Գեորգյանը նաեւ շեշտեց, որ Ծրագրի իրականացման երկարաժամկետ արդյունքներն են՝ օտարերկրյա ներդրողների շրջանում Հայաստանի արեւային էներգետիկայի ոլորտի գրավչության մեծացումը, Հայաստանում էլեկտրաէներգիայի ռեսուրսների բազմազանեցումը, ՀՀ էներգետիկ անվտանգության ամրապնդումը: Նա հստակեցրեց, որ պետությունը կայանի կառուցման նպատակով գումար չի ներդնում, այլ ներդրում կատարող կազմակերպությունը, որը պետք է ընտրվի մրցույթի արդյունքում, ինքն է կառուցելու կայանը: Ռ. Գեորգյանն ասաց, որ կան 10 կազմակերպություններ, ովքեր հայտեր են ներկայացրել մրցույթին մասնակցելու նպատակով, եւ կհաղթի այն կազմակերպությունը, որը կառաջարկի էլ. էներգիայի ամենացածր գինը:

Ռ. Գեորգյանն ասաց, որ Ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության Կառավարությունը իր համաձայնությունն է տվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ 97.3709 հեկտար մակերեսով հողամասը Հիմնադրամին նվիրաբերելու վերաբերյալ՝ էլեկտրակայանի կառուցման նպատակով, ինչն էլ արդեն փաստաթղթերով ամրագրված է:

Ծրագրի ղեկավարը ներկայացրեց նաեւ Ծրագրի սոցիալական ազդեցության գնահատման կարելությունն ու անհրաժեշտությունը, եւ այն իրականացնող մասնագետներին, մասնավորապես վերաբնակեցման մասնագետ Ս. Պողոսյանին: Այնուհետեւ խոսքը հանձնեց Ս. Պողոսյանին, ով իր հերթին ներկայացրեց, թե ինչ գնահատման մասին է խոսքը ու առավել կարելուց այն փաստը, որ Համաշխարհային Բանկը (այսուհետ՝ ՀԲ) մեծ ուշադրություն է դարձնում Ծրագրի սոցիալական բաղադրիչին: Մասնագետն ասաց, որ պետք է հասկանալ Ծրագրի ազդեցությունը՝ թե՛ բացասական, թե՛ դրական, համայնքի՝ ընդհանուր առմամբ եւ մասնավորապես՝ տնային տնտեսությունների վրա: Ս. Պողոսյանն ասաց, որ քանի որ նվիրաբերված հողը իր նշանակությամբ արոտավայր է, եւ համայնքի որոշ բնակիչներ երբեմն օգտվում են դրանից՝ իրենց անասուններին արածեցնելով, ապա պետք է հասկանալ, թե հողի՝ տվյալ նապատկով օգտագործման անհնարինությունը հետագայում ինչ խնդիրներ կարող է առաջացնել: Մասնագետն ասաց, որ կիրականացվի համապատասխան ուսումնասիրություն, որի շրջանակներում կարիք կլինի նաեւ հարցազրույցներ իրականացնել անմիջական ազդեցությունը կրողների հետ: Կարիք կլինի նաեւ պարզելու, թե ինչ այլընտրանքներ կան, որոնք կարող են մեղմել Ծրագրի ազդեցությունը համայնքի ՏՏ վրա: Մասնագետը նշեց նաեւ, որ եթե ուսումնասիրության արդյունքում պարզվի, որ կա շատ մեծ բացասական ազդեցություն, ապա ՀԲ եւ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգաֆինանսավորության հիմնադրամի համատեղ աշխատանքի արդյունքում կորոշվի, թե ինչ համապատասխան գործողությունների շրջանակ պետք է պլանավորել եւ իրականացնել: Ս. Պողոսյանը նաեւ մասնակիցներին տրամադրեց Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ՝ Ծրագրին ծանոթանալու նպատակով, ու հավելեց, որ բացի կայանի կառուցումից շինարարության ընթացքում նաեւ կայանին մոտեցման նպատակով ճանապարհ է կառուցվելու, լինելու են կրող հենասյուներ, լարանում է իրականացվելու, եւ միգուցե հետագայում այդ նպատակներից ելնելով հողօտարում արվի, կամ օրինակ ճանապարհի կառուցումն հարմար լինի իրականացնել որեւէ մեկին պատկանող այգու միջով, ինչի համար կտրամադրվի համապատասխան փոխհատուցում: Սակայն այս ամենը լինելու է

հետագա փուլերի ընթացքում, իսկ համայնքի բնակիչների կողմից կարող են լինել բողոքներ կամ առաջարկություններ, որոնք պետք է գրանցվեն հատուկ համակարգում՝ բողոքների լուծման մեխանիզմում: Այս համակարգի միջոցով բնակիչները կարող են ներկայացնել իրենց խնդիրները եւ հասնակալ՝ ու՛մ դիմել եւ ի՞նչ անել:

Ապա Ս. Պողոսյանը ցանկացավ լսել համայնքի ներկայացուցիչների դիրքորոշումը Ծրագրի վերաբերյալ:

Համայնքի ներկայացուցիչները նշեցին, որ Ծրագիրը հետաքրքիր է, եւ ըստ նրանց բացասական երեւյթներ անպայման կլինեն, բայց դրանց կշիռը մեծ չի լինի, իսկ դրական ազդեցությունը շատ ավելի մեծ կլինի, եւ նման արդյունաբերական համայնք ստեղծելու հնարավորությունը ձեռքից բաց թողնելը սխալ կլինի: Մասնակիցները նշեցին, որ ունեն հեռագնա արոտավայրեր, սակայն դրանք այնքան հեռու են, որ անասուններին տանելը խնդիր է դառնում, ինչպես նաեւ չկան համապատասխան պայմաններ՝ նախրապանների կեցության համար, այսինքն չկա ճանապարհ, լույս, ջուր, կաթի մթերման կետ, որպեսզի հնարավոր լինի կազմակերպել աշխատանքը: Մասնակիցներից մեկը նաեւ կարծիք հայտնեց այն, մասին որ անասնապահությունն այնքան էլ եկամտաբեր չէ, եւ ոլորտում եղած խնդիրը մեկ արոտավայրով չի որոշվում: Նաեւ մասնակիցների կողմից շեշտվեց, որ նվիրաբերված արոտավայրը այնքան էլ խոտածածկ չէ, եւ սեզոնին շատ քիչ գլխաքանակով անասուններ են տարվում այդտեղ՝ արածեցնելու նպատակով:

Պ. Պողոսյանն իր հերթին նշեց, որ վյալ արոտավայրը հիմնականում օգտագործում են այն ընտանիքները, ովքեր ունեն ուրիշ եկամտի աղբյուր եւ պարզապես երբեմն տվյալ արոտում իրենց անասուններն արածեցնում են, այսպես ասած՝ հանում են մաքուր օդի, իսկ այն ընտանիքները, ում համար անասնապահությունը նաեւ եկամտի աղբյուր է հանդիսանում, տանում են այլ արոտավայրեր: Նա նաեւ նշեց, որ իր կարծիքով հեռագնա արոտավայրերում էլ. հոսանք ապահովելով հարցը չի լուծվի, քանի որ խնդիրն ավելի խորքային է, եւ կաթի մթերումը բարդ խնդիր է: Նա նշեց, որ իրենք չեն կարողանում կաթը, կաթնամթերքը եւ մսամթերքը վաճառել բարձր գնով, այլ դիմում են մջնորդներին, ովքեր ավելի ցածր գնով են վերցնում ապրանքները: Այսինքն խնդիրներն ավելի բարդ են, եւ միայն արոտավայրերի առկայությամբ չեն պայմանավորված:

Հանդիպումը շարունակվեց հարց ու պատասխանի տեսքով:

**ԱԵԱ Հ1.** - Կայանի կառուցումը ենթադրու՞մ է նոր աշխատատեղերի ստեղծում:

Ռ. Գեւորգյան – այո, բայց աշխատանքների 2 փուլ է նախատեսվում իրականացնել, եւ մոտավորապես ուղղակի 20 աշխատատեղ կստեղծվի ու կստեղծվեն նաեւ անուղղակի աշխատատեղեր: Նաեւ ուզում եմ ասել, որ կայանի կառուցմամբ գյուղը ճանաչելի կդառնա: Ու երկարաժամկետ հեռանկարում կարող է ավելի եկամտաբեր լինել այս Ծրագիրը:

ԱԵԱ – ես ունեմ 2 կով, ուղղակի պահում եմ, բայց եթե ունենամ աշխատատեղ, կով չեմ պահի, ու 2 կով ավել կպահի նա, ում համար դա եկամտի աղբյուր է, որովհետեւ դա իրեն ձեռ կտա: Անասնապահությունը եկամտի հիմնական աղբյուր չի, ավելի կարելի է աշխատատեղը, դրանով գյուղը կզարգանա: Թե չէ 110-120 դրամով կաթ մթերելը օգուտ չի տալիս, դրա համար անասնապահության վրա կենտրոնանալ պետք չի:

ԱԵԱ – մարդը կով է պահում, համարում է իրեն ոչ գործազուրկ, բայց մեզ պետք է, որ գյուղը դառնա արդյունաբերական գյուղ, դրա համար բացասական երեւույթների վրա պետք չէ ուշադրություն դարձնել, իսկ Ծրագրի դրական կողմերը ահռելի են:

ԱԵԱ – անասնապահությանը էս Ծրագիրը վնաս չի տալիս, ես կով շատ ունեմ, բայց կողմ եմ Ծրագրին, ես ուրիշ տեղ եմ անասուն պահում, գումար եմ տալիս արոտավայրի

համար եւ արածեցնում են, նվիրաբերված արոտը 2 ամիս անգամ չի հերիքում անասունին:

**ԱԵԱ** – էդ հողը աղի է , բուսածածկույթը քիչ է, անասունին լրացուցիչ կեր ենք տալիս, որ հագենա, ուղղակի դուրս ենք հանում արոտ էլի:

**Ս.** Պողոսյան – մեզ պետք է այս կարծիքները հավաքել, ճիշտ վերլուծել ու ներկայացնել, մեր մասնագետը՝ Լիլիթը, ձեզ հետ նորից կհանդիպի, կզրուցի: Ուզում եմ ասել, որ մենք բացասակն ազդեցություններից չենք խորշում, ուղղակի պետք է հասկանանք, թե Ծրագիրը համայնքի վրա ի՞նչ ազդեցություն է ունենալու: Նաեւ ուզում եմ ասել, որ համայնքը հողն է տրամադրում, իսկ ներդրողն էլ պարտավորվելու է համայնքին գումար հատկացնել՝ համայնքի զարգացման նպատակով: Ըստ ձեզ որո՞նք են այն հիմնական ոլորտները, ուղղությունները, որոնք, ըստ ձեզ, ուշադրության կարիք ունեն:

**Ռ.** Գեւորգյան – գուցե՞ համայնքապետն ասի ու հետո կարծիքներ լսենք:

**ԱԵԱ Հ2.** - հողը հատկացվում է:

**Ս.** Պողոսյան – ոչ, համայնքը հողը նվիրաբերում է, իսկ ներդնողը նվիրաբերելու է 80 մլն դրամ: Նաեւ վճարելու է գույքահարկի եւ հողի հարկի գումարները մոտավորապես 20 տարի, տարեկան 6 մլն դրամ:

**Ռ.** Գեւորգյան – այս շաբաթ այդ գործարքի համաձայնությունը կստանանք կառավարությունում, ու ակնկալում ենք, որ մարտի 7-ին արդեն կունենանք մրցույթի հաղթող, գումարը կփոխանցվի համայնքապետարանի համար եւ նոր հողը կնվիրաբերվի: Նույնիսկ եթե հողը հետագայում վերադարձվի համայնքին, գումարը հետ չի կարող վերցվել: Այսպիսին է պայմանավորվածությունը:

**Ա.** Ասատրյան – մենք պլանավորում ենք համայնքի մանկապարտեզը վերանորոգել, ջրագիծ անցկացնել, ֆուտբոլի հրապարակ կառուցել, կոմբայն եւ այլ սարքեր գնել, որովհետեւ մեր ունեցածն արդեն մաշված է, նաեւ անհրաժեշտ է փողոցների լուսավորությունը ապահովել, ճանապարհներ կառուցել: Մի խոսքով, շատ խնդիրներ ունենք, որոնք պետք է լուծել: Ես էլ հարց տամ. համայնքն այդքան ներդրում է անում, իսկ ներդրողն ինչի՞ է պատրաստ:

**Ս.** Պողոսյան – այդ 80 մլն դրամը հենց դրա դրսեւորումն է, եթե իր ցանկությամբ այլ ներդրումներ եւս ուզենա անել, կանի, բայց որեւէ այլ պարտադիր պայման մենք չունենք:

**Ռ.** Գեւորգյան – այո, որեւէ այլ պարտավորեցնող կետ չունենք, բայց մրցույթի բոլոր մասնակիցները լուրջ միջազգային կազմակերպություններ են:

**Ս.** Պողոսյան – երկարաժամկետ ներդրող է, 20 տարի այստեղ գործունեություն է ծավալելու, եւ ուզի-չուզի ինտեգրվելու է համայնքին, կարծում եմ:

**ԱԵԱ** – հաղթող կազմակերպությունը կարող է նաեւ հույս դնել տեղի աշխատուժի վրա: Մեր գյուղում լավ մասնագետներ շատ կան՝ էլեկտրիկներ, շինարարներ եւ այն, որ կարան աշխատեն ծրագրում, թեուզ շինարարությա փուլում: Սա նաեւ մեր երեխաների հետագա կրթության մասին մտածելու լավ առիթ է, արդեն կհասկանանք, թե ինչ մասնագիտություն է պետք մեր երեխաներին, որ գնան սովորեն ու գան աշխատեն մեր գյուղում:

**ԱԵԱ Հ3.** - իսկ էկոլոգիայի առումով որեւէ բացասական ազդեցություն ունի՞:

**Ռ.** Գեւորգյան – կունենար, եթե կայանը աշխատեր կոնցենտրացված էներգիայի սկզբունքով, բայց սա ֆոտովոլտային է, դրա պանելները տանիքներից չեն տարբերվում, դրանք ընկալում են էներգիայի 20%-ը, իսկ դրանց հովի տակ շատ լավ աճում են բույսերը, քանի որ ավելի խոնավ է լինում: Մենք հետազոտություն ունենք, որ էկո

համակարգին վնաս չի տալիս այս տիպի կայանը: Մեղուներին էլ չի վնասում, աղմուկ, վիբրացիա, ռադիացիա չունի, թունավոր նյութեր չեն արտազատվում:

Ս. Պողոսյան – կա՞ն էլի հարցեր:

Ս. Պողոսյան – շնորհակալություն ենք հայտնում մասնակցության եւ կարծիքների համար:

ԱԵԱ – մենք ենք շնորհակալ:

Հանրային իրազեկման հանդիպման քարտուղար – Լ. Դիլանյան

Մասնակիցների ցուցակ



«Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մարիկ-1  
արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային  
ծրագիր»

Masrik-1 Utility-scale solar photovoltaic power plant  
investment project in Armenia

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿԱՄԱ ՀԱՆԴԻՊՈՒՄ

PUBLIC CONSULTATION




Մասնակիցների ցուցակ/List of participants

Վայր/Place ԱՂՁԱ ԿԱՅԱԿԻ

Ամսաթիվ/Date 30.01.19

N	Անուն, ազգանուն Name, Surname	Կարգավիճակ (համայնքի բնակիչ, ՀԿ ներկայացուցիչ և այլն) / Status (community member, NGO representative etc.)	Հեռ., էլ.փոստ Tel/Email	Զբաղմունքը անասնապահությունը (այո/ոչ) / Engaged in cattle breeding (Yes/No)	Ստորագրություն Signature
1	Ալիկո Մկրտչյան	ԱԶԷԶ (աղբյուր)	077440506	-	
2	Աննա Մարտիրոսյան	ԱԶԷԶ (վիլ. Մեծբոկ)	093 598 6 85	-	
3	ՎԱԿՐ Մարգարիտյան	համայնքային ԿԵՆՏՐՈՆ գյուղ. ծառայություն	098239555	-	
4	Մարտիրոսյան ԶԻԿԻ	համայնքային	093 78 7 3 4 4	-	
5	ՉԳՐ. Ծրագրան ՌԵՆԻԿՆԵ	ՕՒԿ. Վերականգնող	093 023 093	-	
6	Խաչատրյան Շեքոն	Սոց. կարգ. ծառայություն	078561568	-	
7	ՉԻՐՈՒՄԱՆ ՊԵՏԿԻԿ	ԲՆԱԿԻԿ	093 73 90 92	-	
8	ՎԱՅՆՅԱՆ ՋԻՐՈՍԻ	ԲՆԱԿԻԿ	098 55 3 5 15	-	
9	Մանուկյան Լևոն	ՄԱՅԻՔԻՑ	098 04 0 3 0 9	-	
10	ՊԵՏՐՈՍՅԱՆ ՊԻՐՄԵ	-	094-63-85-76	-	
11	Մանուկյան Ջուրյան	հասցեային բնակիչ	093 15 15 97	-	
12	Պետրոսյան Միսակյան	Ի ՄԱԿԿ ՄԱՆՈՒՄ	093 73 16 74	-	
13	Գրգորյան Կարոսյան	համայնքային ԿԵՆՏՐՈՆ	098 77-71-67	-	



N	Անուն, ազգանուն Name, Surname	Կարգավիճակ (իսմայլնիցի բնակիչ, ՀԿ ներկայացուցիչ և այլն) / Status (community member, NGO representative etc.)	Հեռ., էլ. փոստ Tel/Email	Զբաղվում անասնապահությամբ (այր/ոչ) / Engaged in cattle breeding (Yes/No)	Ստորագրություն Signature
14	Սիգեազյան Անիտա Յի	համայնքի անդամ	027 043454	Այո, ոչ չհիմարում	
15	Սիգեազյան Արմեն	համայնքի անդամ	093.63.63-33	Այո/ոչ չհիմարում	
16	Արթուր Գևորգյան	ՀԿԸ (օգոստ 2014)	094 402040	-	
17					
18					
19					
20					
21					
22					
23					
24					
25					
26					
27					
28					
29					
30					
31					

**ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՀՈՂԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ (ՀԱՅԵՐԵՆ)**

Նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2017, N \_\_\_\_\_-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԴԻՐԱՄԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի 53-րդ նիստի թիվ 37 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագրի» իրականացման նպատակով՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող՝ 97.3709 հեկտար մակերեսով հողամասը Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամին (այսուհետ՝ Հիմնադրամ) նվիրաբերելուն որպես պետություն-համայնք-մասնավոր համագործակցություն՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը կարող է օգտագործվել բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի 53-րդ նիստի թիվ 37 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. դեկտեմբերի 21-ի N 1679-Ն որոշմամբ սահմանված կարգով «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» գնման ընթացակարգի արդյունքում արևային ֆոտովոլտային կայանի կառուցման և շահագործման նպատակով և դրա նպատակային նշանակությանը համապատասխան:
3. Առաջարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի ղեկավարին՝


1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման N 1 հավելվածում նշված հողամասի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրումը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության ու էներգետիկայի գործառնական նշանակության հողերի.

2) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված աշխատանքների ավարտից հետո տասնօրյա ժամկետում Հիմնադրամի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նվիրաբերության պայմանագրի՝ սահմանված կարգով կնքումը՝ պայմանագրում նախատեսելով սույն որոշման 2-րդ կետում նշված պայմանները և, որ պայմանագրերի նոտարական վավերացման և դրանցից բխող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված՝ օրենքով սահմանված համապատասխան վճարներն ու տուրքերը պետք է վճարվեն Հիմնադրամի միջոցների հաշվին:

4. Առաջարկել Հիմնադրամի տնօրենին՝ սույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պայմանագրի կնքումից հետո այդ կետում նշված գույքը ՀՀ օրենսդրությամբ և Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված կարգով փոխանցել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թ. դեկտեմբերի 21-ի N 1679-Ն որոշմամբ սահմանված կարգով «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» գնման ընթացակարգի արդյունքում մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված անձի կողմից արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի իրականացման նպատակով ստեղծված կազմակերպությանը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ կնքելով Հողամասի փոխանցման պայմանագիր՝ համաձայն սույն Որոշման Հավելված 2 -ի:

**ՍԻԵՄԱ**

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ  
 ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ  
 (97.3709 ՀԵԿՏԱՐ)



Շրջադարձային (բեկման) կետերը	Կոորդինատները		Գծային չափերը (մետր)
	Y	X	
1	8561119,8555	4454460,1224	276,19
2	8560954,3871	4454681,2610	116,43
3	8560904,1609	4454786,2978	447,71
4	8560711,0215	4455190,2052	198,90
5	8560908,6657	4455212,5150	400,43
6	8561402,3295	4455266,6119	400,43
7	8561793,5210	4455181,0899	255,07
8	8562048,5680	4455184,4239	191,91
9	8562210,3797	4455287,5968	219,63
10	8562411,7522	4455375,2692	535,49
11	8562520,1308	4454850,8569	88,37
12	8562452,1489	4454794,3969	93,79
13	8562466,5590	4454701,7211	587,51
14	8561879,1444	4454712,5803	536,60
15	8561358,0098	4454584,6775	268,76

### Հողամասի փոխանցման պայմանագիր

ք. Երևան

\_\_\_.\_\_\_.201\_ թ.

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամը,  
ի դեմս [\_\_\_\_\_.\_\_\_\_\_] (այսուհետ՝ Հիմնադրամ) մի կողմից,

ԵՎ

[\_\_\_\_\_] , ի դեմս [\_\_\_\_\_.\_\_\_\_\_] (այսուհետ՝ Ընկերություն) մյուս կողմից,

#### Հաշվի առնելով, որ՝

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 53 նիստի 37 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել «Արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագրին»:

[\_\_\_\_\_.\_\_\_\_\_.2017 թ.] Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ի կատարումն Ներդրումային Ծրագրի կայացրել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի հիմնադրամին հողամաս նվիրաբերելուն համաձայնություն տալու մասին թիվ [\_\_\_\_\_] որոշումը, որով համաձայնություն է տրվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում գտնվող Հողամասը Հիմնադրամին նվիրաբերելուն:

**Հայաստանի Հանրապետության** Կառավարության Որոշման 4-րդ կետով առաջարկ է ներկայացվել Հիմնադրամին Հողամասը փոխանցել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. դեկտեմբերի 21-ի N 1679-Ն որոշմամբ սահմանված կարգով «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» գնման ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի իրականացման նպատակով ստեղծված կազմակերպությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. դեկտեմբերի 21-ի N 1679-Ն որոշմամբ սահմանված կարգով «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» գնման ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել «\_\_\_\_\_» կազմակերպությունը, ում կողմից \_\_\_.\_\_\_.\_\_\_\_\_ թ.-ին Ներդրումային ծրագրի իրականացման նպատակով ստեղծվել է «\_\_\_\_\_» \_\_\_\_\_ ընկերությունը,

ինչպես նաև, **ղեկավարվելով** ՀՀ Հողային Օրենսգրքի 49-րդ հոդվածով,

կնքեցին սույն Հոդամասի փոխանցման պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Հասկացություններ

- 1.1. **Պայմանագիր՝** սույն Հոդամասի փոխանցման պայմանագիրը, դրա Հավելվածները, Փոփոխությունները և լրացումները:
- 1.2. **Հիմնադրամ՝** «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամը, նրա իրավահաջորդները, ցեսիոներները:
- 1.3. **Ընկերություն՝** «\_\_\_\_\_» ընկերությունը, նրա իրավահաջորդները, թույլատրելի ցեսիոներները:
- 1.4. **Ներդրումային Ծրագիր՝** «Արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիրը» որը հավանության է արժանացել ՀՀ Կառավարության Կողմից 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 53 նիստի 37 արձանագրային որոշմամբ:
- 1.5. **Որոշում՝** Վերականգնվող էներգետիկայի հիմնադրամին հողամաս նվիրաբերելուն համաձայնություն տալու մասին [\_\_\_] թվականի թիվ [\_\_\_\_] որոշումը:
- 1.6. **Հողամաս՝** ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի տարածքում գտնվող՝ 97.3709 հեկտար մակերեսով, [ ] դրամ կադաստրային արժեք ունեցող Հողամասը (սեփականության վկայական թիվ [\_\_\_\_]), ըստ Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի:
- 1.7. **Գերակա գույք՝** ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի իմաստով գերակա գույք, որի սեփականատիրոջ օգտին սահմանված է այլ հողամասի կամ անշարժ գույքի սահմանափակ օգտագործման իրավունք (իրավունքներ)՝ սերվիտուտ (գույքային և (կամ) հարկադիր):
- 1.8. **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նրա իրավահաջորդները:
- 1.9. **Լիցենզիա՝** Հանձնաժողովի որոշմամբ տրամադրվող էլեկտրակայանի կառուցման և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա (Հանձնաժողովի [տարի] թվականի [ամիս]-ի [ամսաթիվ]-ի թիվ [ ] որոշմամբ հաստատված լիցենզիայի պայմաններին համապատասխան):
- 1.10. **Կարգ՝** Հանձնաժողովի կողմից 2013 թ.-ի նոյեմբերի 1-ի էներգետիկայի Բնագավառում Գործունեության Լիցենզավորման Կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին 374-Ն որոշմամբ հաստատված էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման Կարգը և դրա հավելվածները, հաջորդող բոլոր փոփոխություններով և ավելացումներով:

## 2. Պայմանագրի Առարկան

- 2.1. Սույն Պայմանագրով Հիմնադրամը Ընկերության սեփականությանն է հանձնում Հողամասը, իսկ Ընկերությունը պարտավորվում է պահպանել Հողամասը և օգտագործել բացառապես սույն Պայմանագրով սահմանված նպատակով և պահպանել Պայմանագրով սահմանված պայմանները:

### **3. Հողամասը**

3.1. [\_\_\_\_.\_\_\_\_.2017թ.-ին] ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի և Հիմնադրամի միջև կնքվել է հողամասի նվիրաբերության պայմանագիր, որի հիման վրա Հողամասը նվիրաբերվել է Հիմնադրամին:

3.2. Հողամասը հանդիսանում է Գերակա գույք և դրա փոխանցման հետ մեկտեղ փոխանցվում է դրա օգտին սահմանված սահմանափակ օգտագործման իրավունքը (իրավունքները)՝ սերվիտուտը:

3.3. Պայմանագրի կնքման պահին Հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Հիմնադրամին:

3.4. Սույն Պայմանագրի կնքման ամսաթվի դրությամբ Հողամասի նպատակային նշանակությունը սահմանված է որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության ու էներգետիկայի գործառնական նշանակության:

### **4. Հողամասի օգտագործման նպատակը**

4.1. Ընկերությունը պարտավորվում է Հողամասը օգտագործել բացառապես Ներդրումային Ծրագրի իրականացման նպատակով՝ արևային ֆոտովոլտային կայանի (կայանների) կառուցման և շահագործման նպատակով և դրա նպատակային նշանակությանը համապատասխան:

### **5. Հողամասի հանձնումը Ընկերությանը**

5.1. Հիմնադրամը, սույն Պայմանագրի և Հայաստանի Հանրապետության կառավարության ու Ընկերության միջև «Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին» Կառավարության աջակցության համաձայնագրի (այսուհետ՝ ԿԱՀ) կնքումից հետո [տասնօրյա ժամկետում] պարտավորվում է Ընկերությանը փաստացի հանձնել Հողամասը:

5.2. Հողամասի հանձնումը Ընկերությանը իրականացվում է Հիմնադրամի և Ընկերության միջև փոխանցման ակտի հիման վրա:

5.3. Հողամասը Ընկերությանը հանձնելու Հիմնադրամի պարտավորությունը համարվում է պատշաճ ձևով կատարված փոխանցման ակտը Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրելու պահից:

### **6. Հողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները**

6.1. Կողմերը հաստատում են, որ Հողամասը փոխանցվում է Ընկերությանը Ներդրումային Ծրագրի իրականացման նպատակով և այդ նպատակի իրականացման համար Հիմնադրամը սույնով սահմանում է Ընկերության՝ Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի հետևյալ սահմանափակումները՝

6.1.1. Ընկերությունը պարտավորվում է չվաճառել կամ այլ կերպ չօտարել կամ փոխանցել Հողամասը երրորդ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն

Պայմանագրով և ԿԱՀ-ով սահմանված Ընկերության բոլոր իրավունքները և պարտավորությունները զիջվում կամ այլ կերպ փոխանցվում են ի շահ Ընկերության իրավահաջորդների կամ ցեսիոներների Պայմանագրի 10-րդ կետով սահմանված կարգով: Սույն կետով սահմանված սահմանափակումից բացառություն է համարվում նաև **Error! Reference source not found.**-րդ կետով սահմանված կարգով Հողամասի վերադարձը Հիմնադրամին:

6.1.2. Ընկերությունը պարտավորվում է չհանձնել Հողամասը վարձակալության կամ այլ կերպով փոխանցել Հողամասի նկատմամբ իր օգտագործման և/կամ տիրապետման իրավունքները երրորդ անձանց:

6.1.3. Ընկերությունը պարտավորվում է Լիցենզիայով և ԿԱՀ-ով սահմանված կարգով և ժամանակահատվածի ընթացքում Հողամասի վրա կառուցել [\_\_\_] ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան (կայաններ) Ներդրումային Ծրագրին համապատասխան և շահագործել դրանք:

## 7. Պայմանագրի լուծումը

7.1. Կողմերը ընդունում են, որ սույն կետով սահմանված դեպքերը հանդիսանում են Պայմանագրի էական խախտում և Հիմնադրամի մոտ առաջացնում են իրավունք՝ միակողմանիորեն արտադատական կարգով լուծել Պայմանագիրը և պահանջել Ընկերությանը վերադարձնել Հողամասը:

7.2. Ընկերության կողմից սույն պայմանագրի էական խախտում են հանդիսանում հետևյալ դեպքերը՝

7.2.1. ԿԱՀ համաձայն Հողամասի վերադարձման հիմքի առաջացում.

7.2.2. Ընկերությունը, խախտելով սույն պայմանագրի 6.1.1 կետը վաճառել կամ այլ կերպ օտարել կամ փոխանցել է Հողամասը երրորդ անձի, կամ Պայմանագրով իր բոլոր իրավունքներն ու պարտավորությունները կամ դրանց մի մասը փոխանցել է իր իրավահաջորդներին և ցեսիոներներին և չի պահպանել 10-րդ կետի պայմանները.

7.2.3. Լրացել է Լիցենզիայում ամրագրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածը և Ընկերությունը սահմանված կարգով հայտ չի ներկայացրել Հանձնաժողովին արտադրության գործունեության իրականացման ժամկետը երկարաձգելու մասին կամ Հանձնաժողովի կողմից որոշում է ընդունվել ներկայացված հայտը մերժելու մասին, պայմանով, որ Լիցենզիայի գործողության ժամանակահատվածի լրանալուց հետո չկան էլեկտրական էներգիայի (հզորության) էներգիայի արտադրության գործունեություն իրականացնելու այլ օրինական հիմքեր և Ընկերությունը չի շարունակում արտադրել արևային էներգիա նշված հիմքերով:

7.3. Ընկերության կողմից պայմանագրի էական խախտում թույլ տալու դեպքում, Հիմնադրամն Ընկերությանն է ներկայացնում Պայմանագրի միակողմանի արտադատական կարգով լուծման և Հողամասը վերադարձնելու պահանջի մասին ծանուցում սահմանելով Հողամասը վերադարձնելու ժամկետ, որը չի կարող պակաս լինել ծանուցումը ստանալու պահից [6 ամիս] ժամկետից:



7.4. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը Հիմնադրամին իրականացվում է Հիմնադրամի և Ընկերության միջև փոխանցման ակտի հիման վրա: Եթե Հողամասի վերադարձման պահին Ընկերության կատարած բաժանելի բարելավումները չեն ապամոնտաժվել կամ այլ կերպով հեռացվել Հողամասի տարածքից, Հողամասի փոխանցման հետ մեկտեղ, Հիմնադրամին է փոխանցվում նշված բաժանելի բարելավումների նկատմամբ սեփականության իրավունքը, եթե այլ բան չի սահմանվել կողմերի համաձայնությամբ:

7.5. Հողամասը Հիմնադրամին վերադարձնելու պարտավորությունը համարվում է կատարված և Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է Հիմնադրամին փոխանցման ակտը Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրելու պահից:

7.6. Անկախ այն հանգամանքից, թե ինչ հիմքով է Հողամասը վերադարձվում Հիմնադրամին, Ընկերության կատարած անբաժանելի բարելավումները և վերադարձման պահին Հողամասի տարածքում գտնվող բաժանելի բարելավումները չեն հատուցվում, եթե այլ բան չի սահմանվել Կողմերի միջև կնքված գրավոր համաձայնությամբ:

## **8. Պայմանագրի փոփոխումը**

8.1. Սույն Պայմանագրի բոլոր փոփոխությունները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և ենթակա են նոտարական կարգով վավերացման:

## **9. Ծանուցումներ**

9.1. Սույն պայմանագրի ներքո կատարման ենթակա ցանկացած ծանուցում կամ այլ հաղորդակցություն կատարվում է գրավոր ձևով: Պայմանագրի շրջանակներում իրականացված ծանուցումը կամ հաղորդակցությունը համարվում է պատշաճ կերպով իրականացված, երբ այն ուղարկվում է կողմի ներքոնշյալ հասցեով (ծանուցման ամսաթիվ է համարվում ստացման մասին փոստային ծանուցման մեջ նշված ստացման ամսաթիվը) կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ ստորև նշված Կողմի էլեկտրոնային հասցեին (ծանուցման օր է համարվում էլեկտրոնային նամակը Կողմի էլեկտրոնային փոստին ուղարկելու ամսաթիվը): Կողմերի կոնտակտային տվյալներն են՝

### **Հիմնադրամի համար՝**

Փոստային Հասցե՝

Էլ. Փոստ՝

Կոնտակտային անձ՝

### **Ընկերության համար՝**

Փոստային Հասցե՝

Էլ. Փոստ՝

Կոնտակտային անձ՝

## **10. Իրավահաջորդներ և ցեսիոներներ**

10.1. Սույն Պայմանագիրը պարտավորեցնում է և գործում է ի շահ Կողմերի իրավահաջորդների և ցեսիոներների:

10.2. Ընկերությունը սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքները և պարտավորությունները կարող է զիջել կամ այլ կերպով փոխանցել միայն ԿԱՀ-ով սահմանված իրավունքների և պարտավորությունների հետ միաժամանակ՝ ԿԱՀ 20.2 հոդվածին համապատասխան:

10.3. Եթե ԿԱՀ լուծման հետևանքով Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացրել է Ընկերությունից ԿԱՀ համապատասխան կառուցված կայանը ձեռք բերելու իր իրավունքը կամ պարտականությունը, Հողամասը ենթակա է տնօրինման՝ ԿԱՀ-ով սահմանված կարգով:

10.4. Հիմնադրամը սույն Պայմանագրով սահմանված իր բոլոր իրավունքները և պարտավորությունները, կամ դրանց մի մասը կարող է զիջել կամ այլ կերպով փոխանցել՝ այդ մասին առնվազն 1 օր առաջ նախապես ծանուցելով Ընկերությանը:

## 11. Այլ պայմաններ

11.1. Սույն Պայմանագրի շրջանակներում կամ առնչությամբ տրվող կամ ներկայացվող ծանուցումները և այլ փաստաթղթերը կատարվում են անգլերեն լեզվով:

11.2. Պայմանագիրը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքով և մեկնաբանվում է դրա համաձայն, բացառելով կոլիզիոն նորմերի կիրառումը:

11.3. Սույն Պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է Հիմնադրամը:

11.4. Սույն Պայմանագիրը կնքված է [հայերեն և անգլերեն լեզուներով]: Հայերեն և անգլերեն լեզուներով տեքստերի միջև տարբերության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն լեզվով տեքստին]:

## 12. Մասնակիցների վավերապայմանները և ստորագրությունները.

**«Հայաստանի վերականգնվող  
էներգետիկայի և  
էներգախնայողության» հիմնադրամ**

Գտնվելու վայրը՝ [\_\_\_\_]

Էլ. հասցե՝ [\_\_\_\_]

ՀՎՀՀ 02580459

Տնօրեն՝

**Ընկերություն**

Գտնվելու վայրը՝ [\_\_\_\_]

Էլ. հասցե՝ [\_\_\_\_]

ՀՎՀՀ

Տնօրեն՝

\_\_\_\_\_

\_\_\_\_\_



## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

### 1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին հողամաս նվիրաբերելուն համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 53 նիստի N 37 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագրի» իրականացման նպատակներից և միտված է նպաստելու ծրագրի շրջանակում ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում Մասրիկ 1 46-ից 55 ՄՎտ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. դեկտեմբերի 21-ի N 1679-Ն որոշմամբ սահմանված կարգով «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» գնման ընթացակարգով կազմակերպվելիք մրցույթի պայմանների հստակեցմանն ու արդյունավետության բարձրացմանը:

### 2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում Մասրիկ 1 46-ից 55 ՄՎտ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. դեկտեմբերի 21-ի N 1679-Ն որոշմամբ սահմանված կարգով «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» գնման ընթացակարգով կազմակերպվելիք մրցույթը ներկայումս գտնվում է նախապատրաստման փուլում և խնդիրներից մեկը մրցույթի պայմանների հնարավորինս հստակեցումն է՝ այդ թվում կայանի կառուցման նպատակով հատկացվելիք հողամասի կարգավիճակի և դրա նկատմամբ իրավունքների օտարման մոտեցումների առումով:

**Հողամասի բնութագիրը:** Հողամասի ընտրությունը և տարածքի անհրաժեշտ չափի գնահատումը կատարված է ÁF-Aries Energía, S.L խորհրդատվական ընկերության կողմից 2017 թվականի ապրիլին՝ Մասրիկ 1 ծրագրի տեխնիկա-տնտեսական հիմանավորում (տե՛ս կից):

Վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածք:

Սեփականությունը՝ համայնքային:


Նշանակությունը՝ գյուղատնտեսական (արոտավայր):

Տարածքի համապատասխանությունը ծրագրին՝ տեղանքի նախնական վերլուծությունների արդյունքները ցույց են տվել, որ ֆոտովուլտային կայանի համար ընտրված տարածքը համապատասխան է. լավ արևային ռեսուրս, լավ կոմունիկացիոն ենթակառուցվածքներ, համապատասխան ուղղություն՝ առանց շրջակա միջավայրի խոչընդոտների և առանց ծառերի կամ որևէ շենքերի, որոնք կարող են ստվեր գցել՝ նվազեցնելով ֆոտովուլտային մոդուլների արդյունավետության գործակիցը:

Սահմանափակումները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները բացակայում են:

Ձափը՝ ՖՎ կայանի կողմից զբաղեցված ընդհանուր տարածքը մոտ 973409 մ<sup>2</sup> է՝ ինչպես ցույց է տրված հետևյալ նկարում:

**Նկար – Տարածքի սխեմատիկ ներկայացում**



Շրջադարձային (բեկման) կետերը	Կոորդինատները		Գծային չափերը (մետր)
	Y	X	
1	8561119,8555	4454460,1224	276,19
2	8560954,3871	4454681,2610	116,43
3	8560904,1609	4454786,2978	447,71
4	8560711,0215	4455190,2052	198,90
5	8560908,6657	4455212,5150	400,43
6	8561402,3295	4455266,6119	400,43
7	8561793,5210	4455181,0899	255,07
8	8562048,5680	4455184,4239	191,91
9	8562210,3797	4455287,5968	219,63
10	8562411,7522	4455375,2692	535,49
11	8562520,1308	4454850,8569	88,37
12	8562452,1489	4454794,3969	93,79
13	8562466,5590	4454701,7211	587,51

Շրջադարձային (բեկման) կետերը	Կորրոկիւնատները		Գծային չափերը (մետր)
	Y	X	
14	8561879,1444	4454712,5803	536,60
15	8561358,0098	4454584,6775	268,76

### 3. Կարգավորման բնույթը

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում Մասրիկ 1 46-ից 55 ՄՎտ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման նպատակով հողամասի փոխանցման գործարքի համար ընտրվել է նվիրաբերության փուլային եղանակը՝ նախապես համայնքի կողմից հողամասի նպատակային նշանակության համապատասխան փոփոխությամբ:

Այս եղանակը ընտրված է նպատակ ունենալով՝

ա) ապահովել հողամասի նպատակային օգտագործումը.

բ) համապատասխան նպատակային նշանակության հողամասի սեփականության իրավունքը փոխանցել Հիմնադրամին՝ ՀՀ կառավարության անունից ծրագրի պատասխանատուին, հնարավորինս սեղմ ժամկետներում և առանց ֆինանսական պարտավորությունների: Առավել ցանկալի, որ դա իրականացվի մինչև մրցույթի հայտարարելը,

գ) մրցույթի մասնակիցների համար որոշակի դարձնել հողամասի կարգավիճակը և դրա նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման ծախսերի մեծության կանխատեսելիությունը:

### 4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ:

### 5. Ակնկալվող արդյունքը

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին հողամաս նվիրաբերելուն համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման պարագայում կհստակեցվեն ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում Մասրիկ 1 46-ից 55 ՄՎտ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման նպատակով կազմակերպվելիք մրցույթի պայմանները, մրցույթի մասնակիցների համար կորոշակիանա հողամասի կարգավիճակը և դրա նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման ծախսերի մեծությունը կդառնա հեշտ կանխատեսելի, ինչպես նաև կմեղմվեն հողամասի կարգավիճակով կամ դրա հատկացմանը վերաբերող խնդիրներով պայմանավորված մրցույթի ամփոփման երկարաձգման (ուշացումների) հնարավոր ռիսկերը:

### 6. Եկամուտների և ծախսերի վրա ազդեցության գնահատական

## 6.1. Պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա ազդեցությունը

բ) Պետական բյուջեի եկամուտներ<sup>11</sup> պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցություն չունի:

ա) Պետական բյուջեի ծախսեր պետական բյուջեի ծախսերի վրա ազդեցություն չունի:

## 6.2. Համայնքային բյուջեի եկամուտների և ծախսերի վրա ազդեցությունը

ա) Համայնքային բյուջեի եկամուտներ համայնքային բյուջեի եկամուտների մասով ազդեցությունը գնահատվում է դրական՝

- գույքահարկ՝ ըստ գնահատականների տարեկան լրացուցիչ՝ շուրջ 4.1 մլն դրամ.
- հողի հարկ՝ ըստ գնահատականների տարեկան լրացուցիչ՝ շուրջ 1.4 մլն դրամ:

Նշված եկամուտներից զատ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. դեկտեմբերի 21-ի N 1679-Ն որոշմամբ սահմանված կարգով «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» գնման ընթացակարգի արդյունքում հաղթող մասնակիցը միանվագ վճար է փոխանցելու համայնքային բյուջե՝ 80 մլն դրամի չափով՝ համայնքի զարգացման համար:

բ) Համայնքային բյուջեի ծախսեր համայնքային բյուջեի ծախսերի վրա ազդեցություն չունի:

*Ծանոթագրություն . Մեծ Մասրիկ համայնքի բյուջեի սեփական եկամուտների մասին (փաստացի ցուցանիշներ, 2016 թ.)*

*Ընդամենը սեփական եկամուտներ՝ 15.67 մլն դրամ*

*Գույքահարկ անշարժ գույքից՝ 0 մլն դրամ*

*Գույքահարկ տրանսպորտային միջոցներից՝ 7.04 մլն դրամ*

*Հողի հարկ՝ 5.89 մլն դրամ*

*Համայնքային սեփականության հողերի վարձակալության վճար՝ 2.41 մլն դրամ*

*Այլ եկամուտներ՝ 0.33 մլն դրամ*

<sup>11</sup> ԱԱՀ մասով: «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված է. ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում)՝ 2) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների հիման վրա՝ հարկ վճարողների կողմից ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքները:

Շահութահարկի մասով: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված է.

Սույն օրենքի իմաստով՝ եկամուտ չեն համարվում ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները) և ծառայությունները:

## ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՀՈՂԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Draft (20/12/2017)

### LAND DONATION AGREEMENT

**Yerevan**

[\_\_\_\_\_]

Mets Masrik community of Gegharkunik Region (hereafter the Community), represented by the Head of the Community [\_\_\_\_\_] on one side and Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund (hereafter the Fund) on the other side,

**whereas**, the Government of RA has approved the Solar Photovoltaic Plants' Construction Investment Plan by Protocol Decree N 37 of session N 53 (hereafter the Decree),

**whereas**, with a view of implementing the Investment Plan, the Government of RA has adopted a decision No [\_\_\_\_\_] on Giving agreement to donating a land plot to Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund, dated [\_\_\_\_\_] , under which an agreement has been given to donation of the Land located in the administrative area of Gegharkunik region, Mets Masrik community to the Fund,

concluded this Land Donation Agreement (hereafter the Agreement) on the following:

#### **Subject of the Agreement**

Under this Agreement the Community donates to the Fund a land plot of 97.4 ha in area located in the administrative territory of Mets Masrik Community in RA Gegharkunik Region (Certificate of ownership No [\_\_\_\_\_] , as in the Annex 1 of this Agreement, hereafter the Land) with the exclusive purpose of implementation of the investment plan approved by procedural decision of the Government of RA dated 29 December 29, 2016 N 37, session N 53 for construction and operation of solar photovoltaic power plant to be developed as a result of procurement procedure conducted for "Masrik-1 Utility-Scale Solar Photovoltaic Project in Armenia" in accordance with the Government of RA decree N [\_\_\_\_\_] dated [\_\_\_\_\_] [\_\_\_\_\_] , 2017 and in line with its intended purpose.

Within the scope of this Agreement, the Fund is obligated to transfer the Land received as donation under this Agreement, in accordance to the procedure established by the RA legislation and the Charter of the Fund, to the organization established for construction of solar photovoltaic power plant by the entity that has been the successful bidder of the procurement procedure conducted for "Masrik-1 Utility-Scale Solar Photovoltaic Project in Armenia" in accordance with the Government of RA decree N [\_\_\_\_\_] dated [\_\_\_\_\_] [\_\_\_\_\_] , 2017 (hereafter the Company) by concluding a Land Transfer Agreement in accordance with the Annex 2 of the the Government of RA decree N [\_\_\_\_\_] dated [\_\_\_\_\_] [\_\_\_\_\_] , 2017.



In the event if due to material breach of the Land Transfer Agreement by the Company an obligation to return the Land to the Community has arisen, the Fund shall request the Company to return the ownership rights over the Land.

### **The Land**

The Community warrants, that the it owns the Land, the Land is not sold and is not a subject of judicial dispute, the Land is not pledged, leased or subject to uncompensated use or limited otherwise, or under seizure.

Under this agreement the Community transfers to the ownership of the Fund the whole unit of real estate owned by the Donor as determined under Certificate N \_\_\_\_\_ issued on \_\_\_\_\_ by the State Committee of the Real Estate Cadastre of the Government of the Republic of Armenia.

At the moment of conclusion of this Agreement the purpose of the Land is energy, transport, communication, utility infrastructure facilities and energy operational purpose.

### **Other Provisions**

This agreement is concluded in four originals, which have equal legal force. Each party holds one copy, one copy should be given to the notary and one copy to the relevant subdivision of the State Committee of the Real Estate Cadastre of the Government of the Republic of Armenia.

### **Signatures and Requisites of the Parties**

#### **The Community**

Mets Masrik community of RA Gegharkunik  
Region

#### **Fund**

Armenia Renewable Resources and Energy  
Efficiency Fund  
Address [\_\_\_\_]  
Email [\_\_\_\_]  
TIN: 02580459

\_\_\_\_\_  
Head of Community

\_\_\_\_\_  
Director

**ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՀՈՂԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Նախագիծ (20/12/2017)

**Հողամասի փոխանցման պայմանագիր**

Draft (20/12/2017)

**Land Transfer Agreement**

**ք. Երևան**

\_\_.\_\_.201\_\_ թ.

**Yerevan**

\_\_.\_\_.201\_\_

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը», ի դեմս [\_\_\_\_\_.\_\_\_\_\_] ի (այսուհետ՝ Հիմնադրամ) մի կողմից, ԵՎ

[\_\_\_\_\_] ի դեմս [\_\_\_\_\_.\_\_\_\_\_] (այսուհետ՝ Ընկերություն) մյուս կողմից,

**հաշվի առնելով, որ՝**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 53 նիստի 37 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել «Արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագրին».

[\_\_.\_\_.2017 թ.] Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ի կատարումն Ներդրումային Ծրագրի կայացրել է Հայաստանի Վերականգնվող էներգետիկայի հիմնադրամին հողամաս նվիրաբերելուն համաձայնություն տալու մասին թիվ [\_\_\_\_\_] որոշումը, որով համաձայնություն է տրվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում գտնվող Հողամասը Հիմնադրամին նվիրաբերելուն.

Հայաստանի Հանրապետության Կառավարության Որոշման 4-րդ կետով առաջարկ է ներկայացվել Հիմնադրամին Հողամասը փոխանցել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թ. [\_\_\_\_\_] [\_\_] N [\_\_\_\_\_] որոշմամբ սահմանված կարգով «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» գնման

**Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund**, represented by [\_\_\_\_\_.\_\_\_\_\_] (hereafter the Fund) from one side,

AND

[\_\_\_\_\_] represented by [\_\_\_\_\_] (hereafter the Company) from the other side,

**whereas,**

the Government of RA has approved the Solar Photovoltaic Plants' Construction Investment Plan by Protocol Decree N 37 of session N 53;

with a view of implementing the Investment Plan, the Government of RA has adopted a decision No [\_\_\_\_\_] on Giving agreement to donating a land plot to Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund, dated [\_\_\_\_\_] under which an agreement has been given to donation of the Land located in the administrative area of Gegharkunik region, Mets Masrik community to the Fund;

under article 4 of the Decision of the Government of RA a proposal has been made to the Fund to transfer the Land to the organisation established for construction of solar photovoltaic power plant by the entity that has been the successful bidder of procurement procedure conducted for "Masrik-1 Utility-Scale Solar Photovoltaic Project in Armenia" in accordance

ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրի իրականացման նպատակով ստեղծված կազմակերպությանը.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թ. [\_\_\_\_\_] [\_\_] N [\_\_] որոշմամբ սահմանված կարգով «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» գնման ընթացակարգի արդյունքում մրցույթի արդյունքներով հաղթող է ճանաչվել «\_\_\_\_\_» կազմակերպությունը, ում կողմից \_\_.\_\_\_\_.\_\_\_\_ թ.-ին Ներդրումային ծրագրի իրականացման նպատակով ստեղծվել է «\_\_\_\_\_» \_\_\_\_\_ ընկերությունը, ինչպես նաև, **ղեկավարվելով** ՀՀ Հողային Օրենսգրքի 49-րդ հոդվածով, կնքեցին սույն Հողամասի փոխանցման պայմանագիրը հետևյալի մասին.

#### **Հասկացություններ**

**Պայմանագիր՝** սույն Հողամասի փոխանցման պայմանագիրը, դրա Հավելվածները. Փոփոխությունները և լրացումները.

**Հիմնադրամ՝** «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամը, նրա իրավահաջորդները, ցեսիոներները.

**Ընկերություն՝** «\_\_\_\_\_» ընկերությունը, նրա իրավահաջորդները, թույլատրելի ցեսիոներները.

**Ներդրումային Ծրագիր՝** «Արևային ֆոտովոլտային կայանների կառուցման ներդրումային ծրագիրը» որը հավանության է արժանացել ՀՀ Կառավարության Կողմից 2016 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 53 նիստի 37 արձանագրային որոշմամբ.

**Որոշում՝** Վերականգնվող էներգետիկայի հիմնադրամին հողամաս նվիրաբերելուն համաձայնություն տալու մասին [\_\_] թվականի թիվ [\_\_\_\_] որոշումը.

**Հողամաս՝** ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի տարածքում գտնվող՝

with the Government of RA decree N [\_\_\_\_] dated [\_\_\_\_\_] [\_\_\_\_], 2017;

as a result of procurement procedure conducted for "Masrik-1 Utility-Scale Solar Photovoltaic Project in Armenia" in accordance with the Government of RA decree N [\_\_\_\_] dated [\_\_\_\_\_] [\_\_\_\_], 2017 [\_\_\_\_] has been acknowledged the winner, and [\_\_\_\_] has been established for implementation of the Investment Plan;

as well as, **governed by** Article 49 of the Land Code of RA, concluded this Land Transfer Agreement on the following:

#### **Definitions**

**Agreement-** this Land Transfer Agreement, its Annexes, Amendments and Addendums;

**Fund-** Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund, its successors and assignees;

**Company-** [\_\_\_\_], its successors and permitted assignees;

**Investment Plan-** Solar Photovoltaic Plants' Construction Investment Plan, approved by Protocol Decree N 37 of session N 53 of the Government of RA;

**Decision-** decision No [\_\_\_\_] on Giving agreement to donating a land plot to Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund, dated [\_\_\_\_];

**The Land-** land plot of 97.3709 ha in area and AMD [ ] in cadastral value located in the

97.3709 հեկտար մակերեսով, [ ] դրամ կադաստրային արժեք ունեցող Հողամասը (սեփականության վկայական թիվ [\_\_\_\_]), ըստ Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի.

**Գերակա գույք՝** ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի իմաստով գերակա գույք, որի սեփականատիրոջ օգտին սահմանված է այլ հողամասի կամ անշարժ գույքի սահմանափակ օգտագործման իրավունք (իրավունքներ)՝ սերվիտուտ (գույքային և (կամ) հարկադիր).

**Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նրա իրավահաջորդները.

**Լիցենզիա՝** Հանձնաժողովի որոշմամբ տրամադրվող էլեկտրակայանի կառուցման և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա (Հանձնաժողովի [տարի] թվականի [ամիս]-ի [ամսաթիվ]-ի թիվ [ ] որոշմամբ հաստատված լիցենզիայի պայմաններին համապատասխան).

**Կարգ՝** Հանձնաժողովի կողմից 2013 թ.-ի նոյեմբերի 1-ի էներգետիկայի Բնագավառում Գործունեության Լիցենզավորման Կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին 374-Ն որոշմամբ հաստատված էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման Կարգը և դրա հավելվածները, հաջորդող բոլոր փոփոխություններով և ավելացումներով:

#### **Պայմանագրի Առարկան**

Սույն Պայմանագրով Հիմնադրամը Ընկերության սեփականությանն է հանձնում Հողամասը, իսկ Ընկերությունը պարտավորվում է պահպանել Հողամասը և օգտագործել բացառապես սույն Պայմանագրով սահմանված նպատակով և պահպանել Պայմանագրով սահմանված պայմանները:

#### **Հողամասը**

[\_\_.\_\_.2017թ.-ին] ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի և Հիմնադրամի միջև կնքվել է հողամասի

administrative territory of Mets Masrik Community in RA Gegharkunik Region (Certificate of ownership No [\_\_\_\_], as in the Annex 1 of this Agreement);

**Principal property-** Principal property with the meaning of the Civil Code of RA, the owner of which has been granted with limited right (rights) of use over other land plot or immovable property- servitude (voluntary and (or) compulsory);

**Commission** – Public Services Regulatory Commission;

**License** – means license for power plant construction and for electricity (capacity) production issued by Decree of the Commission (in form of terms and conditions of the license approved by Commission No. [ ] dated [Day] [Month] [Year]);

**The Regulation-** The Regulation on licensing in the energy sector and its Annexes approved by decision No 374-N on approval of the regulation on licensing in Energy Sector and rendering certain decisions void of the Commission, dated 1<sup>st</sup> November 2013, including all the future amendments and additions.

#### **The Subject of the Agreement**

Under this Agreement the Fund transfers to the ownership of the Company the Land, and the Company undertakes to maintain the Land and use it exclusively with the Purpose established under the Agreement and comply with the terms and conditions of the Agreement.

#### **The Land**

On [\_\_\_\_] a Land Donation agreement has been concluded between Mets Masrik Community of

նվիրաբերության պայմանագիր, որի հիման վրա Հողամասը նվիրաբերվել է Հիմնադրամին:

Հողամասը հանդիսանում է Գերակա գույք և դրա փոխանցման հետ մեկտեղ փոխանցվում է դրա օգտին սահմանված սահմանափակ օգտագործման իրավունքը (իրավունքները)՝ սերվիտուտը:

Պայմանագրի կնքման պահին Հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Հիմնադրամին:

Սույն Պայմանագրի կնքման ամսաթվի դրությամբ Հողամասի նպատակային նշանակությունը սահմանված է որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության ու էներգետիկայի գործառնական նշանակության:

#### **Հողամասի օգտագործման նպատակը**

Ընկերությունը պարտավորվում է Հողամասը օգտագործել բացառապես Ներդրումային Ծրագրի իրականացման նպատակով՝ արևային ֆոտովոլտային կայանի (կայանների) կառուցման և շահագործման նպատակով և դրա նպատակային նշանակությանը համապատասխան:

#### **Հողամասի հանձնումը Ընկերությանը**

Հիմնադրամը, սույն Պայմանագրի և Հայաստանի Հանրապետության կառավարության ու Ընկերության միջև «Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին» Կառավարության աջակցության համաձայնագրի (այսուհետ՝ ԿԱՀ) կնքումից հետո [տասնօրյա ժամկետում] պարտավորվում է Ընկերությանը փաստացի հանձնել Հողամասը:

Gegharkunik, based on which The Land has been donated to the Fund.

The Land is a Principal property and in line with its transfer the right (rights) of limited use- the servitude established to the benefit of the Land is also transferred.

At the moment of conclusion of this Agreement, the Land is owned by the Fund.

At the moment of conclusion of this Agreement the purpose of the Land is energy, transport, communication, utility infrastructure facilities and energy operational purpose.

#### **The purpose of use of Land**

The Company undertakes to use the Land exclusively for implementation of the Investment Plan for construction and operation of solar photovoltaic power plant (plants) and in line with its intended purpose.

#### **Transfer of the Land to the Company**

The Fund, within [10 days] following conclusion of this Agreement and the Government Support Agreement between the Government of the Republic of Armenia and the Company Design, Finance, Build, Own and Operate Masrik-1 solar photovoltaic (PV) Power Plant at municipality of Mets Masrik in the Gegharkunik Marz (Region) Armenia Armenia (hereinafter referred to as GSA), shall transfer the Land to the Company.

Հողամասի հանձնումը Ընկերությանը իրականացվում է Հիմնադրամի և Ընկերության միջև փոխանցման ակտի հիման վրա:

Հողամասը Ընկերությանը հանձնելու Հիմնադրամի պարտավորությունը համարվում է պատշաճ ձևով կատարված փոխանցման ակտը Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրելու պահից:

### **Հողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները**

Կողմերը հաստատում են, որ Հողամասը փոխանցվում է Ընկերությանը Ներդրումային Ծրագրի իրականացման նպատակով և այդ նպատակի իրականացման համար Հիմնադրամը սույնով սահմանում է Ընկերության՝ Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի հետևյալ սահմանափակումները՝

Ընկերությունը պարտավորվում է չվաճառել կամ այլ կերպ չօտարել կամ փոխանցել Հողամասը երրորդ անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Պայմանագրով և ԿԱՀ-ով սահմանված Ընկերության բոլոր իրավունքները և պարտավորությունները զիջվում կամ այլ կերպ փոխանցվում են ի շահ Ընկերության իրավահաջորդների կամ ցեսիոներների Պայմանագրի 10-րդ կետով սահմանված կարգով: Սույն կետով սահմանված սահմանափակումից բացառություն է համարվում նաև **Error! Reference source not found.**-րդ կետով սահմանված կարգով Հողամասի վերադարձը Հիմնադրամին:

Ընկերությունը պարտավորվում է չհանձնել Հողամասը վարձակալության կամ այլ կերպով փոխանցել Հողամասի նկատմամբ իր օգտագործման և/կամ տիրապետման իրավունքները երրորդ անձանց:

Ընկերությունը պարտավորվում է Լիցենզիայով և ԿԱՀ-ով սահմանված կարգով և ժամանակահատվածի ընթացքում Հողամասի վրա կառուցել [\_\_\_] ՄՎտ

Transfer of the Land to the company shall be done based on a Transfer act between the Fund and the Company.

The obligation of the Fund to transfer the Land to the Company is deemed as duly completed when the transfer act is signed by the authorised representatives of the Parties.

### **Limitations of the rights over the Land**

The parties establish, that the Land is transferred to the Company with the view implementation of the Investment Plan and in order to pursue the purpose the Fund hereby defines the following limitations to the ownership rights of the Company over the Land:

The Company undertakes not to sell or alienate in other way or transfer the Land to third parties, except for the cases when all of the rights and obligations of the Company established under this Agreement and the GSA are transferred to the benefit of the Company's subsidiaries or assignees in the manner prescribed under article 10 of this Agreement. Furthermore, return of the Land to the Fund in the manner prescribed under article 7 of this Agreement is considered as an exception from the limitation established hereby;

The Company undertakes not to lease or transfer in any other way the rights the rights to use and/or possess the Land to third parties;

The Company undertakes to construct solar photovoltaic power plan (plants) with an installed capacity of [\_\_\_] MW in a manner and period established under the License and GSA in

հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան (կայաններ) Ներդրումային Ծրագրին համապատասխան և շահագործել դրանք:

### **Պայմանագրի լուծումը**

Կողմերը ընդունում են, որ սույն կետով սահմանված դեպքերը հանդիսանում են Պայմանագրի էական խախտում և Հիմնադրամի մոտ առաջացնում են իրավունք՝ միակողմանիորեն արտադատական կարգով լուծել Պայմանագիրը և պահանջել Ընկերությանը վերադարձնել Հողամասը:

Ընկերության կողմից սույն պայմանագրի էական խախտում են հանդիսանում հետևյալ դեպքերը՝

ԿԱՀ համաձայն Հողամասի վերադարձման հիմքի առաջացում.

Ընկերությունը, խախտելով սույն պայմանագրի 6.1.1 կետը վաճառել կամ այլ կերպ օտարել կամ փոխանցել է Հողամասը երրորդ անձի, կամ Պայմանագրով իր բոլոր իրավունքներն ու պարտավորությունները կամ դրանց մի մասը փոխանցել է իր իրավահաջորդներին և ցեսիոներներին և չի պահպանել 10-րդ կետի պայմանները:

Լրացել է Լիցենզիայում ամրագրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածը և Ընկերությունը սահմանված կարգով հայտ չի ներկայացրել Հանձնաժողովին արտադրության գործունեության իրականացման ժամկետը երկարաձգելու մասին կամ Հանձնաժողովի կողմից որոշում է ընդունվել ներկայացված հայտը մերժելու մասին, պայմանով, որ Լիցենզիայի գործողության ժամանակահատվածի լրանալուց հետո չկան էլեկտրական էներգիայի (հզորության) էներգիայի արտադրության գործունեություն իրականացնելու այլ օրինական հիմքեր և Ընկերությունը չի շարունակում արտադրել արևային էներգիա նշված հիմքերով:

Ընկերության կողմից պայմանագրի էական խախտում թույլ տալու դեպքում, Հիմնադրամն

accordance with the Investment Plan, and operate them.

### **Termination of the Agreement**

The Parties acknowledge that the events defined hereunder are considered as material breach of this Agreement and shall trigger the right of the Fund to terminate this Agreement unilaterally in extrajudicial manner and claim the Company to return the Land.

The following events shall be considered as material breach of this Agreement by the Company:

Occurrence of grounds under the GSA for returning the Land;

The Company in breach of article 6.1.1. of this Agreement has sold or alienated in other way or transferred the Land to a third party, or has transferred all of its rights and obligations or a part of them to its successors or assignees and has not complied with requirements of article 10.

The period of implementation of generation of electric energy (power) has expired and the Company has not filed a request in the prescribed manner on extension of the period of implementation of generation or the Commission has adopted a decision on rejecting the presented request, provided that after expiration of the relevant period there are no other legal grounds for implementation of generation of electric energy (power), and the company doesn't continue to produce energy based on the said legal grounds.

In the event of material breach of Company, the Fund presents a notification on unilateral

Ընկերությանն է ներկայացնում Պայմանագրի միակողմանի արտադատական կարգով լուծման և Հողամասը վերադարձնելու պահանջի մասին ծանուցում սահմանելով Հողամասը վերադարձնելու ժամկետ, որը չի կարող պակաս լինել ծանուցումը ստաբալու պահից [6 ամիս] ժամկետից:

Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը Հիմնադրամին իրականացվում է Հիմնադրամի և Ընկերության միջև փոխանցման ակտի հիման վրա: Եթե Հողամասի վերադարձման պահին Ընկերության կատարած բաժանելի բարելավումները չեն ապամոնտաժվել կամ այլ կերպով հեռացվել Հողամասի տարածքից, Հողամասի փոխանցման հետ մեկտեղ, Հիմնադրամին է փոխանցվում նշված բաժանելի բարելավումների նկատմամբ սեփականության իրավունքը, եթե այլ բան չի սահմանվել կողմերի համաձայնությամբ:

Հողամասը Հիմնադրամին վերադարձնելու պարտավորությունը համարվում է կատարված և Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է Հիմնադրամին փոխանցման ակտը Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրելու պահից:

Անկախ այն հանգամանքից, թե ինչ հիմքով է Հողամասը վերադարձվում Հիմնադրամին, Ընկերության կատարած անբաժանելի բարելավումները և վերադարձման պահին Հողամասի տարածքում գտնվող բաժանելի բարելավումները չեն հատուցվում, եթե այլ բան չի սահմանվել Կողմերի միջև կնքված գրավոր համաձայնությամբ:

#### **Պայմանագրի փոփոխումը**

Սույն Պայմանագրի բոլոր փոփոխությունները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և ենթակա են նոտարական կարգով վավերացման:

#### **Ծանուցումներ**

Սույն պայմանագրի ներքո կատարման ենթակա ցանկացած ծանուցում կամ այլ

extrajudicial termination of the Agreement and on request of returning the Land and determining a period for the return of Land which shall not be less than [6 months] from the moment such notice is received.

Transfer of the ownership rights over the land of Land to the Fund is performed based on a transfer act between the Fund and the Company. If at the moment of the return Land, there are detachable improvements are not dismantled or removed in other way from the territory of the Land, in line with the Transfer of Land the ownership rights over the mentioned detachable improvements shall also be transferred to the Fund unless otherwise agreed by the parties.

The obligation of return of the Land to the Fund is considered as completed and the ownership rights over the Land is transferred from the moment when the Transfer act is signed by the authorised representatives of the Parties.

Irrespective of the grounds, based on which the Land is returned to the Fund, no compensation shall be made for the integral improvements of the land and the detachable improvements found within the territory of the Land at the moment of transfer, unless otherwise agreed by the written agreement of Parties.

#### **Amendment of the Agreement**

All of the amendments to this Agreement shall be done by mutual agreement of the Parties which is subject to approval by a notary.

#### **Notices**

Any notice or communication to be made under this Agreement shall be made in written. Notice



հաղորդակցություն կատարվում է գրավոր ձևով: Պայմանագրի շրջանակներում իրականացված ծանուցումը կամ հաղորդակցությունը համարվում է պատշաճ կերպով իրականացված, երբ այն ուղարկվում է կողմի ներքոնշյալ հասցեով (ծանուցման ամսաթիվ է համարվում ստացման մասին փոստային ծանուցման մեջ նշված ստացման ամսաթիվը) կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ ստորև նշված Կողմի էլեկտրոնային հասցեին (ծանուցման օր է համարվում էլեկտրոնային նամակը Կողմի էլեկտրոնային փոստին ուղարկելու ամսաթիվը): Կողմերի կոնտակտային տվյալներն են՝

#### **Հիմնադրամի համար՝**

Փոստային Հասցե՝  
Էլ. Փոստ՝  
Կոնտակտային անձ՝

#### **Ընկերության համար՝**

Փոստային Հասցե՝  
Էլ. Փոստ՝  
Կոնտակտային անձ՝

#### **Իրավահաջորդներ և ցեսիոներներ**

Սույն Պայմանագիրը պարտավորեցնում է և գործում է ի շահ Կողմերի իրավահաջորդների և ցեսիոներների:

Ընկերությունը սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքները և պարտավորությունները կարող է զիջել կամ այլ կերպով փոխանցել միայն ԿԱՀ-ով սահմանված իրավունքների և պարտավորությունների հետ միաժամանակ՝ ԿԱՀ 20.2 հոդվածին համապատասխան:

Եթե ԿԱՀ լուծման հետևանքով Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացրել է Ընկերությունից ԿԱՀ համապատասխան կառուցված կայանը ձեռք բերելու իր իրավունքը կամ պարտականությունը, Հողամասը ենթակա է տնօրինման՝ ԿԱՀ-ով սահմանված կարգով:

Հիմնադրամը սույն Պայմանագրով սահմանված իր բոլոր իրավունքները և

or communication made within the scope of this Agreement is deemed as duly performed, when it is send to the address of the party determined (date of notification is the day of receipt mentioned in the postal notice on receipt) or via e-mail to the electronic address of the Party mentioned bellow (date of delivery is the day when the mail has been sent to the e-mail of the Party). The contact details of the Parties are:

#### **For the Fund:**

Postal Address:  
Electronic Address:  
Contact person:

#### **For the Company:**

Postal Address:  
Electronic Address:  
Contact person:

#### **Successors and assignees**

This Agreement binds and is effective to the benefit of the Parties' successors and assignees.

The Company may assign or transfer in any other way its rights and obligations determined hereby only simultaneously with its rights and obligations under the GSA, in accordance with article 20.2 GSA

If as a result of the termination of the GSA the Government of the Republic of Armenia has executed its obligation or right to purchase the plant, constructed pursuant to the GSA, the Land is disposed of in the manner, prescribed for in the GSA.

The Fund may assign or transfer in any other way its rights and obligations determined

պարավորությունները, կամ դրանց մի մասը կարող է զիջել կամ այլ կերպով փոխանցել՝ այդ մասին առնվազն 1 օր առաջ նախապես ծանուցելով Ընկերությանը:

### **Այլ պայմաններ**

Սույն Պայմանագրի շրջանակներում կամ առնչությամբ տրվող կամ ներկայացվող ծանուցումները և այլ փաստաթղթերը կատարվում են անգլերեն լեզվով:

Պայմանագիրը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքով և մեկնաբանվում է դրա համաձայն, բացառելով կոլիզիոն նորմերի կիրառումը:

Սույն Պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է Հիմնադրամը:

Սույն Պայմանագիրը կնքված է [հայերեն և անգլերեն լեզուներով: Հայերեն և անգլերեն լեզուներով տեքստերի միջև տարբերության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն լեզվով տեքստին]:

[Signature page follows]

hereby, or their part by at least one day prior notifying the Company.

### **Other Provisions**

All notices and other documents given or provided under this Agreement shall be in English.

The Agreement is governed by and construed in accordance with the material law of the Republic of Armenia, without regard to conflict of law regulations.

The expenses related to notarisation and state registration of this Agreement shall be born by the Fund.

This Agreement is concluded in Armenian and English. In the case of inconsistency between Armenian and English texts the priority shall be given to the Armenian text.]

[Ստորագրման էջը՝ հաջորդիվ]

**Մասնակիցների վավերապայմանները և ստորագրությունները.  
The requisites and signatures of the Parties**

**«Հայաստանի վերականգնվող Armenia Renewable Resources and  
էներգետիկայի և Energy Efficiency Fund  
էներգախնայողության հիմնադրամ»**

Գտնվելու վայրը՝ [\_\_\_\_]  
Էլ. հասցե՝ [\_\_\_\_]  
ՀՎՀՀ 02580459  
Տնօրեն՝

Address: [\_\_\_\_]  
Email: [\_\_\_\_]  
TIN: 02580459  
Director:

---

**Ընկերություն**

Գտնվելու վայրը՝ [\_\_\_\_]  
Էլ. հասցե՝ [\_\_\_\_]  
ՀՎՀՀ  
Տնօրեն՝

**The Company**

Address: [\_\_\_\_]  
Email: [\_\_\_\_]  
TIN: 02580459  
Director:



## ՀԱՎԵԼՎԱԾ 12. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ, ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ

### 1. Հողի ձեռքբերման կամավոր ու հարկադիր տարբերակներ

Ստորև ներկայացված են ծրագրերի իրականացման նպատակով հողերի ձեռքբերման հիմնական տարբերակները՝

- **Հողի կամավոր նվիրատվություն (ՀԿՆ).** Համայնքները կամ անհատները կարող են համաձայնվել ծրագրերին կամավոր տրամադրել հողերը՝ ի շահ\_համայնքի: ՀԿՆ-ի գործնական սկզբունքներն են՝ “տեղեկցված համաձայնությունն ու ընտրության հնարավորությունը”:
- **Հողի օտարում՝ համաձայնեցված պայմաններով.** Անհատները կարող են համաձայնվել ծրագրին փոխանցել հողի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքը որոշ պայմաններով, ինչպիսին են՝ փոխհատուցումը նմանատիպ հողով կամ դրամային փոխհատուցումը:
- **Հողի օտարում.** Անհատ սեփականատերերից, օրենքով սահմանված կարգով, Կառավարության կողմից հողի օտարում հանրային նպատակներով՝ վճարելով կառավարությամբ սահմանված փոխհատուցում, որը համապատասխանում է սեփականատիրոջ կորուստներին, որը նա կրում է իր հողը տվյալ մարմին զիջելով: Բանկի հաճախորդները ավելի շատ ապավինում են ՀԿՆ-ի վրա և կամավոր գնորդ/վաճառող մոտեցումների վրա (խուսափելով ՄՖԻ-ի անվտանգության քաղաքականությունից)<sup>12</sup>:

### 2. ՀՀ օրենսդրական դաշտը հողի օտարման, նվիրատվության ու տիրապետման վերաբերյալ

Հողային օրենսգիրքը հանդիսանում է ՀՀ-ում հողային հարցերը կարգավորող հիմնական շրջանակը: Այն սահմանում է պետական հողերի՝ տարբեր նշանակության օգտագործման ու տնօրինման ուղղությունները, ինչպիսին են՝ գյուղատնտեսական, քաղաքաշինական, արդյունաբերական և հանքարդյունաբերական, էներգատադրության, հաղորդալարերի, տրանսպորտային և այլ նշանակության: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, անմիջականորեն կամ իրավասու մարմինների միջոցով, իրականացնում է ՀՀ հողային ռեսուրսների պետական կառավարումը:

Հողային օրենսգիրքը կանոնակարգում է հողակտորների բաշխումը, փոխանցումը և վաճառքը, սահմանում է հողի նկատմամբ սեփականության և այլ իրավունքները: Այն նկարագրում է տարբեր պետական մարմինների (համայնք, պետություն) պատասխանատվությունները հողի կառավարման հարցում; հողի սեփականատիրոջ, օգտագործողի, վարձակալողի կամ տիրապետողի իրավունքներն ու պարտավորությունները; հողի կատեգորիայի տեսակները, հողի

<sup>12</sup> “Կամավոր տարաբնակեցման” մասին ՀԲ ուղեցույցը սահմանափակված է ՕՔ 4.12-ով և Բանկի՝ Հարկադիր պարաբնակեցման մասին աղբյուրով (2004թ.):

օտարումը և փոխհատուցումը, հողային վեճերի լուծումը և հողի պաշտպանությունը: Հողային օրենսգիրքը նաև սահմանում է հողակտորի նկատմամբ իրավունքների դադարեցման, պետական կամ հանրային կարիքների համար հողի օտարման պայմանները, հողային օրենսդրության խախտման հետևանքով հողակտորի բռնագրավման պայմանները:

**Հողի օտարում.** Եթե ծրագրերի իրականացման արդյունքում ազդեցության են ենթարկվում մասնավոր կամ համայնքային սեփականություններ, ապա հողի օտարումը պահանջվում է “Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին” ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք): Օրենքով սահմանվում են հիմնական սկզբունքները, որոնք են. ա) Հանրային շահը պետք է գերազանցի օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ կորուստը, բ) սեփականությունը չօտարելը հանրային շահի արդյունավետ կիրառում չի ապահովվի, գ) սեփականության օտարումը չպետք է անհիմն վնաս հասցնի սեփականատիրոջը դ) ՀՀ կառավարության որոշմամբ հանրային շահը պետք է հայտարարվի որպես բացառիկ՝ գերակա ե) դատական հայցեր կարող են ներկայացվել բացառիկ հանրային շահի վերաբերյալ: Այն նաև սահմանում է սեփականության օտարման, փոխհատուցման հաշվարկման ու տրամադրման, սեփականատերերի մասնակցության ու սեփականության օտարման մասին տեղեկատվության հրապարակման գործընթացերը<sup>13</sup>:

Հաղորդողիների տեղադրման համար, ինչը ազդեցության է ենթարկում մասնավոր ու համայնքային սեփականությունները, հողի օտարման 2 պատճառ կարող է լինել՝ Հաղորդողու տեղադրման արդյունքում կարող է պահանջվել հողի նպատակային նշանակության փոփոխություն՝ համաձայն Հողային Օրենսգրքի Հոսված 8-ի կետ 1-ով. “Հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները”: Սա նշանակում է, որ հողի նպատակային նշանակության փոփոխությունից հետո սեփականատերը չի կարողանա հողակտորն օգտագործել նույն ձևով, ինչպես նախկինում էր: Մինչույն ժամանակ, ՀՀ Հողային Օրենսգրքի հոդված 216-ի կետ 2-ով սահմանված է, որ “Եթե սերվիտուտով ծանրաբեռնվելու արդյունքում հողամասը չի կարող օգտագործվել իր նպատակային նշանակությանը համապատասխան, սեփականատերն իրավունք ունի դատական կարգով պահանջել դադարեցնել սերվիտուտը”:

- (i) Համաձայն ՀՀ Հողային Օրենսգրքի հոդված 60 կետ 11-ի՝ “Արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց որպես սեփականություն ունենալ հողակտորներ, որոնք նախատեսված են ավտոմոբիլային, երկաթուղային ճանապարհների, էլեկտրահաղորդիչ գծերի, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, գազատարների անցկացման համար”:

**Սերվիտուտը.** Հողամասի սերվիտուտը մեկ կամ մի քանի սեփականատերերի հողամասերից սահմանափակ օգտվելու իրավունքն է: Հողամասի սեփականատերն իրավունք ունի պահանջել, որ իրեն սերվիտուտ տրամադրվի հողամասը պահպանելու և սպասարկելու համար:

<sup>13</sup> Օրենքը սահմանում է ծանուցման համար պահանջվող, ինչպես նաև սեփականատերերից արձագանք ստանալու համար պահանջվող ժամկետները՝ հողի օտարման գործընթացի բոլոր փուլերում:

Տեղափոխված հաղորդուղիների սպասարկման դեպքում սերվիտուտը պետք է սահմանվի պայմանագրով (կամավոր) կամ դատարանի միջոցով (հարկադիր)՝ համաձայն Հողային օրենսգրքի հոդված 50-ի կետ 3-ի: Հողի օտարում չի պահանջվում՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք սահմանված են օրենսդրությամբ և հիմնականում վերաբերվում են տեղադրված հաղորդուղու հարևանությամբ գտնվող հողի/կառույցի օգտագործման սահմանափակմանը (օրինակ՝ բնակելի տան մոտ անցնող բարձրավորտ լարերի դեպքում)<sup>14</sup>:

Հողային օրենսգրքի հոդված 50-ի կետ 4-ի համաձայն ժամանակավոր կամ մշտական սերվիտուտ կարելի է վերցնել ցանկացած հողի համար: Մինչույն ժամանակ, նույն հոդվածի կետ 5-ում նշվում է, որ սերվիտուտը պետք է հնարավորին չափ նվազ ծանրաբեռնի հողամասը (սերվիտուտի ազդեցությունը պետք է նվազագույն լինի): Սերվիտուտով ծանրաբեռնված հողամասի սեփականատերն իրավունք ունի վճար պահանջել այն անձանցից, ի շահ որոնց սահմանվել է սերվիտուտը, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ: Սերվիտուտները ենթակա են պետական գրանցման (կետ 6): Սերվիտուտը պահպանվում է հողամասը մեկ անձից մյուսին անցնելիս (կետ 7):

Հոդված 50-ում նաև սահմանված է , որ սերվիտուտով ծանրաբեռնված հողամասի սեփականատիրոջ պահանջով սերվիտուտը կարող է դադարեցվել դրա հիմքերի վերացման կամ հողամասի նպատակային նշանակության փոփոխման կապակցությամբ:

Եթե սերվիտուտով ծանրաբեռնվելու արդյունքում հողամասը չի կարող օգտագործվել իր նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան, սեփականատերն իրավունք ունի դատական կարգով պահանջել դադարեցնել սերվիտուտը կամ փոփոխել նպատակային նշանակությունը:

**Հողամասերի նվիրատվությունը:** Հողերի նվիրատվության պայմանները սահմանված են Հողային օրենսգրքի երկու հոդվածներով՝

- Հողային օրենսգրքի Հոդված 89 (“Հողամասերի նվիրատվությունը ”) սահմանում է հետևյալը.
  1. Հողամասի սեփականատերն իրավունք ունի հողամասը կամ դրա բաժանելի մասը նվիրատվության պայմանագրով փոխանցել քաղաքացուն, իրավաբանական անձին, ինչպես նաև պետությանը կամ համայնքներին:
  2. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք չունեն հրաժարվել նվիրատվության կարգով պետությանը կամ համայնքներին անցնող հողամասերից, բացառությամբ մարդկանց կյանքի ու առողջության համար վտանգ սպառնացող կամ հողամասերի շուկայական գինը գերազանցող պարտքերով ծանրաբեռնված հողամասերի նվիրատվության դեպքերի:
  3. Հողամասերի նվիրատվության ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են Քաղաքացիական օրենսգրքով:

<sup>14</sup> Հայաստանում հաղորդալարերի կառուցման ու շահագործման համար գործում են մի քանի իրավական նորմեր ու կանոնակարգեր, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության որոշում N 961-Ն առ 12.07.2007թ., որով սահմանվում են հաղորդալարերի նախագծման, կառուցման ու շահագործման ստանդարտներն ու ուղեցույցերը, ինչպես նաև հաղորդալարերի համար մշտական ու ժամանակավոր օտարումների վերաբերյալ պահանջները, իսկ ՀՀ Կառավարության որոշում N 363-Ն առ 02.04.2009թ. ներկայացնում է էլեկտրալարերի համար անվտանգության:

➤ ՀՀ հողային օրենսգրքի 65-րդ հոդվածը “Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու կարգ” սահմանում է հետևյալը.

1. Համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետության սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց տրամադրում է համայնքի ղեկավարը՝ ավագանու համաձայնությամբ, Հողային օրենսգրքով սահմանված կարգով:  
Համայնքի ղեկավարը հողամասը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու վերաբերյալ բնակչությանը տեղեկացնում է զանգվածային լրատվության կամ այլ միջոցներով:
2. Քաղաքացիների դիմումներն ընդունվում են սույն հոդվածով՝ տեղեկացման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում:  
Դիմումների ընդունման ժամկետը լրանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, յուրաքանչյուր դիմում քննարկվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Դիմումների ամփոփման արդյունքներով և ըստ նպատակային ու գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական գործունեության կամ բնակելի տան կառուցման և սպասարկման համար ընդունված մեկ հողաբաժնի հիման վրա ճշտվում են պահանջվող հողատարածությունները:
4. Պետության սեփականությանը պատկանող հողամասերի անհատույց տրամադրումը կատարվում է վիճակահանությամբ:  
Վիճակահանության արդյունքների հիման վրա կազմվում է արձանագրություն, որում նշվում են տեղեկություններ՝ վիճակահանությամբ քաղաքացիների կողմից ձեռք բերված հողատարածությունների չափի ու արժեքի, հողատեսքի, նպատակային և գործառնական նշանակության, գույքային իրավունքների ու սահմանափակումների, ներառյալ՝ սերվիտուտների առկայության վերաբերյալ:
5. Արձանագրության հիման վրա կողմերի միջև նվիրատվության պայմանագրի կանոններով կնքվում է հողամասի օտարման պայմանագիր:

➤ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի Հոդված 605-ը սահմանում է Նվիրաբերության ընդհանուր պայմանները, որոնք հետոյալն են:

- 1) Նվիրաբերություն է ճանաչվում գույքի կամ իրավունքի նվիրատվությունը հանրօգուտ նպատակներով:
  - a. Նվիրաբերություններ կարող են արվել քաղաքացիներին, բուժական, դաստիարակչական հիմնարկներին, սոցիալական պաշտպանության ու նույնանման այլ հաստատություններին, բարեգործական, գիտական և ուսումնական հաստատություններին, հիմնադրամներին, թանգարաններին ու մշակույթի այլ հաստատություններին, հասարակական և կրոնական կազմակերպություններին, ինչպես նաև պետությանն ու համայնքներին:
- 2) Նվիրաբերությունն ընդունելու համար որևէ մեկի թույլտվություն կամ համաձայնություն չի պահանջվում:
- 3) Նվիրաբերողի կողմից գույքի նվիրաբերությունը քաղաքացուն պետք է պայմանավորված լինի, իսկ իրավաբանական անձանց՝ կարող է պայմանավորված լինել այն որոշակի նշանակությամբ օգտագործելով: Այդպիսի պայմանի բացակայության դեպքում քաղաքացուն կատարված նվիրաբերությունը համարվում է սովորական նվիրատվություն:

Մնացած դեպքերում նվիրաբերված գույքը նվիրառուն պետք է օգտագործի դրա նշանակությանը համապատասխան:

- 4) Նվիրաբերությունը որոշակի նպատակով օգտագործելու համար ընդունված իրավաբանական անձը, պետք է վարի նվիրաբերված գույքի օգտագործման բոլոր գործառնությունների առանձնացված հաշվարկ:
- 5) Եթե իրադրության փոփոխման հետևանքով նվիրաբերված գույքի օգտագործումը նվիրաբերողի սահմանված նպատակին համապատասխան դառնում է անհնար, այն կարող է օգտագործվել այլ նպատակով միայն նվիրաբերողի համաձայնությամբ, իսկ նվիրաբերող քաղաքացու մահվան կամ իրավաբանական անձի լուծարման դեպքում՝ դատարանի վճռով:
- 6) Եթե նվիրաբերություն ստացողը նվիրաբերած գույքն օգտագործել է նվիրաբերողի սահմանված նշանակությանն անհամապատասխան, կամ այդ նշանակությունը փոփոխվել է սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված կանոնների խախտմամբ, ապա նվիրաբերողը, նրա ժառանգները կամ այլ իրավահաջորդն իրավունք ունեն պահանջել նվիրաբերության վերացում:
- 7) Նվիրաբերության նկատմամբ չի կիրառվում սույն օրենսգրքի 604 հոդվածը<sup>15</sup>:

### **3. OP 4.03 - Հողի օտարմանն ու տարաբնակեցմանն առնչվող գործառնական պահանջների ստանդարտներ**

OP 4.03-ը սահմանում է այն հանգամանքները, որոնց ներքո ՀԲ-ի գործառնական պահանջների ստանդարտները կարող են կիրառվել, ներկայացնում է Ծրագիրն իրականացնող Մասնավոր անձի ու Բանկի դերն ու պատասխանատվությունը՝ ապահովելով ծրագրի բնապահպանական ու սոցիալական կայունության ասպեկտները: ԳՊ ստանդարտ 5-ը սահմանում է այն ստանդարտները, որոնք առնչվում են հողի օտարմանն ու տարաբնակեցմանը՝ համաձայն Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականության («ՀԲ Անվտանգության քաղաքականություն»):

ԳՊ ստանդարտ 5-ը ճանաչում է, որ ծրագրին առնչվող հողի օտարումն ու հողի օգտագործման սահմանափակումները կարող են բացասական ազդեցություններ ունենալ համայնքների ու հողօգտագործողների վրա: Հարկադիր տարաբնակեցումը վերաբերվում է ինչպես ֆիզիկական տեղափոխման (ապաստանի տեղափոխում կամ կորուստ), այնպես էլ՝ տնտեսական տեղափոխման (գույքի կորուստ կամ մուտքի հնարավորության կորուստ դեպի գույք կամ եկամուտների աղբյուր կամ ապրուստի այլ միջոցներ), որոնք ծրագրին առնչվող հողի օտարման և/կամ հողօգտագործման սահմանափակման արդյունք են:

Տարաբնակեցումը հարկադիր է համարվում, երբ ազդեցության ենթակա անձիք կամ համայնքները իրավունք չունեն հրաժարվել հողի օտարումից կամ հողի օգտագործման սահմանափակումներից, որը հանգեցնում է ֆիզիկական ու տնտեսական տեղափոխման: Դա

<sup>15</sup> Հոդված 604 սահմանում է «Իրավահաջորդությունը նվիրատվություն խոստանալու» դեպքում պայմանները մասնավորապես՝ 1. Նվիրատուի, ում նվիրատվության պայմանագրով խոստացվել է նվեր, իրավունքները չեն փոխանցվում նրա ժառանգներին (իրավահաջորդներին), եթե այլ բան նախատեսված չէ նվիրատվության պայմանագրով 2. Նվիրատվություն խոստացած նվիրատուի պարտականությունները փոխանցվում են նրա ժառանգներին (իրավահաջորդներին), եթե այլ բան նախատեսված չէ նվիրատվության պայմանագրով:



տեղի է ունենում հետևյալ դեպքերում՝ (i) օրինական էքսպրոպրիացիա կամ հողի օգտագործման ժամանակավոր կամ մշտական սահմանափակումներ, և (ii) բանակցային կարգավորումներ, որտեղ գնորդը կարող է դիմել էքսպրոպրիացիայի կամ հողի օգտագործման վրա իրավական սահմանափակումներ պարտադրել, եթե վաճառողի հետ բանակցությունները ձախողվում են:

Էքսպրոպրիացիայից խուսափելու ու տեղափոխումը պարտադրելու կառավարության իրավասության կիրառման անհրաժեշտությունից խուսափելու համար՝ պատվիրատուներին խրախուսում են օգտվել բանակցային կարգավորումներից, որոնք համապատասխանում են սույն Ստանդարտի պահանջներին, նույնիսկ եթե նրանք իրավական միջոցներ ունեն օտարել հողը առանց վաճառողի համաձայնության:

Սույն Ստանդարտը կիրառվում է ֆիզիկական և/կամ տնտեսական տեղափոխման համար, որը բխում է հետևյալ գործարքներից.

- ✓ Հողի նկատմամբ իրավունքների կամ հողի օգտագործման իրավունքների ձեռքբերում էքսպրոպրիացիայի միջոցով կամ այլ պարտադիր ընթացակարգերի միջոցով՝ տվյալ երկրի իրավական համակարգին համապատասխան;
- ✓ Հողի նկատմամբ իրավունքների կամ հողի օգտագործման իրավունքների ձեռքբերում սեփականատերերի կամ հողի նկատմամբ իրավունքներ ունեցողների հետ բանակցային կարգավորումների միջոցով, եթե կարգավորման հասնելու ձախողումը հանգեցրել է էքսպրոպրիացիայի կամ այլ հարկադիր ընթացակարգերի;<sup>16</sup>
- ✓ Ծրագրի այնպիսի պայմաններ, երբ հողի օգտագործման կամ բնական ռեսուրսներին մուտք գործելու հնարավորությունների հարկադիր սահմանափակումները հանգեցնում են համայնքին կամ դրա մի խմբին կորցնել ռեսուրսի օգտագործման հնարավորությունը՝ անկախ նրանից, թե նրանք ունեն ավանդական կամ ճանաչման ենթակա օգտագործման իրավունքներ;<sup>17</sup>
- ✓ Ծրագրի այնպիսի դեպքեր, երբ պահանջվում է վտարել առանց պաշտոնական, ավանդական կամ ճանաչման ենթակա օգտագործման իրավունք ունեցող հողը զբաղեցնող անձանց<sup>18</sup>; կամ
- ✓ Հողի օգտագործման կամ այլ ռեսուրսների օգտագործման սահմանափակումներ, ներառյալ՝ համայնքային սեփականությունը և բնական ռեսուրսները, ինչպիսին են՝ ծովային ու ջրային ռեսուրսները, փայտանյութի համար և ոչ այդ նպատակով օգտագործվող անտառային ռեսուրսները, քաղցրահամ ջուրը, դեղաբույսերը, որսատեղիները, արոտավայրերն ու խոտածածկ տարածքները<sup>19</sup>.

<sup>16</sup> Սա նաև վերաբերվում է ավանդական ճանաչված կամ ճանաչման ենթակա իրավունքներին՝ համաձայն տվյալ երկրի օրենքների: Բանակցությունները կարող են իրականացվել կառավարության կողմից կամ ընկերության կողմից (որոշ դեպքերում որպես կառավարության գործակալ):

<sup>17</sup> Նման դեպքերում ազդեցության ենթակա անձիք հաճախ չեն ունենում պաշտոնական սեփականության իրավունք: Դա ներառում է քաղցրահամ ջրերը կամ ծովային միջավայրը: Սույն Ստանդարտը կարող է նաև կիրառվել, երբ ծրագրին առնչվող կենսաբազմազանության տարածքները կամ օրենքով սահմանված բուֆերային գոտիները հաստատված, սակայն ձեռքբերված չեն պատվիրատուի կողմից:

<sup>18</sup> Չնայած որոշ մարդիկ կարող են չունենալ իրավունքներ այն հողերի նկատմամբ, որոնք նանք զբաղեցնում են, սույն Ստանդարտը պահանջում է, որ ոչ հողային գույքը պահվի, տեղափոխվի կամ փոխհատուցվի: Տեղափոխությունը կատարվում է սեփականության անվտանգությամբ, իսկ կորցված ապրուստի միջոցները վերականգնվում են:

<sup>19</sup> Սույն Ստանդարտում նշված բնական ռեսուրսների գույքը համապատասխանում է էկոհամակարգերի ապահովման ծառայություններին, ինչպես նկարագրված է Ստանդարտ 6-ում:

Այն դեպքերում, երբ հողի, գույքի կամ դեպի գույք տանող մուտքերի վրա ծրագրի ազդեցությունները զգալի բասացական են դառնում ծրագրի ցանկացած փուլում, պատվիրատուն պետք է հաշվի առնի Ֆունկցիոնալ պահանջների ստանդարտի դրույթների կիրառումը, նույնիսկ, երբ հողի օտարում կամ տարաբնակեցում ներառված չէ:

Գործառնական պահանջների ստանդարտ 5-ը չի կիրառվում հողի կամավոր գործարքներից բխող տարաբնակեցման դեպքում (այսինքն՝ շուկայական գործարքներ, որտեղ վաճառողը պարտադրված չէ վաճառել, իսկ գնորդը չի կարող դիմել էքսպրոպրիացիայի կամ այլ հարկադիր ընթացակարգերի, որոնք նախատեսված են տվյալ երկրի իրավական համակարգով, եթե բանակցությունները ձախողվում են): Այն նաև չի կիրառվում ապրուստի վրա ազդեցությունների ժամանակ, երբ ծրագիրը չի փոխում հողի օգտագործման նշանակությունը ազդեցության ենթակա խմբերի կամ համայքների համար:

**Կամավոր տարաբնակեցում:** Կամավոր տարաբնակեցումը վերաբերվում է ցանկացած վերաբնակեցման, որը չի վերագրվում հանրային գերակա շահին կամ հողի օտարման այլ տեսակներին և չի ապահովվում պետության կողմից: Հողի կամավոր նվիրատվության հիմնական սկզբունքներն են՝ տեղեկացված համաձայնությունը և ընտրության հնարավորությունը: “Տեղեկացված համաձայնություն” նշանակում է, որ մարդիկ լիարժեք տեղեկությունների են տիրապետում ծրագրի և դրա հետևանքների մասին ու ազատորեն համաձայնություն են հայտնում մասնակցել ծրագրին կամավոր նվիրատվության միջոցով: “Ընտրության հնարավորություն” նշանակում է, որ մարդիկ հնարավորություն ունեն համաձայնվել կամ չհամաձայնվել հողի օտարման հետ առանց բացասական հետևանքների, այսինքն՝ առանց պաշտոնապես կամ ոչ պաշտոնապես պետության կողմից պարտադրանքի: Ընտրության հնարավորությունը հնարավոր է միայն, եթե ծրագրի տեղակայությունը ֆիքսված չէ: Օրինակ՝ դպրոցի, անասնաբուժական կենտրոնի և այլ ոչ գծային ենթակառուցվածքային օբյեկտների շինարարության առաջարկվող վայրը կարող է փոփոխվել, եթե հողի սեփականատերը առարկություն ունենա: Ի տարբերություն, օրինակ՝ ՀԷԿ-ի պատնեշի նախագծի համար ջրամբարը չի կարող տեղափոխվել: Առաջին օրինակի ծրագիրը կարող է հնարավորություն տալ կամավոր տարաբնակեցման համար, իսկ երկրորդը՝ ոչ:

**Հողի կամավոր նվիրատվություն (ՀԿՆ) և կամավոր գնորդ/վաճառող:** ՀԿՆ կիրառության դեպքերը՝

- համայնքի զարգացման ծրագրերին անհրաժեշտ է հողի տեսքով ներդրումներ համայնքից (դա շեշտում է համագործակցությունը և ծրագրի սեփականությունը)
- ընդլայնելու համար ծրագրի սահմանափակ ֆինանսավորումը, որտեղ հողի օտարումը ծրագրի ընդհանուր արժեքի մասն է կազմում (օրինակ՝ պետական ճանապարհաշինական ծրագրեր):

Համայնքի կողմից ՀԿՆ-ի դեպքում հիմնական մարտահրավերներն ու ռիսկերը հետևյալն են՝

- Համայնքի կողմից ՀԿՆ-ի և դրա հետևանքների ընկալումը (առավելություններն ու թերությունները), հողի վերաբերյալ վատ փաստագրված որոշումները կարող են պառակտել համայնքը

- Ինչպես համոզվել, որ “կամավորը” “իսկապես” կամավոր որոշում է նվիրաբերելու կամ չնվիրաբերելու մասին, որը կայացվել է առանց պարտադրանքի
- Ում կողմից է նվիրաբերվում (կլան, ընտանիք, անհատ) և ինչի համար (սահմանափակումներով օգտագործում, փոխանցում, վերադարձնելու իրավունք)
- Ինչպես ապահովել, որ ծրագիրը բազմաթիվ տարբերակներ/տեղանքներ է ապահովում ծրագրի ենթակառուցվածքի համար
- Իրավական հարցեր՝ հարկեր, արդյոք կարիք կա հողի նկատմամբ իրավունքը փոխանցելու
- Հիմնական որոշումների վերաբերյալ փաստաթղթերի բացակայությունը կարող է բողոքների հանգեցնել:

Այն դեպքում, երբ հողի նվիրատվության գործընթաց է կիրառվում որևէ ծրագրում, կառուցապատողի թիմը պետք է համալիր ստուգում իրականացնի խուսափելու համար ազդեցության ենթակա անձանց վրա և ՀԲ-ի վարկանիշի վրա հնարավոր բացասական ազդեցության ռիսկերից:

Ծրագրի թիմը պետք է (i) ստուգի, որ նվիրատվությունը փաստացի կամավոր է և պարտադրանքի արդյունք չէ՝ օգտագործելով բանավոր ու գրավոր արձանագրություններ և երրորդ անկախ կողմից հաստատումներ, ինչպիսին են նշանակված հասարակական կազմակերպությունները կամ իրավական մարմինները; և (ii) ապահովի, որ կամավոր նվիրատվությունները զգալիորեն չեն ազդում ազդեցության ենթակա անձանց ապրուստի ստանդարտների վրա ու նրանց համար անմիջական օգուտներ ունեն:

Սովորաբար, հողի կամավոր նվիրատվությունը շահառու տնային տնտեսությունների կամ համայնքների կողմից ընդունելի է, երբ՝

- 1) Ազդեցությունները սահմանային են (հիմնվելով կորստի տոկոսի ու մնացող գույքի նվազագույն չափի վրա);
- 2) Ազդեցությունները չեն հանգեցնում տնային տնտեսությունների տեղափոխման կամ վերջիններիս եկամուտի ու ապրուստի միջոցների կորստի;
- 3) Կամավոր նվիրատվություն կատարող տնային տնտեսությունները հանդիսանում են ծրագրի անմիջական շահառուներ;
- 4) Նվիրաբերված հողը սեփականության կամ այլ ծանրաբեռնվածության մասով որևէ վեճի առարկա չէ;
- 5) Ազդեցության ենթակա համայնքների հետ հանրային լուսմները ազատ ու թափանցիկ են;
- 6) Հողի հետ կապված գործարքները զուգորդվում են սեփականության իրավունքների փոխանցմամբ; և
- 7) Կազմվում են լուսմների արձանագրություններ, փաստագրվում են բողոքներն ու դրանց լուծման համար միջոցները: